ԷՋՄԻԱԾՆ

1977

Գ

Ամ140

ԼՈՒ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Մ...ԻԳ

1977



ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԲԵՅՐՈՒԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻ՛ՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պէյրութ

Գոհութիւն կու տանք Բարձրեալն Աստուծոյ որ վերջապէս վերահաստատուեցաւ խաղաղութիւնը ձեր երկրին՝ գեղատեսիլ Լիբանանի մէջ, ի շահ և ի միսիթարութիւն բոլոր համայնքներուն և համայն լիբանանեան աստուածասէր ժողովուրդին: Մենք երջանիկ ենք որ նաև Լիբանանի հայ համայնքը, մեր ժողովուրդի հաւատացեալ զաւակները, այժմ լծուած են իրենց վերքերը բուժելու և իրենց կրօնական, կրթական ու մշակութային կեանքը վերակազմակերպելու շինարար գործին:

Այդ շինարար ոգիով գրուած ձեր 29 յունուար 1977 թուակիր նամակը Մենք յուզումով կարդացինք: Մեր հաւատքի յաւիտենական կեդրոն սուրբ Էջմիածնէն կը յղենք Մեր օրհնութիւնը ձեր կրթանուէր գործին, մաղթելով ձեզի բոլորիդ անսպառ բարի եռանդ ու անհատնում լաւատեսութիւն, որպէսզի կարճ ժամանակի մէջ, կարողանաք ամբողջապէս վերանորոգել և բարեկարգ վիճակի մէջ դնել ձեր կրթական հաստատութիւնը՝ Սահակեան-Մկրտիչեան գոլէճը, շարունակելու և հետզհետէ աւելի ծաւալելու համար անոր կրթական-դաստիարակչական առաքելութիւնը, հայ նոր սերունդներուն աւելի ու աւելի ջամբելով՝ լոյսը գիտութեան, շնորհները բարոյական նկարագրի և ջերմութիւնը հայրենասիրութեան;

Վստահ ենք թէ ձեր կրթական շինարար առաջադրութեանց լիակատար յաջողութեան համար լայնօրէն իրենց բարոյական և նիւթական օժանդակութիւնը պիտի բերեն մեր ժողովուրդի բարեսիրտ բոլոր զաւակները, ուր որ ալ գտնուին հայ սփիւռքի տարածքի վրայ: Մենք սրտագին կոչ կ'ուղղենք անոնց բոլորին և կ'օրհնենք բոլոր այն նուիրատուները, որոնք օգնութեան ձեռք պիտի երկարեն ձեզի, համազգային նշանակութիւն ունեցող Սահակեան-Մկրտիչեան գոլէճը վերաշինելու և զայն սմուր հիմքերու վրայ դնելու համար: Վստահ ենք նաև թէ Եւրոպայի և Հիւսիսային ու Հարաւային Ամերիկաներու թեմական եկեղեցական կեդրոնները ևս պիտի ընդառաջեն ձեր դիմումներուն և նեցուկ պիտի հանդիսանան ձեր հանգանակիչ մարմիններուն:

Արդ, իբրև քաջալերանք ձեզ, խղճի պարտք կը նկատենք ի նպաստ Սահակեան-Մկրտիչեան գոլէճի վերաշինութեան հանգանակութեան մասնակցիլ տասը հազար դոլլարի նուիրատուութեամբ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի միջոցներէն:

Կը մաղթենք որ լիակատար յաջողութեամբ պսակուի ձեր հանգանակութեան ազգանուէր գործը ի մխիթարութիւն Մեզ և մանաւանդ պէյրութահայ մեր հարազատ ժողովուրդին:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ը մարտի
1977 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԶ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 875



ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ*

Ձերդ Սրբություն,

Մոտենում են մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնակատարությունները, և մենք արդեն սկսել ենք ավելի գիտակցորեն նախապատրաստվել այդ տոնակատարություններին Հիսնյակի արարողություններով: Ուզում եմ օգտվել այս առիթից և դիմել Ձերդ Սրբությանը՝ արտահայտելու համար իմ ամենաբարի մաղթանքները, որպեսզի սուրբ Ծննդյան տոնի այս նախապատրաստությունը առավել արժանի դարձնի մեզ ընդունելու Քրիստոսի մարդեղության շնորհները:

Միաժամանակ ցանկանում եմ ինչպես իմ, այնպես էլ Նորին Գերազանցություն Ռոման Տորելլա եպիսկոպոսի և հոգեշնորհ հայր Զոն Լոնգի անունից Ձերդ Սրբությանն արտահայտել մեր երախտագիտական խոր զգացումները այն չափազանց տպավորիչ օրերի համար, որ մենք՝ սուրբ Աթոռի պատվիրակության անդամներս, ապրեցինք ձեզ մոտ, Մայր Աթոռ ս. Էջմիածնում, սրբալույս մեռոնի օրհնության և Ձեր գահակալության քսանհորդ տարեդարձին նվիրված հանդիսությունների առիթով:

Մենք խորապես զգացվեցինք եղբայրական այն սրտագին ուշադրությունից, որ Ձերդ Սրբությունը բարեհաճեց ցուցաբերել մեր նկատմամբ ամեն առիթով: Մենք մեծապես ազդվեցինք նաև ձեր հավատացյալների կողմից

---

* 1976 թվականի սեպտեմբերի վերջերին Մայր Աթոռում տեղի ունեցավ սրբալույս մեռոնի օրհնություն և նշվեց Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակը:

Սույն հանդիսություններին ներկա եղան քույր եկեղեցիների հոգևոր պետեր և բարձրաստիճան ներկայացուցիչներ, որոնք Մայր Աթոռից մեկնեցին հոգելից արարողություններից ստացած անմոռանալի տպավորություններով:

Այս առթիվ Մայր Աթոռում ստացվեցին հանդիսություններին մասնակցած բարձրաստիճան հյուրերից բազում նամակներ, որոնցում արտահայտվում էին և՛ ջերմ գոհունակության, և՛ սրտաբուխ շնորհակալության անկեղծ զգացումներ դեպի Հայոց Հայրապետը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Ստորև սիրով հրատարակում ենք ստացված բազում գրություններից մեկը՝ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի ներկայացուցիչ Նորին Գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդսի նամակը՝ ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

ցուցաբերված համակրանքի ջերմ արտահայտություններից, երբ նրանք իմացան, որ եկել ենք ներկա գտնվելու հանդիսություններին: Մենք գնահատեցինք բարեպաշտությունն ու ջերմեռանդ հավատը հայ հավատացյալների, որոնք հոգեպես առաջնորդվում են իրենց Հովվապետի՝ Ձերդ Սրբության հավատավոր կյանքի վկայությամբ:

Ուզում եմ վստահեցնել Ձերդ Սրբությանը, որ մենք, մեր կողմից, ցանկանում ենք օգտվել հնարավոր ամեն առիթից՝ շարունակելու և խորացնելու համար մեր եղբայրական հարաբերությունները Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ Հայաստանում և սփյուռքում:

Խնդրում եմ, Ձերդ Սրբություն, ընդունել մեր երախտագիտական զգացումների հետ մեր հարգալից սիրո հավատիքը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍ
Արքեպիսկոպոս Ուտրեխտի, նախագահ
Քրիստոնյաների միության քարտուղարության

Վատիկան,
10 դեկտեմբերի 1976 թ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 4-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մարտի 6-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակի).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը: Անառակի առակի մասին քարոզ է խոսում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Մարտի 8-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Սովետական Միությունում Արգենտինայի հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Լեոպոլդո Բրավոն այցելում է Մայր տաճար և ապա տեսակցություն ունենում Վեհափառ Հայրապետի հետ:

Հայոց Հայրապետի և մեծահարգ հյուրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

Մարտի 13-ին, կիրակի.—Դ կիրակի քառասնորդական պահոց (Տնտեսի).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ «...տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ 2) բնաբանով քարոզում է Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը:

*
* *

Մարտի 20-ին, կիրակի.—Ե կիրակի քառասնորդական պահոց (Դատաւորի).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ դատավորի առակի մասին քարոզում է տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն՝ վերջերս Բուխարեստում երկրաշարժի տարերային աղետի ժամանակ ոումին և հայ զոհվածների հիշատակին:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, խոսք առնելով, Իր, Մայր Աթոռ ս. Էջմիածնի, հայ եկեղեցու հավատացյալ ժողովրդի եղբայրական ցավակցությունն է հայտնում տեղի ունեցած դժբախտության առիթով ռումին օրթոդոքս եկեղեցու Ն. Ս. Ժուստինիան Պատրիարքին և, ի դեմս Ռումինիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսի՝ ռումինահայ համայնքին:

Արարողության ավարտին Հայոց Հայրապետը մասնավոր Հոգվոց է արտասանում բոլոր զոհվածների հիշատակին, հիշում նաև այս առթիվ զոհված ռումինահայոց թեմական խորհրդի երկրորդ ատենապետ Պերճ Կարապետյանի անունը:

* * *

Մարտի 22-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 17-ին, Վեհարանում Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Նիստին հրավիրվել էր նաև Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գառնիկ Քեհյայանը, որը հանգամանորեն և ձեռնհասությամբ ներկայացնում է 1976 թվականի Մայր Աթոռի բյուջեի կատարողականը և 1977 թվականի բյուջեի նախահաշիվը: Գերագույն հոգևոր խորհուրդն այս առթիվ իր գոհունակությունն է արձանագրում Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ Գ. Քեհյայանի խղճամիտ և աթոռանվեր աշխատանքի համար:

* * *

Մարտի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում միաբանության հերթական հավաքույթի ընթացքում «Աստվածաբանության և էկումենիկ շարժման հարցերը» թեմայով զրույց է անցկացնում Մայր Աթոռի միաբան, աստվածաբանության դոկտոր Վրեժ սրկ. Ներսիսյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Զրույցի ավարտին Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունն է հայտնում Վրեժ սարկավագին՝ նրա բովանդակալից և շահեկան զրույցի համար:

* * *

Մարտի 25-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում «Հայկական ճարտարապետության կոթողներ Ուկրաինայի հողի վրա» թեմայով բանախոսություն է կարդում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գրիգոր Գրիգորյանը:

Դասախոսության ավարտին բանախոսը պատասխանում է ներկաներին հետաքրքրող հարցերին:

* * *

Մարտի 26-ին, շաբաթ.—Տօն է սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի վիրապն.

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

* * *

Մարտի 27-ին, կիրակի.—Զ կիրակի քառասնորդական պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը՝ «Քահանայք քո զգեցին զարդարութիւն և սուրբք քո ցնծալով ցնծասցեն» (Սաղմոս) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ ռումինահայ ծանոթ հասարակական գործիչ, թեմական խորհրդի նախկին ատենապետ Վահան Դանիելյանի հիշատակին:

* * *

Մարտի 28-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում Վրեժ սրկ. Ներսիսյանը դասախոսություն է կարդում «Մալաբար եկեղեցու պատմությունը» թեմայով, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը:





ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ (375—444)

Ժամանակաշրջանը, կյանքն ու գործունեությունը

Սուրբ Կյուրեղ Հայրապետ Ալեքսանդրացին Ե դարի առաջին քառասնամյակի ընդհանուր եկեղեցու պատմության ամենատիրական և ինքնատիպ դեմքերից մեկն է:

Առաջին երկու Տիեզերական ժողովներում՝ 325 թվականին Նիկիայի և 381-ին՝ Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի Աթոռի հաղթությունը հերետիկոսության դեմ մղված պայքարում հանուն ուղղափառ հավատքի, շատ ավելի բարձրացրեց այդ Աթոռի անվիճելի հեղինակությունն ու հմայքն ընդհանուր եկեղեցու կյանքում:

Ալեքսանդրիան Հռոմեական Կայսրության մեջ գրավում էր առաջնակարգ տեղ՝ որպես երկրորդ մայրաքաղաք, մշակույթի և գիտության կենտրոն: «Բացի ազգայինից, շատ մեծ էր նաև այստեղ քրիստոնեական անցյալը: Ալեքսանդրիան էր, որ արիոսական վեճերի ժամանակ երկար կռիվներից հետո, կարողացավ իր վարդապետությունը ընդունելի դարձնել ամբողջ քրիստոնեական եկեղեցու մեջ: Բնական էր, որ այս քաղաքի եպիսկոպոսները այնուհետև պիտի առաջնակարգ դիրք գրավեին քրիստոնեության մեջ»[1]:

Ալեքսանդրիայի Աթոռի փառավոր անցյալի, նրա գերագահության և առաջնության այս անտեղիտալի ոգով ու անկոտրում հավատքով տոգորված ասպարեզ էր իջնում նաև Ե դարի առաջին տասնամյակում Կյուրեղ Ալեքսանդրացին: Նրա օրով, 412—444 թվականներին, «Ալեքսանդրիայի եպիսկոպոսությունն իր ուժի գագաթնակետին էր հասել»[2]:

Ալեքսանդրիայի Աթոռի հայրապետները համարվում էին և՛ Արևելքում, և՛ Արևմուտքում «պաշտոնական ուղղափառ հաւատոյ»:

Կյուրեղ Ալեքսանդրացու անունն ու գործունեությունը նույնպես անխզելիորեն կապվում են ընդհանուր եկեղեցու պատմության մեջ «քրիստոնսաբանական երկրորդ մեծ հակաճառության հետ, որը առաջնորդեց Եփեսոսի ժողովի գումարմանը (431) և Նեստորի դատապարտմանը»[3]:

Կյուրեղ Ալեքսանդրացին ծնվել է Ալեքսանդրիայում 375 թվականին, երբ 373-ին մահացել էր մեծն Աթանաս Հայրապետը: Եղիա մարգարեի մաշտոցակը արժանավորապես ընկնում էր Եղիսեի ուսերին[4]:

---

[1] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան,** Ընդհանուր եկեղեցու պատմություն, ս. Էջմիածին, 1908, էջ 295:

[2] **Մանուկ Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 250:

[3] Johannes Quasten, Patrology, III vol., 1966, էջ 116:

[4] Դ Թագ. Բ 13:

Կյուրեղի ծնողները եղել են հույն, քաղաքացիությամբ «եգիպտացի, ազնվական ու բարեպաշտ»[5]:

Կյուրեղի մանկության մասին մեզ «ոչինչ հայտնի չէ, որոշ ժամանակ ապրել է անապատի հայրերի մոտ»[6]: Բայց այս հանգամանքը չի հաստատվում պատմական փաստերով և նրա գրվածքների վկայությամբ[7]:

Կյուրեղ Ալեքսանդրացին դասական-եկեղեցագիտական կրթությունն ստանում է իր ծննդավայր քաղաքի նշանավոր աստվածաբանական դպրոցում, քրիստոնեական ուսման և գիտության այդ մեծ կենտրոնում, անմիջական ղեկավարության և հովանավորության ներքո իր հորեղբոր՝ Թեոփիլոսի, որը 385—412 թվականներին Ալեքսանդրիայի Աթոռի պատրիարքն էր:

Թեոփիլոսն իր Աթոռի հեղինակությունն ու ազդեցությունն է՛լ ավելի բարձրացնելու և տարածելու բուռն ցանկությամբ և իշխանասիրական ոգով էր տոգորված: Նա ձգտում էր իրեն ենթարկել Արևելքի ողջ եկեղեցին և մեծ հեղինակության հասնել նաև Ալեքսանդրիայում, պետական իշխանության մեջ:

Կյուրեղ Ալեքսանդրացու երիտասարդական շրջանի կյանքի և գործունեության մասին ևս կենսագրական տվյալներ պակասում են:

Կյուրեղը եկեղեցու պատմության մեջ հիշվում է միայն 403 թվականին, երբ հավանաբար արդեն հոգևորական ձեռնադրված իր պատրիարք հորեղբոր ձեռքով մասնակցում է նրա հետ Քաղկեդոնի մոտ Կաղնյաց ժողովին (Կ. Պոլիս), որտեղ Կ. Պոլսի մեծանուն Հովհան Ոսկեբերան Հայրապետն աթոռազրկվում է և աքսորվում, արքունիքում տիրող անբարոյականության և ամբարշտության դեմ արտասանած իր հանդարձակ և խարազանող քարոզների համար:

Կաղնյաց այդ ժողովում Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը հարմար առիթը հասած է նկատում հեղինակազրկելու Կ. Պոլսի Աթոռն ու նրա պատրիարքը և իր 29 եգիպտացի եպիսկոպոսներով դատապարտում է Հովհան Ոսկեբերանին: Երիտասարդ Կյուրեղն այդ հարցում հանդես է գալիս իր հորեղբոր կողքին՝ ընդդեմ Ոսկեբերանի: Կյուրեղը ժողովում մասնակից է լինում «յուր հորեղբոր անպատվաբեր գործունեությանը և ոտնձգություններին Ոսկեբերանի դեմ»[8]:

Թեոփիլոս պատրիարքի և նրա ձեռնասուն երիտասարդ Կյուրեղի անբարյացակամ ու թշնամական վերաբերմունքը Հովհան Ոսկեբերանի դեմ բացատրվում է Ալեքսանդրիայի և Անտիոքի Աթոռների և նրանց աստվածաբանական դպրոցների միջև գոյություն ունեցող աստվածաբանական-մեկնողական տարակարծություններով, տարբերություններով և մանավանդ հին հակամարտություններով, պատրիարքական երկու Աթոռների գերագահության հարցում:

Հովհան Ոսկեբերանը որպես Անտիոքի դպրոցի տաղանդավոր աշակերտ դատապարտվում է և աքսորվում Բիթանիա, ուր և մահանում է 407 թվականին:

Երկու Աթոռների այս պայքարում Կյուրեղ Ալեքսանդրացին «վաղ ըմբռնեց ժամանակի ուժերը և յուր սեփական նպատակը: Նա որոշել էր այն ամբողջ իշխանությունը, որ հորեղբայրն էր թողել իրեն, Ալեքսանդրիայի գորությունը մեծացնելով գործադրել հօգուտ և ի փառս յուր Աթոռի»[9]: Երիտասարդ Կյուրեղը իր պատրիարք հորեղբորից «ժառանգել էր որոշ նախապաշարումներ ս. Հովհան Ոսկեբերանի հանդեպ, որը շարունակվում է երկար ժամանակ, մինչև 417 թվականը»[10]:

Կյուրեղ Ալեքսանդրացին աստվածաբանական հարցերում անզիջող պայքարի և հակառակության մեջ էր Անտիոքի աստվածաբանական դպրոցի ավելի շեշտված բերականական-պատմական մեթոդների դեմ, իսկ եկեղեցական քաղաքականության մեջ՝ Կ. Պոլսի Աթոռի օրավուր աճող հեղինակության դեմ, մանավանդ Հովհան Ոսկեբերանի պատրիարքության ժամանակաշրջանում:

Կյուրեղ Ալեքսանդրացին 412 թվականին, երբ մահանում է իր պատրիարք հորեղբայրը, երեք օր հետո հաջորդում է նրան պատրիարքական Աթոռի վրա՝ «հակառակ պետական իշխանության կամքին»[11]:

Այդ իսկ պատճառով Կյուրեղ Ալեքսանդրացու պատրիարքությունն սկսվում է նրա և Ալեքսանդրիայում կայսրության ներկայացուցիչ-կառավարիչ Որեստեսի միջև ազգային հարցում եկեղեցու և պետության պայքարով:

Կյուրեղ Ալեքսանդրացին ոչ միայն եկեղեցու ազդեցիկ վարդապետ էր և աստվածաբան, այլև ազգային հարցերում հշմարիտ «եգիպտացի, և մեծ առաջնորդ»[12]:

---

[5] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Սուրբ և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 46:

[6] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան**, նույնը, էջ 313:

[7] Quasten, նույնը, էջ 117:

[8] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան**, նույնը, էջ 313:

[9] Նույնը:

[10] Quasten, նույնը, էջ 117:

[11] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան**, նույնը, էջ 314:

[12] Encyclopaedia Britannika, vol. 6. 1965, էջ 958.

Կյուրեղ Ալեքսանդրացին իր գահակալության առաջին իսկ տարիներին Ալեքսանդրիայում փակում է հերետիկոս Նովատյանների եկեղեցիները, բռնագրավում է հրեաների ինչքերը՝ հօգուտ եկեղեցու, և փակում նրանց աղոթատեղիները և հալածում նրանց: Անհաշտ պայքար է մղում հեթանոսական մշակույթի մնացուկների դեմ, հեթանոսությունն Ալեքսանդրիայում արմատախիլ անելու վճռականությամբ:

Մովսես Խորենացին, որ Կյուրեղ Ալեքսանդրացու պատրիարքության ժամանակ սովորում էր Ալեքսանդրիայում իր հայ ընկերների հետ, վկայում է, որ այնտեղ «իրոք մեծ փոփոխություններ են կատարվում: Կործանվել և կործանվում էր եգիպտաբյուզանդական հեթանոսական մշակույթը, որի տեղը բռնել էր քրիստոնեական եկեղեցական աստվածաբանությունը»[13]: Այս մասին Մովսես Խորենացին գրում է. «Սորա առաջի այժմ ոչ անցեալ ճնտի Պղոտեմիոս հինգակատար գագաթամբն, զանընպառ աշխարհ պատելով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբ, ոչ վիշապազին դիցազնակաց գերեզմանք, այլ սրբոցն վայելչանան վկայարանք... ոչ ի քսան և հինգ Տաբի՝ տօնի աղճատանք... այլ յայտնութեան Տեառն կատարի տօն. զյաղթող նահատակս գովել և օտարաց առնել ընդունելութիւն և յաղքատս տուրս: Ոչ զոհել չար դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի արիւնն մատուցանել պատարագ»[14]:

Կյուրեղի գահակալության առաջին տարիներին նրա կողմնակիցները օրը ցերեկով Ալեքսանդրիայում, պատրիարքարանի Մայր տաճարի սանդուղների վրա, 415 թվականի մարտին սպանում են կառավարիչ Որեստեսի քարեկամ, հայտնի նոր պղատոնական կին փիլիսոփա Հիբարիային: Կյուրեղը մեղադրվում է այս սպանության մեջ: Սակայն նա կարողանում է իրեն արդարացնել և՛ կառավարչի, և՛ Թեոդոս Բ կայսեր առաջ[15]:

Կյուրեղ Ալեքսանդրացու եկեղեցական, հակաճառական-մատենագրական բեղուն և փոթորկոտ գործունեությունը հիմնականում սկսվում է, սակայն, 428 թվականին, երբ Նեստորը Կ. Պոլսի պատրիարք է լինում: «Նեստորը գերմանիկցի էր, վանական, Անտիոքի դպրոցի աշակերտներեն: 428-ին ան հաջորդած էր Սիսինիոսին Կ. Պոլսի պատրիարքական Աթոռին վրա»[16]:

Նեստորը հիանալի հռետոր էր և անվանի քարոզիչ. «Իր հռչակված ճարտարախոսության համար Թեոդոս Բ կայսրը պատրիարք կարգեց զինքը Կ. Պոլսի Աթոռին... Իր պատրիարքական պաշտոնավարության միջոցին էր որ Նեստորը հիմնադիրը եղավ աղանդի մը որ իր անունով կոչվեցավ նեստորականություն»[17]:

Կ. Պոլսի Աթոռի վրա Նեստորի գահակալությամբ սրվում է պայքարը Կյուրեղի և Նեստորի, Ալեքսանդրիայի և Կ. Պոլսի Աթոռների միջև. «Նեստորականության դեմ ուղղափառության պաշտպանության պայքարում Կյուրեղը հանդիսանում է եկեղեցական և դավանական պատմության ամենատիրական դեմքը»[18]:

Ինչո՞ւմ էր կայանում Նեստորի քրիստոսաբանական մոլորությունը: «Նեստորը Անտիոքի աստվածաբանական դպրոցի աշակերտ լինելու իր հանգամանքով, իր քարոզներում շեշտում էր թե Քրիստոսի մեջ կան երկու անձնավորություններ. աստվածային անձնավորությունը՝ Լոգոսը, որը բնակվում է մարդկային մի անձնավորության մեջ, Հիսուս մարդը, և թե ս. կույսը չի կարող կոչվել theotokos, «Աստուծո մայր» կամ «աստվածամայր»[19]:

«Աստված չի կարող մայր ունենալ,—ասում էր Նեստորը,—քանի որ ստեղծվածը կամ արարածը չի կրնար Արարիչ ծնիլ»[20]:

«Քրիստոսի աստվածության և Բանին մարդեղության խորհուրդը պաշտպանելով, և Քրիստոսի ճշմարիտ Աստված և ճշմարիտ մարդ ըլլալը բացատրելով, սկսավ ըսել թե Աստված ի մարդն բնակյալ է միայն և անմասն է ամեն մարդկային բնության գործերե, որով երկու տարբեր անձեր կենթադրեր ի Քրիստոս և մարդեղությունը և միավորությունը ջնջած կըլլար, փրկագործ տնօրենություններն ալ միայնո մարդո վերագրելով պարզապես մարդադավան սկզբունք մը քարոզած կըլլար»[21]:

«Երկու առաջին Տիեզերական ժողովները Երրորդության անձերուն համագոյակցության խնդրովը միայն զբաղեր էին, առանց

---

[13] **Մ. Մ. Մկրյան**, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976, էջ 173:

[14] **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 345:

[15] Quasten, նույնը, էջ 117:

[16] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, Ա հատոր, Բեյրութ, 1959, էջ 310:

[17] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Հերձվածողներ, ձեռագիր, Երուսաղեմ, էջ 8:

[18] Quasten, նույնը, էջ 117:

[19] Նույնը, էջ 117: Տես նաև John Meyendorff. Christology in the fifth Century. 1969, էջ 3—16:

[20] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Հերձվածողներ, էջ 12:

[21] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, նույնը, էջ 310:

նկատի առնելու թե ինչ էր այն աղերսը, որով Բանը միավորեր էր մարդկային Բնության հետ, Հիսուս Քրիստոսի պատմական անձին վրա: Խնդիր էր հիմակ գիտնալ թե, երկու Բնությունները ի՞նչպես միացած էին միակ անձ մը կազմելու համար: Ալեքսանդրիայի դպրոցը, հավատարիմ Աթանասի ավանդություններուն, կընդուներ թե երկու Բնություններն այնքան խորունկ կերպով թափանցած էին իրարու մեջ, որ աստվածային Բնության առանձնահատկությունները մարդեղության պահուն՝ իրապես միավորված էին մարդկային Բնության հետ, այնպես որ Տիրոջ մարդկային Բնությունը ամբողջովին բովանդակելով իր մեջ աստվածության լրումը, նույնքան պաշտելի կըլլար, հետևաբար պետք էր ըսել. Ծնունդ, Խաչելություն Քրիստոսի Աստուծո և Մարիամը կոչել՝ «Մայր Աստուծո»: Երկու Բնություններուն միությունը կատարված է «ըստ Բնութեան», այսինքն գոյակցությունների միավորումովը և տարբերությանց ջնջումով, որով և Քրիստոսի մեջ կընդունվի միակ Բնություն մը, Աստված-մարդուն Բնությունը»[22]:

Այս պատճառով Կյուրեղ Ալեքսանդրացին իր գրվածքներում գործածում էր միշտ «Մի է Բնութիւն Բանին մարմնացելոյ» կամ «Յերկուց Բնութեանց՝ մի» բանաձևը: Ըստ Կյուրեղի «Երրորդութիւն նոյն բնութեամբ՝ երեք դէմք, մի զօրութիւն, մի աստուածութիւն. յամենայն ժամ Հայր, յամենայն ժամ Որդի, յամենայն ժամ ս. Հոգի: Մի աստուածութիւն է յերիս դէմսն: Որպէս կամի, որպէս խորհի, ամենուրեք է, մի հրամանք, մի կամք, մի թագաւորութիւն՝ դէմսն Հօր, Որդւոյ և Հոգւոյ»[23]:

«Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական դրությունը նույնն է իր գլխավոր գծերով, ինչ որ Աթանասինն ու Կապադովկիացիներինը: Քրիստոսի մեջ աստվածային և մարդկային Բնությունները միացած են անայլայլելի և անխառն կերպով և կազմում են մի անձնավորություն, որի մեջ առաջնորդող դերը կատարողն ու անձնավորությունը կազմողը աստվածային Բնությունն է: Երկու Բնությունների միությունը այնպես է որ իսկապես միայն մարդեղությունից առաջ կարելի է այդ Բնությունների բաժան լինելը նկատել: Նրանից (Մարդեղությունից) հետո մարդկայինը մի Բնություն է կազմում աստվածային Բնության հետ»[24]:

Այսպիսով աստվածաբանական մտքի կենսունակությունն ու նրա ստեղծագործական թափը, նրա լարվածությունն ու եռանդուն գործունեությունը շարունակվում են նաև Կյուրեղ Ալեքսանդրացու օրով, Ե դարի 30—40 թվականներին: Դրանով սկիզբ է առնում քրիստոսաբանական-աստվածաբանական մտքի զարգացման նոր փուլը:

Այս անգամ էլ Կյուրեղ Ալեքսանդրացու գլխավորությամբ դավանաբանական շարժումների և հակաճառությունների մեջ դարձյալ «առաջնորդող նշանակությունը պատկանում էր Ալեքսանդրիայի աստվածաբանությանը»[25]: Կյուրեղ Ալեքսանդրացին այդ պայքարում «լրացնում է Ալեքսանդրիայի դպրոցին պատկանող եկեղեցու մեծ հայրերի շարքը»[26]:

Կյուրեղի եկեղեցական-պատմական նշանակությունը ընդհանուր եկեղեցու տարեգրության մեջ կայանում է Նեստորի դեմ նրա պայքարի մեջ: Նրա մատենագրական-հակաճառական վաստակը աչքի է ընկնում «տեսության խորությամբ, գիտնականությամբ և սիստեմատիկությամբ»[27]:

Նեստորի դեմ մղած իր պայքարում «Կյուրեղ Ալեքսանդրացին հանդիսանում է իբրև աչքի ընկնող աստվածաբան և ձգտում է տեսականորեն հաստատել քրիստոսաբանության մեջ Ալեքսանդրիայի դպրոցի տեսակետի ճշմարտությունը, փրկության գաղափարի այն պատմական-իրական վարդապետության հիման վրա, որ ս. Աթանասի կյանքի իդեալն էր և որ կենտրոնացնում էր հետաքրքրությունը Քրիստոսի մեջ աստվածայինի և մարդկայինի կատարյալ միության վրա, որով և ապահովվում էր մեր փրկության նշանակությունը»[28]:

428 թվականից հետո պայքարը սրվում է Կյուրեղի և Նեստորի միջև և տարածվում է ամբողջ Արևելքում և Արևմուտքում:

Եկեղեցին կրկին անգամ թատր է հանդիսանում մեծամեծ պառակտումների:

429-ին Կյուրեղ Ալեքսանդրացին իր «Զատկական նամակներում» դատապար-

---

[22] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 12—13:

[23] Կնիք Հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց (Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ 51:

[24] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյան**, նույնը, էջ 314: Տես նաև **Մ. Աբեղյան**, նույնը, էջ 631—632:

[25] **Պրոֆ. Ն. Սագարդա**, Հույն-Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը. յուր ծաղկման շրջանում..., 1910, էջ 30—31:

[26] Նույնը, էջ 43:

[27] Quasten, նույնը, էջ 117:

[28] **Պրոֆ. Ն. Սագարդա**, նույնը, էջ 44:

տում է Նեստորի մոլորությունը և կոչ է անում նրան զղջալ, ընդունել իր սխալը[29]:

Նեստորը մերժում է Կյուրեղի առաջարկը և նրան ուղղած իր նամակում նրա՛ն մեղադրում է մոլորության մեջ: Այսպիսով հրապարակայնորեն սկսվում է պայքար, բորբոքվում են Ալեքսանդրիայի և Անտիոքի Աթոռների և Արևելքի երկու նշանավոր աստվածաբանական դպրոցների ուղղությունների միջև գոյություն ունեցող թաքուն հակամարտությունները:

Զուտ աստվածաբանական այս պայքարին ու հակամարտությանը միջամտում է նաև քաղաքական իշխանությունը, արքունիքը՝ սրելով ու բորբոքելով այն: Արքունիքը իր հովանավորության տակ է վերցնում Նեստորին որպես Կ. Պոլսի պատրիարքի: Իսկ Կյուրեղը դիմում է Հռոմի եպիսկոպոսին: Արևմուտքն էլ մասնակցում է պայքարին:

430-ի օգոստոսին Հռոմի Կելեստին եպիսկոպոսի գլխավորությամբ ժողով է գումարվում, ուր դատապարտվում է Նեստորը և ընդունվում է Կյուրեղի «Հաւատոյ ուղղափառութիւնը»:

Հռոմի ժողովը Կյուրեղ Ալեքսանդրացուն է վստահում ժողովի այս որոշումը Նեստորին հայտնելու պարտականությունը:

Հռոմի ժողովից հետո Կյուրեղ Ալեքսանդրացին իր հերթին իր Աթոռի եպիսկոպոսների հետ ժողով է գումարում Ալեքսանդրիայում և 12 նզովքներ-անաթեմա-է ավելացնում Պապի նամակին և այն. ուղարկելով Նեստորին, 10 օր ժամանակ է տալիս զղջալու և իր մոլորությունից հրաժարվելու, հակառակ դեպքում սպառնալով նրան աթոռազրկումով և ժողովական դատապարտումով:

Նեստորն էլ իր հերթին ժողով է գումարում Կ. Պոլսում և Կյուրեղի 12 նզովքների դեմ գրում է իր 12 նզովքները և դատապարտում Կյուրեղի քրիստոսաբանական բանաձևումը: Նեստորին այդ հարցում պաշտպանում էր Անտիոքի Աթոռի եպիսկոպոսական դասը: Այսպես, պայքարի հակադիր ծայրերում, միմյանց դեմ էին կանգնել Ալեքսանդրիայի և Անտիոքի դպրոցները:

Եկեղեցին Արևելքում գտնվում էր ստույգ պառակտման վտանգի առաջ: «Մեկ հնարավորություն էր մնում խուսափելու եկեղեցական այդ պառակտումից: Տիեզերական մի նոր ժողովի գումարումն էր դա»[30]:

Թեոդոս Բ կայսրը նախաձեռնում է Տիեզերական մի ժողովի գումարմանը, ժողով, որ տեղի է ունենում 431-ին, Հոգեգալստյան տոնի օրը, Եփեսոսում, 200 եպիսկոպոսների մասնակցությամբ:

Ժողովի առաջին նիստը գումարվում է հունիսի 22-ին: Դեռ չէին ժամանել Նեստորի կողմնակից Անտիոքի Աթոռի եպիսկոպոսները: Կյուրեղ Ալեքսանդրացին այնուամենայնիվ բացում է ժողովը իր նախագահությամբ: Նեստորը հրավիրվում է ժողովին իր դավանությունը ներկայացնելու: Սակայն նա մերժում է մասնակցել՝ ապօրեն գտնելով ժողովը: Ժողովը, սակայն, շարունակում է իր աշխատանքները, և Նեստորը ի բացակայության պաշտոնապես դատապարտվում է իր մոլորության համար և աթոռազրկվում:

Եփեսոսի ժողովը ընդունում և հաստատում է իր կանոնական որոշումներով նաև Նեստորի դեմ Կյուրեղ Ալեքսանդրացու 12 նզովքները: Ժողովը հանդիսավորապես ճանաչում և հռչակում է ս. կույսի համար «Մայր Աստուծոյ» կամ Աստվածամայր՝ theotokos ավանդական տիտղոսը:

Եփեսոսի ժողովից 4 օր հետո այնտեղ են հասնում Անտիոքի Աթոռի 35 եպիսկոպոսները՝ Հովհաննես Անտիոքացի եպիսկոպոսի գլխավորությամբ: Նրանք էլ գումարում են իրենց մասնակի ժողովը և դատապարտում Կյուրեղ Ալեքսանդրացուն:

Կայսրը եկեղեցու պառակտումը վերացնելու, ներքին խաղաղությունը վերահաստատելու և երկու հակառակորդ կողմերը հաշտեցնելու համար որոշում է աքսորել և՛ Նեստորին, և՛ Կյուրեղին: Մի փոքր ժամանակ անց, սակայն, Կյուրեղ Ալեքսանդրացին Եփեսոսի իր բանտից վերադառնում է իր Աթոռը «իբր մի նոր Աթանաս»[31]: Նեստորը առանձնանում է Անտիոքի մոտ մի մենաստանում և ապա աքսորվում է հեռավոր մի օազիս, ուր մահանում է թշվառ վիճակում 440 թվականին:

433-ին բարեբախտաբար Ալեքսանդրիայի և Անտիոքի Աթոռների միջև հաստատվում է խաղաղությունն ու համերաշխությունը: Հովհաննես Անտիոքացի եպիսկոպոսը ընդունում է Եփեսոսի ժողովի որոշումները և արդար ու կանոնական է համարում Նեստորի մոլորության դատապարտությունը: 432-ին պատրիարք է ընտրվում Կ. Պոլսի Աթոռի վրա Պրոկղը, որի հետ Կյուրեղ Ալեքսանդրացին պահում է բարեկամական հարաբերություններ:

Կյուրեղ Ալեքսանդրացու կյանքի վերջին տարիները անցնում են համեմատաբար խաղաղ պայմաններում: Նա մահանում է 444 թվականին, 42 տարի արդյունավետ

[29] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 396:

[30] Quasten, նույնը, էջ 118:

[31] Quasten, նույնը, էջ 118:

գործունեություն ծավալելուց հետո՝ ի պայծառություն եկեղեցու, որպես եկեղեցու մեծ վարդապետ, կորովի պաշտպան ուղղափառ հավատքի, իր «անմահանուն արդեամբք և մեծապայծառ վաստակովք»[32]:

Մեր եկեղեցին չի մասնակցել Եփեսոսի ժողովին՝ մեր երկրում տիրող եկեղեցական ու քաղաքական աննպաստ պայմանների բերումով: Նոր էր կործանվել Արշակունյան իշխանությունը 428 թվականին, ս. Սահակն աքսորվել էր Տիզբոն, ս. Մեսրոպի ևեղեցական, մշակութային, կրթական գործունեությունը արգելվել էր. ս. Էջմիածնում սեր ու տնօրինություն էին անում պարսիկների կողմից դրածո ասորի վարձկան հոգևորականները:

432 թվականին Կ. Պոլսում սովորող մեր թարգմանիչ վարդապետները՝ Եզնիկը, Ղևոնդ երեցը, Կորյունը, Հովհան Եկեղեցացին, Հովսեփ Վայոցձորեցին և մյուսները հայրենիք վերադարձին իրենց հետ բերում են Եփեսոսի ժողովի որոշումները և Աստվածաշնչի հունարեն Յոթանասնից թարգմանությունից մի ընտիր օրինակ և հանձնում՝ ս. Սահակին և ս. Մեսրոպին «յԱշտիշատ Տարոնոյ և ներկայեցին զկանոնս ժողովոյն Եփեսոսի», ինչպես վկայում է Խորենացին[33]:

Խորենացին նշում է նաև, որ թարգմանիչ վարդապետները Եփեսոսի ժողովից հետո ս. Սահակին և ս. Մեսրոպին բերում են Կյուրեղ Ալեքսանդրացու մի նամակը, նեստորականների դատապարտության մասին[34], «բայց որ Թղթոց գրքի մեջ չի պահվել այն, ինչպես պահված են Պրոկղի և Ակակ Մելիտինացու թղթերը, կասկածելի է դառնում Խորենացու վկայությունը»[35]:

Այնուամենայնիվ ս. Սահակը և ս. Մեսրոպը ժողով են գումարում Աշտիշատում, «ընդհանուր եկեղեցվո համամիտ վճիռը հարգելով և իրենց ալ ունեցած ուղղափառ վարդապետության վրա հիմնվելով, մերժելով մերժեցին նեստորականությունը և **հրամայեցին զկամաւոր հերձուածողսն ի բաց հալածել իրեանց աշխարհէն**»[36]:

Հայ եկեղեցին աստվածաբանական և քրիստոնաբանական հարցերում Եփեսոսի ժողովի որոշումներից այն կողմ չի անցնում:

Ըստ մեր եկեղեցու ըմբռնումին, առաջին երեք Տիեզերական ժողովներում սահմանվում և բանաձևվում են քրիստոնեական ուղղափառ վարդապետության հիմնական ու կենտրոնական խնդիրները, ս. Երրորդության, Քրիստոսի Մարդեղության և Փրկագործության հարցերի մասին:

Հայ եկեղեցու համար Եփեսոսի ժողովով ավարտվում է «Տիեզերական ժողովներում սերագրված հեղինակության գլխավոր հիմը, զանազան եկեղեցիներու համամիտ սերձավորության վրա հաստատված է և թե այդ միաձայնությամբ կբացատրվի ընդհանուր եկեղեցվո զանազան մասերում ու հասակարծիք ըլլալը: Իսկ այս համամտությունը գործնականապես հայտնվեցավ առաջին երեք ժողովներում մեջ, որոնք 325—431 տարիներու միջոցին գումարվեցան: ... Այս կացությունը հիմնապես փոխվեցավ Եփեսոսի ժողովեն ետքը...: Առանց հիմնական պատճառի չէ որ հայոց եկեղեցին իրավունք ունեցավ Եփեսոսի ժողովը (431) իբր վերջին Տիեզերական նկատել և առջև չանցնել, որովհետև անով վերջացավ բոլոր գլխավոր եկեղեցիներու համակարծիք համամտության շրջանը: Ասով կարդարանա այն համոզումն ալ թե ընդհանուր եկեղեցվո համաձայնությունը, որ ճշմարիտ ավանդության հիմնակետը կկազմե, Եփեսոսի ժողովեն ետքը խանգարվեցավ և ժողովները իրենց հեղինակությունը կորսնցուցին... երեք ժողովներու վճիռներով լրացած էին հիմնական հավատալիքները, որ քրիստոնեական կրոնքին իսկությունը, զուտ էական խորհուրդները կկազմեն, որ է **Երրորդություն, Մարդեղություն** և **Փրկագործություն**»[37]:

«Այն հանգամանքը մանավանդ, որ ս. Սահակի և ս. Մեսրոպի կենդանությամբ տեղի ունեցած երրորդ Տիեզերական՝ Եփեսոսի ժողովը, Մարդեղության խորհուրդի ուղղափառ դավանական հիմունքները որոշելով, իրապես վերջնական ձևակերպություն տված եղավ քրիստոնեական դավանանքին, և որ մեր եկեղեցու այդ հեղինակավոր հայրերը հոժարությամբ ընդունեցին իրենց եղած առաջարկությունը՝ ժողովի որոշումներին հպատակելու և մերժելու հակառակ տեսությունները, պաշտոնապես առիթ դարձավ մեր եկեղեցու համար յուրացնելու այն ամենը, ինչ որ մինչ այդ հառաջ էր տարվել դավանական տեսակետից ընդհանուր եկեղեցվո մեջ, դեպի Եփեսոսի ժողովի սկզբունքներն առաջնորդող ուղղությամբ: ...Հայ եկեղեցին հիրավի Կյուրեղ

[32] Մատենադարան հայկական թարգմանության նախնյաց, էջ 504:

[33] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, նույնը, էջ 311:

[34] **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, դպ. Գ, գլ. ԿԱ, Վենետիկ, 1827, էջ 522:

[35] Կնիք հաւատոյ, (Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան), էջ LXII:

[36] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, նույնը, էջ 311: Նաև Սոփերք հայկականք, ԺԱ, էջ 29:

[37] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1912, էջ 101—104:

Ալեքսանդրացու քրիստոնաբանությունը **լիակատար կերպով ընդունելուց հետո...** միշտ հավատարիմ մնալով **կյուրեղյան քրիստոնաբանությանը,** նորա ոգով պարզաբանելով յուր առաջ դրված նոր խնդիրները և մերժելով այն ամենը, ինչ որ շեղվում էր նրանից ու նորմուծություն բերում»[38]:

Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական վաստակը

Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին ընդհանրական եկեղեցու բազմաժանր մատենագրության մեջ ամենամեծ ու բեղմնավոր հեղինակներից մեկն է հանդիսանում, Ե դարի եկեղեցական հայրերի շարքում:

Նրա մատենագրական հարուստ վաստակը առաջնակարգ և առանձնահատուկ տեղ է գրավում քրիստոնեական մշակույթի պատմության մեջ:

Կյուրեղ Ալեքսանդրացու հունարեն լեզվով գրած մատենագրական վաստակը «ընդգրկում է Migne-ի հայրաբանական հրատարակության 10 հատորները[39] չհաշված կորած կամ մեզ չհասած նրա գործերը»[40]:

Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական վաստակը նույնպես սերտորեն առընչվում է իր ժամանակաշրջանի եկեղեցական հարցերի ու հերետիկոսության դեմ նրա մղած պայքարի պատմության հետ՝ ի պաշտպանություն առաքելական ուղղափառ հավատքի և Նիկիական Հանգանակի:

Ս. Կյուրեղ Հայրապետը երջանիկ եկեղեցական հայրերից մեկն է, որի գործերը նրա կենդանությանը թարգմանվում են մի շարք լեզուների, այդ թվում՝ լատիներենի, հայերենի, ասորերենի, եթովպերենի և արաբերենի:

Այս թարգմանությունների շնորհիվ էլ պահվել են Կյուրեղ Ալեքսանդրացու որոշ գրվածքները, որոնց հունարեն սկզբնաղբյուրները կորել են:

Ալեքսանդրացու «ոճն ու լեզուն հեռու են նրապուրիչ լինելուց: Դրանք տարածուն են և հաճախ էլ հոգնեցնող և զարդարուն»: Բայց բովանդակության տեսակետից ունեն «մտածման խորություն, գաղափարների հարստություն, փաստերի ճշգրտություն և հստակություն, հատկանիշներ, որոնք ապացուցում են հեղինակի հայեցողական և դիալեկտիկական տաղանդ և նրա գրվածքները դարձնում են քրիստոնեական վարդապետության և դավանության առաջնակարգ աղբյուրներ»[41]:

Կյուրեղ Ալեքսանդրացին աչքի է ընկնում ոչ միայն իր ս. գրական ու աստվածաբանական հմտությամբ, այլ նաև իր մեթոդով: Նա քրիստոնեական մտածողության սիստեմատիկ մեթոդի մեծագույն ներկայացուցիչն է: Նրա մեթոդը հենվում է Աստվածաշնչի ապացույցի և եկեղեցական հայրերի գրվածքների վկայության վրա: Ըստ նրան եկեղեցու ուղղափառ հայրերի վկայությունը հավասար է Աստվածաշնչի վկայությանը: Հերետիկոսությունների և նեստորականության դեմ պայքարում Կյուրեղ Ալեքսանդրացին համոզված էր, որ հաղթանակի հասնելու միակ կերպը՝ եկեղեցու ուղղափառ հայրերի հետ համաձայն լինելն է, ս. Երրորդության, Մարդեղության և Փրկագործության հարցերում[42]:

Ըստ եկեղեցու մեծ հայրերի, աստվածաբանական-քրիստոնաբանական հարցերում «որպեսզի ապացույցը հուսալի լինի, պետք է հաստատել Աստվածաշունչով:

Հավատի ոչինչ բան չկա, քան սուրբ, աստվածային Գիրքը: Ամենագլխավոր ճանապարհը աստվածաշունչ գրքերի ուսումնասիրությունն է: Աստվածաշունչի եկեղեցական-աստվածաբանության համար ունեցած այսպիսի կարևորությամբ է բացատրվում թե ինչո՞ւ այդ շրջանի գրողներից այնքան շատ մեկնություններ են մնացել: Ամենագլխավոր դպրոցները առանձնապես մեկնաբանական դպրոցներն էին: Բացատրման մեթոդին մեծ նշանակություն էր տրվում»[43]:

Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական վաստակը ընդունվել է բաժանել երկու շրջանների:

Առաջին շրջանը ընդգրկում է 412—428 թվականները: Այս ժամանակահատվածում նրա հեղինակած աշխատությունները հիմնականում ուղղված են Արիոսի դեմ և կրում են մեկնողական-հակաճառական բնույթ:

Կյուրեղ Ալեքսանդրացու ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանը ընդգրկում է 428—444 թվականները: Այս շրջանի նրա ստեղծագործական ժառանգությունը ուղղված է նեստորականության քննադատմանը և դատապարտմանը:

Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական վաստակը ըստ բովանդակության և ըստ ժանրի բաժանվում է հետևյալ մասերի.

---

[38] Կնիք հաւատոյ, (Կարապետ եպս. Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ LVIII և LXXX:

[39] Migne, patrologia Graeca (68—77).

[40] Quasten, նույնը, էջ 119:

[41] Նույնը:

[42] Նույնը, էջ 135:

[43] **Պրոֆ. Ն. Սագարդա,** Հույն-Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը IV—V դարերում, ս. Էջմիածին, 1910, էջ 62—63:

1. Մեկնողական աշխատություններ Հին Կտակարանի վրա:

Ալեքսանդրացու մատենագրական վաստակի մեջ շատ կարևոր և ծավալուն տեղ են գրավում նրա մեկնողական աշխատությունները, որոնք խորապես կրում են, ըստ մասնագետների վկայության, ալեքսանդրյան դպրոցի այլաբանական-միստիկ մեկնաբանության ազդեցությունը[44]:

Կյուրեղ Ալեքսանդրացին «պարտ է զԱստուած պաշտել հոգւով և ճշմարտութեամբ» (Հովհ. Դ 24) բնաբանով, Հնգամատյանից ընտրված որոշ հատվածների վրա գրել է 17 մեկնություններ: Ապա՝ 7 գիրք՝ Ծննդոց, 3 գիրք՝ Ելից, և մեկական գիրք՝ Ղևտացւոց, Թուոց և Երկրորդումն օրինաց Հին Կտակարանի գրքերի վրա, ապացուցելու, որ «օրենքը խափանվել է միայն իր **տառի** և ոչ թե **ոգու մեջ**»[45]:

Կյուրեղ Ալեքսանդրացին այնուհետև նույնպես ծավալուն մեկնություններ է գրել Եսայի (5 գիրք) և «Երկոտասան փոքր մարգարէից» գրքերի վրա:

2. Մեկնություններ Նոր Կտակարանի գրքերի վրա: Հովհաննու Ավետարանի վրա (429-ին՝ աստվածաբանական-վիճաբանական բովանդակությամբ), Ղուկասի Ավետարանի վրա (430-ին՝ քարոզչական, բարոյախոսական-գործնական բնույթի), Մատթեոսի Ավետարանի վրա (428-ին՝ մեկնողական ձևով) և ապա Հռոմայեցւոց, Ա և Բ, Կորնթացվոց և Եբրայեցվոց թղթերի վրա: Սույն մեկնություններից հատվածներ են հասել նաև հայերեն թարգմանությամբ:

3. Դավանաբանական - հակաճառական աշխատություններ Արիոսի դեմ:

412—428 թվականներին Կյուրեղ Ալեքսանդրացու հակաճառական-դավանաբանական աշխատությունները, նրա «Գանձք» գրվածքները ուղղված են «ընդդէմ Արիոսի»: Այս գրվածքներում նա հետևում է ս. Աթանասի մեկնողական մեթոդին և դավանական աստվածաբանությանը:

4. Դավանաբանական - հակաճառական աշխատություններ Նեստորի դեմ:

430-ին Կյուրեղ Ալեքսանդրացին գրում է հինգ գիրք «ընդդէմ Նեստորի», որոնցում խստորեն քննադատում է Նեստորի քարոզների ժողովածուն: Թ դարում Կ. Պոլսի Փոտիոս պատրիարքը ս. Կյուրեղի այս գործը համարում է նրա ամենապայծառ աշխատությունը, մանավանդ նրանց համար գրված, որոնք ի վիճակի են հասկանալու ս. Կյուրեղի տրամաբանական մեթոդի ուժն ու նշանակությունը[46]:

Այնուհետև Ալեքսանդրացին գրում է «Յաղագս ուղղափառ հաւատոյ» երեք ուղերձ-ճառ, դավանաբանական բնույթի՝ ուղղված Թեոդոս Բ կայսրին, երբ հրապարակի վրա ուժգնորեն աղմկում էր նեստորական մոլորությունը: Մյուս երկու ճառերը ուղղված են, առանց անունների, կայսեր երկու երիտասարդ քույրերին՝ Արկադիային և Մարինային, ըստ ոմանց՝ Եվդոկսիա թագուհուն և կայսեր մեծ քույր Բուլկերիային:

5. Ջատագովություն ընդդէմ Յուլիանոս Ուրացողի:

Կյուրեղ Ալեքսանդրացու ջատագովական-հակաճառական աշխատությունների մեջ կարևոր տեղ է գրավում նրա գրած ջատագովությունը Հուլիանոս Ուրացող կայսեր դեմ:

Երկարամյա իր պատրիարքական գործունեությունից հետո, 441-ին, Կյուրեղ Ալեքսանդրացին անհրաժեշտ է գտել գրել 30 գիրք ջատագովություն՝ «Յաղագս սուրբ կրօնից քրիստոնէից ընդդէմ գրոց ամբարիշտ Յուլիանոսի» վերնագրով:

363 թվականին Հուլիանոս Ուրացողը գրել է 3 գիրք հակաճառություն՝ «Ընդդէմ Գալիլիացւոց» վերնագրով: Սույն հակաճառությունը կորել է: Բայց ընդարձակ հատվածներ են պահպանվել դրանից, Կյուրեղ Ալեքսանդրացու գրվածքներում: Հուլիանոս Ուրացողի հակաճառությունը Կյուրեղ Ալեքսանդրացու օրով դեռևս համարվում էր մի ուժեղ հարձակում քրիստոնեության դեմ: Կյուրեղ Ալեքսանդրացին նշում է, որ իր ժամանակ էլ հեթանոսությունը դեռևս չէր մահացել Եգիպտոսում, և թե Հուլիանոս Ուրացողի ամբաստանություններն ու մեղադրանքները քրիստոնեության դեմ լայն արձագանք և ժողովրդականություն էին վայելում մասսաների մեջ, և դրանք մնացել են մինչև իր օրերը անպատասխան: Կյուրեղ Ալեքսանդրացին որոշում է վերջին հարվածը հասցնել հեթանոսությանը: Ալեքսանդրացին իր սույն ջատագովությունը ուղղել է Թեոդոս Բ կայսրին: Աշխատության մեջ ս. Կյուրեղը օգտագործում է Որոգինեսի մեթոդը, երբ նա գրում էր իր ջատագովությունը «ընդդէմ Կելսոսի»:

Կյուրեղ Ալեքսանդրացու սույն ջատագովությունը, որը ուղարկվել էր նաև Անտիոքի Հովհաննես Անտիոքացի պատրիարքին, համարվում է քրիստոնեության հնագույն

---

[44] Quasten, նույնը, էջ 119:

[45] Նույնը, էջ 121:

[46] Նույնը, էջ 126:

և ամենաուժեղ հակաճառությունը հեթանոսության դեմ[47]:

Կյուրեղ Ալեքսանդրացին գրել է նաև

6. **Քարոզներ:**

7. **Բազում ճառեր, ներբողյաններ, գանձեր:**

8. **Թղթեր, նամակներ:**

Ալեքսանդրիայի Աթոռի նախորդ հայրապետների օրինակով, Կյուրեղ Ալեքսանդրացին ևս 412—444 թվականներին գրել է **Ջատկական նամակներ** (թվով 30), հովվական բնույթի, ինչպես նաև դավանաբանական, եկեղեցագիտական բովանդակությամբ: Ալեքսանդրացին լայն թղթակցություն է ունեցել Արևելքի և Արևմուտքի իր ժամանակի եկեղեցական-քաղաքական մեծ անձնավորությունների հետ:

Ս. Կյուրեղի թղթերը ունեն և՛ անձնական, և՛ եկեղեցական-քաղաքական նշանակություն, որպես կարևոր փաստաթղթեր ժամանակաշրջանի եկեղեցու տարեգրության, աստվածաբանական-քրիստոնեական, ջատագովական և հակաճառական վեճերի պատմության, եկեղեցական իրավունքի, Արևելքի և Արևմուտքի Աթոռների հարաբերությունների համար:

Ս. Կյուրեղի մատենագրական վաստակի մեջ են մտնում նաև

9. **Կանոններ,**

10. **Աղոթքներ:**

Կյուրեղ Ալեքսանդրացու մատենագրական ողջ վաստակի և նրա աստվածաբանական ու քրիստոնեական գործերի առանձնահատկությունների մասին տես Quasten, նույնը, էջ 119—142:

(Շարունակելի)

Ա. Հ.

[47] Quasten, նույնը, էջ 130:

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



ՄԱՀ ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆԻ
(1899—1977)

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, մարտի 2-ին, վախճանվեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արարատ Սահակի Ղարիբյանը:

Ա. Ս. Ղարիբյանը ծնվել է 1899 թ. հունվարի 27-ին, Արտաշատի շրջանի Այգեզարդ (Դարղալու) գյուղում, հողագործի ընտանիքում: Գիմնազիան ավարտելուց հետո նա Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում աշակերտում է մեծանուն գիտնական Հրաչյա Աճառյանին:

1928 թվականից նա դասախոսություններ է կարդում նախ համալսարանում և ապա, մինչև կյանքի վերջը, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Ժամանակ առ ժամանակ դասախոսություններ է կարդացել նաև Թբիլիսիի և Բաքվի մանկավարժական ինստիտուտներում:

Նա համարյա երկու տասնամյակ ղեկավարել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը, իսկ հետագայում՝ ակադեմիայի հիմնակազմ գրադարանի տնօրենությունը:

Լայն ու բազմակողմանի էր Ա. Ս. Ղարիբյանի գիտական հետազոտությունների շրջանակը: Նա ավելի քան երկու հարյուր գիտական աշխատությունների հեղինակ էր: Հատկապես լուրջ գիտական աշխատություններ ունի հայ բարբառագիտության բնագավառում: Պակաս արժեք չեն ներկայացնում նաև նրա հայ-ռուսերեն և ռուս-հայերեն բառարանները, որոնք հրատարակվել են նրա անմիջական խմբագրությամբ: Սկսած 1934 թվականից, հայոց դպրոցների բազում սերունդներ լեզուն սովորել են նրա դասագրքով: Նրա մեծ վաստակը ըստ արժանվույն գնահատվել է կառավարության կողմից մի շարք պատվո շքանշաններով:

Ա. Ղարիբյանը 1945 և 1955 թվականներին, որպես պատգամավոր, մասնակցել է կաթողիկոսական ընտրությունների առթիվ

Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովին:

1955 թվականի սեպտեմբերին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք, ընտրվել է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, պաշտոն, որը հանգուցյալը կատարել է մինչև 1963 թվականը, մեծ նվիրումով և սիրով, բերելով միաժամանակ իր արտագին և օգտակար մասնակցությունը Հայոց Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր և խաղաղասիրական գործունեությանը:

1976 թվականի օգոստոսին պրոֆ. Ա. Ղարիբյանը Հայոց Հայրապետի հրավերով կրկին մասնակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի աշխատանքներին մինչև իր հիվանդանալը:

Վեհափառ Հայրապետը Ա. Ղարիբյանի մահվան առիթով 3 մարտ 1977 թ. հետևյալ ցավակցական հեռագիրը ուղարկեց հանգուցյալի դստերը, նրա ընտանիքին և հարազատներին.

«Հանուն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և Գերագույն հոգևոր խորհրդի, խոր վշտով բերում ենք ձեզ Մեր ցավակցությունները ձեր անմոռանալի հոր և հարազատի՝ մեծանուն գիտնական, պրոֆեսոր Արարատ Ղարիբյանի մահվան տխուր առիթով:

Հանգուցյալն իր փայլուն իմացականությամբ, իր գիտական հսկա վաստակով ու անձնվեր աշխատանքի անհատնում կորովով հանդիսացավ մեր դարաշրջանի հայ բանասիրության սյուներից մեկը, որի անունը երախտագիտությամբ պիտի հիշեն հետագա սերունդները: Նույն զգացմունքներով Մենք ևս միշտ պիտի հիշենք նաև Մայր Աթոռիս մատուցած նրա շնորհակալ ծառայությունները:

Հարգա՜նք և լո՜ւյս մեր բոլորիս սիրեցյալ Արարատ Ղարիբյանի մեծ վաստակին ու նրա պայծառ հիշատակին»:

Հանգուցյալ պրոֆեսորի թաղումը կատարվեց մարտի 5-ին, ուրբաթ օրը, ժամը 15-ին: Հանգուցյալի մարմինն ամփոփվեց Երևանի քաղաքային պանթեոնում:

Հանուն Վեհափառ Հայրապետի և Գերագույն հոգևոր խորհրդի, թաղման արարողությանը ներկա եղան Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թոփուզյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և Սարգիս սրկ. Սարգսյանը:

Հանգիստ պրոֆ. Ա. Ղարիբյանի ոսկորներին:



ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

8-ՐԴ ԴԱՐԻ ՄԵՐ ԼԿԻՆ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐՆԵՐԸ

ՍԱՀԱԿԴՈՒԽՏ, ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Շարականագրության տեսակետից 8-րդ դարը աչքի է ընկնում ոչ միայն նրանով, որ ունի Հովհան Օձնեցու և Ստեփանոս Սյունեցու նման բեղմնավոր շարականագիրներ, որոնք զարկ տվեցին շարականների զարգացման գործին, այլև այս դարում ունենք երկու շնորհալի կին բանաստեղծ-շարականագիրներ:

Քրիստոնեական աշխարհում առաջին անգամ, այն էլ ութերորդ դարում, հայ կինը հանդես է գալիս որպես հոգևոր երգի հեղինակ, երաժիշտ և հոգևոր երաժշտության դասատու: Դրանցից մեկը Ստեփանոս Սյունեցու կրտսեր քույրն է՝ Սահակդուխտը, իսկ մյուսը՝ Վահան Գողթնացու մեծ քույրը՝ խոսրովիդուխտը:

Սրտառուչ է Սահակդուխտի կյանքի պատմությունը: Քույր և եղբայր Դվին մայրաքաղաքի կաթողիկոսարանի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավագերեց Սահակի զավակներն էին: Երևում է, որ քույր ու եղբայր եղել են կրթված, գրագետ ու գրասեր ընտանիքից: Որքան շատ են տեղեկությունները Ստեփանոս Սյունեցու կյանքի, մատենագրական վաստակի և եկեղեցական գործունեության մասին, այնքան աղքատ ու քիչ են տվյալները նրա քրոջ մասին: Սահակդուխտն իր ուսումն առել ու դաստիարակվել է հատկապես իր հոր՝ Սահակ երեցի և ավագ եղբոր՝ Ստեփանոսի մոտ: Երևում է, որ Ստեփանոսը ոչ միայն ուժեղ չափով ազդել է քրոջ բանաստեղծական և երաժշտական ընդունակությունների վրա, այլև ազդակ է հանդիսացել այդ շնորհքի ու ձիրքի զարգացմանը՝ տալով դրանց համապատասխան ուղղություն: Մի փոքրիկ պատառիկ տեղեկություն կա Սահակդուխտի մասին՝ միայն Ստեփանոս Օրբելյանի մոտ, երբ նա խոսում է Ստեփանոս Սյունեցու մասին. գրում է նաև. «Էր սորա և քույր մի ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ ի ձորակին Գառնոյ յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին, որոյ անուն Սահակդուխտ»[1]: Հայտնի չէ, թե ինչն է եղել պատճառը, որ այդ «փափուկ և ապիտակ հասակով կոյսը մենակեր յաւերժահարսին նման թողուց հեռացաւ յաշխարհէ և միայն իր ընտանեաց սեփական տուրքը՝ հոգեխօս քնարն առաւ հետը և մեկ հատիկ արժանաւոր միայնութեան տեղ ընտրեց հոն»[2], այսինքն՝ գեղեցիկ, վեհ ու անդրնդախոր Գառնիի ձորի քարայրը: 700—730-ական թվականներին Գեղամա լեռներում կամ Սյունյաց անտառներում չեն հիշատակվում կուսանացներ կամ անհատ մենակյաց ճգնավոր կույսեր, որպիսին, ինչպես պատմիչն է հաղորդում, Սահակդուխտն է եղել: Հայտնի չէ այն պատճառը, որը ստիպել է այդ շնորհալի կույսին, մատաղ հասակում, առանձնանալ Գառնիի ձորի քարայրներում և այնտեղ զբաղվել երաժշտությամբ և մանկավարժությամբ: Եթե Ստեփանոսը «կարգում և շարում» էր շարականները, կարգավորում էր ժամակարգությունը, դասավորում էր մեր հին երաժշտության՝ եկեղեցու ութ ձայներն ու եղանակները, հարստացնում էր մեր հոգևոր երգն

[1] **Ս. Օրբելեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910 թ., էջ 139:

[2] **Հ. Ղ. Ալիշան,** Հուշիկք հայրենեաց, Ա, հատ., էջ 290:

ու երաժշտությունը իր «քաղցրահամ» կցուրդներով, ապա Սահակդուխտը, քառանձալի մեներգյան մեջ, զբաղվում էր բանաստեղծություններ և հոգևոր երգեր հորինելով ու ուսուցանելով: Գալիս էին Գառնիի ձորը խումբ-խումբ տղաներ ու աղջիկներ Սահակդուխտի մոտ՝ երգ ու երաժշտություն սովորելու. «Սա յոյժ հմուտ էր երաժշտական արուեստին, որ ի ներքո վարագուրի նստեալ ուսուցանէր զբազումս»[3]: Սահակդուխտը «արար կցուրդս և մեղեդիս քաղցրընդեղանակս, յորոց մին՝ Սրբուհին Մարիամ, որ իւր անուամբն է յօրինեալ»[4]: Ահա այդ բանաստեղծության առաջին տունը՝ ըստ Հ. Ղ. Ալիշանի.

«Սրբուհի Մարիամ սափոր ոսկի,
Եւ տապանակ կտակարանաց.
Որ ի վերուստ զհացն կենաց
Պարգևեցեր քաղցեալ բնութեանս.
Առ նա միշտ բարեխօսեա,
վասն քաւութեան մեղաց մերոց»[5]:

Մինչև 1950-ական թվականները Սահակդուխտի վերոհիշյալ բանաստեղծությունից միայն այս պատառիկն էր հայտնի մեր բանասիրությանը, որով և մոտավոր գաղափար էինք կազմում մեր առաջին կին բանաստեղծի շնորհքի մասին և նկատում, թե որքան հարազատություն և նմանություններ կան մեր հոգևոր երգերից «Մեծացուցէ» տեսակի և Սահակդուխտի այս բանաստեղծության միջև:

«Մեծացուցէ»-ների և Սահակդուխտի բանաստեղծական կապն ավելի ակնհայտ դարձավ, երբ 1950 թվականին հայտնաբերվեց այդ բանաստեղծությունն ամբողջապես: «Հասկ» ամսագրի 1951 թվականի 12-րդ համարում Նորայր եպիսկոպոսը (Ծովական) առաջին անգամ լրիվ տպագրեց այդ անվանակապ բանաստեղծությունը, որը բաղկացած է ինը տնից: Բանասեր հմուտ եպիսկոպոսը դարերով կորած այդ սքանչելի, հին բանաստեղծությունը հայտնաբերել է Անթիլիասի № 1741 ձեռագրից, որը գրված է Աղթամարում, 1499 թվականին[6]: Այստեղ արդեն զգալի տարբերություն կա ձեռագրի և հ. Ղ. Ալիշանի հաղորդածի առաջին տների մեջ: Ահա և ձեռագրի առաջին տունը.

«Սրբուհի Մարիամ անապական տաճար.
Եւ կենարար Բանին ծնող և մայր.
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ Տիրամայր և կոյս»[7]:

Նորայր եպիսկոպոսի հրատարակած բանաստեղծության ինը տները հոդում են Սահակդուխտ:

Առաջին տան մեջ Տիրամայրը որակվում է որպես «անապական տաճար», «Բանին ծնող», և միակ «Օրհնեալն ի կանայս», «բերկրեալ Տիրամայր և կոյս»... Մյուս տան մեջ Տիրամայրը համարվում է «անդաստան հոգևոր», որտեղ աճել է «համապայծառ ծաղիկը»: Այդ հոգևոր անդաստանի վրա տեղացել է երկնային «հոգեհոս անձրևը», որպեսզի «պտղաբերի ի Հօրէ» Փրկիչը, հայտնվի մարդկանց և ազատագրի դրանց նախահոր մեղքից ու դժոխքից: Ապա երրորդ տան մեջ ի դեմս Տիրամոր փառաբանվում է նաև Փրկիչը, որը ներկայացվում է որպես

«Հաստատութիւն երկնի և երկրի,
Կենդանութեանց բաշխող.
Որ աստուածային լուսոյ ճառագայթիւքն
Վայր իջեալ վերականգնեաց զնախահայրն
ի գլորմանէ»[8]:

Դիմելով Տիրամորը, բանաստեղծուհին ասում է, որ նա բարձր է նույնիսկ երկնային «վեհագոյն սերովբէից», որովհետև

«Զերկնային զօրացն զՏէրն
Ի գիրկս քո կրեցեր...»

Տիրամոր ծնած Փրկչի խաչափայտն է բացել սերովբեների բոցեղեն սրերով պաշտպանվող դրախտի փակ ճանապարհն ու դուռը: Ինքը Փրկիչը միաժամանակ հանդիսանում է

«Դուռն երկնից, և էջք Աստուծոյ,
Զխաղաղութեան միջնորդ.
Որ զնախամօրն Եւայի բարձեր զերկունս,
Տիրացեալ մահուն...»[9]

Բանաստեղծուհին ոչ միայն ինքը պիտի «բերկրեալ ցնծա», այլև ամբողջ աշխարհը՝

[3] Ստ. Օրբելեան, նշված գիրքը, էջ 139:

[4] Անդ:

[5] Հ. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 291:

[6] Շարակնոցի գրիչն է Մաթևոս կրոնավոր՝ որդի Խոնձայի և Կարապետի. մեծութ. 7 13 5: Թուղթը սղորկ, բոլորագիր. պարունակությունն է Շարական՝ էջ 9—364. մեղեդիներ՝ 587—622. Տոնացույց և Ավետարանացույց, էջ 623—742. «Հասկ», 1951 թ., 12, էջ 366:

[7] Անդ, էջ 366:

[8] Այս բանաստեղծության բոլոր մեջբերումները կատարվում են վերոհիշյալ «Հասկ» ամսագրի 366 և 367 էջերից:

[9] Անդ, էջ 367:

ներառյալ նաև «բազմութիւնք հրեղինացն», որոնք «հրաշալի ձայնիւ» երգում են՝ դիմելով կույսին.

«Ուրախ լեր բերկրեալ...
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ Տիրամայր և կոյս:

Այստեղ համեմատվում են նաև Տիրամայրը և Հին Կտակարանի անկեզ մորենին: Բանաստեղծության նախավերջին տունում նկարագրվում է Փրկչի մարդեղության խորհուրդը, որով հողեղենները փրկվում, հավասարվում են հրեշտակներին և ապրում նրանց հետ անմահ կյանքով: Վերջին տան մեջ բանաստեղծուհին, դիմելով մարդկությանը, հորդորում և ասում է՝

«Տուք զփառքս ի բարձունքս,
Թագաւորին յաւիտենից,
Որ և մարմնացաւ ի սուրբ կուսէն,
Եւ փրկեաց զարարածքս ի մեղաց,
Օրհնեալ ես դու ի կանայս,
Բերկրեալ Տիրամայր և կոյս»[10]:

Այսպես ամբողջ բանաստեղծությունը բերկրանք, մեծարանք և փառաբանություն է, միշտ ունենալով վերջին երկու տող կրկնակը: Ավելի բարձրանում է այս բանաստեղծության արժեքը, երբ այն դիտում և գնահատում ենք 8-րդ դարում եղած մեր հոգևոր երգերի կապակցությամբ:

Սահակդուխտի միայն այս մեկ բանաստեղծությունից երևում է, որ նա լավ ծանոթ է եղել մեր շարականներին, առանձնապես «Մեծացուցէ» տեսակին: Մեր ասածը հիմնավորելու համար բերենք մի քանի օրինակներ այդ շարականներից: «Կանոն ծընընդեան սուրբ Աստուածածնին» շարքից վերցնենք «Առաւօտ խաղաղութեան և Արուսեակ զուարթարար» «Մեծացուցէ»-ի վերջին տունը.

«Տապանակ ապրեցուցիչ
Եւ տաղաւար Աբրահամեան,
Անդադար երգով սոքօք
Զքեզ միշտ մեծացուցանեմք»[11]:

«Մեծացուցէ»-ների և Սահակդուխտի շարականի կապերն ու ոճերը ցույց տալու համար անցկացնենք մի քանի օրինակների զուգահեռ.

Սահակդուխտ	Մեծացուցէ
1 Սրբուհի Մարիամ անապական տաճար Եւ կենարար Բանին ծնող և մայր («Հասկ», 366)	1 Անարատ տաճար բնակարան Անբաւ Բանին Աստուծոյ Մարիամ սուրբ կույս... (Շար. 85) Անապական տաճար և առագաստ լուսոյ (Շար. 50)
2 Անդաստան հոգևոր և համապայծառ ծաղիկ Որ ի հոգեհոս անձրևէն հովանաւորեալ ի քեզ Պտղաբերեցեր ի Հօրէ՝ յայտնեալ մարդկան... («Հասկ», 366)	2 Ծառ կենաց տնկեալ յադին սուրբ կոյս, Որ զհայրածին բղխեցեր ծաղիկ... Բանաւոր երկիր Տիրուհի և անդաստան Մաքուր ի փշոց մեղաց... Ամպ թեթև երկրային ցանկութեանց. Որ զցօղն հայրաբուղխ անձրևեցեր Ի բանական երկիր (Շար. 15—16) Անթառամ ծաղիկ, անդաստապարտ շառաւիղ Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ Յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անապատ... (Շար. 63)
3 Որ զերկնային զօրացն զՏէրն, Ի գիրկս քո բարձեալ կրեցեր... («Հասկ», 366)	3 ...Որ զանհասանելի զՏէրն Յորովայնի քում կրեցեր... (Շար. 47) 2 ...Որ զԲանն Աստուած անսերմ յղութեամբ Արգանդի կրեցեր (Շար. 61)

[10] Անդ:

[11] Շարակնոց, Երուս., 1936 թ., էջ 20:

Սահակդուխտ

4 Որ ըզհուրն Աստուածութեան
Յորովայնի քում ընկալար
Եւ ոչ բոցակիզար,
Որպէս երբեմն զմորենին...
(«Հասկ», 367)

Մեծացուցէ

4 Հուրն կենդանի, որ ի մորենին վառեցաւ
Զոր անվնաս յարգանդի քում կրեցեր...
(Շար. 30)
2 Անկէզ մորենի և արովբէ հողեղէն
Սուրբ կոյս, քանզի պտուղըն կենաց
Ի քէն տրուաւ մեզ... (Շար. 73)
3 Որ զհուրն Աստուած յորովայնի քում կրեցեր,
Անկիզելի մորենի (Շար. 82):

Այս կարգի նմանություններ, մտքեր, պատկերներ ու ոճեր կարելի էր մեջբերել նաև շարականների մյուս տեսակների՝ «Տէր յերկնից»-ներից, «Ողորմեա»-ներից և «Համբարձի»-ներից: Բայց մենք բավականացանք միայն «Մեծացուցէ»-ներով նախ նրա համար, որ Սահակդուխտի գրածը նույնպես նվիրված է Տիրամորը, ինչպես բոլոր «Մեծացուցէ»-ները, երկրորդ՝ մեր նպատակն է ցույց տալ, որ Սահակդուխտը քաջ ծանոթ է եղել մեր հին «Մեծացուցէ»-ներին, երրորդ՝ որ նրա «Սրբուհի Մարիամ» ներբողը ոչ միայն զորեղ ազդեցություն է ունեցել հետագա դարերում հորինված «Մեծացուցէ»-ների վրա, այլև իր ոգով ու ոճով զարկ է տվել շարականների այդ տեսակի զարգացմանն ու կատարելագործմանը: Վերջապես մեր «Մեծացուցէ»-ների մեջ շատ կան այնպիսիները, որոնք հավանաբար պատկանում են Սահակդուխտին, բայց որոշակի ոչ մի հաղորդում չկա այդ մասին:

8-րդ դարի մեր երկրորդ կին շարականագիրը Վահան Գողթնացու քույր Խոսրովիդուխտն է, որին վերագրվում է իր եղբորը՝ Վահան Գողթնացու նահատակությանը նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը, որը մի անզուգական ներբող է՝ հայրենաշունչ ոգով գրված: Ավանդությունը այդ շարականի հեղինակ է համարում Խոսրովիդուխտին: Սակայն մեր մատենագրության և պատմագրության մեջ ոչ մի տեղ գրավոր հիմք չի մնացել այդ մասին: Հ. Ղ. Ալիշանը դեռևս 1869 թվականին Վահան Գողթնացու և նրան նվիրված շարականի մասին խոսելիս ենթադրում է, որ եթե ավանդությունը լուռ Խոսրովիդուխտի մասին, ապա այդ շարականը անկասկած պետք է վերագրվեր կամ Վահանի կնոջը, կամ Սահակդուխտին. «Սա ինքն է աւանդութեամբ վկայեալ և սրբազանեալ երգուհի մեր, զոր թէև նա (աւանդութիւնն) լուէր, հարկ էր մեզի կարծել կամ Վահանայ անտարակոյս սիրողը, այսինքն իրեն հարսնացեալ Սիւնեաց օրիորդը և կամ անոնց երկուքին ժամանակակից և վկայուած մեծանուն հայ երգուհի, որ քեզ ալ Հայկակ, անծանօթ չէ, Սահակդուխտն է ան, քոյրն Ստեփանոսի Սիւնեցւոյ»[12]:

Այսպիսի կարծիք հայտնվել է նաև մի ուրիշ, նույնպես մեծանուն բանագետի կողմից: Խոսելով Սահակդուխտի մասին, Մաղաքիա արքեպ. Օրմանյանը գրում է. «Իրեն գրվածքներեն կհիշվի Սրբուհի Մարիամ երգը գուցե և Վահան Գողթնացիի «Զարմանալի է ինձ» շարականը, որը փափուկ զգացումներ կբուրե, որ ուրիշներեն Վահանի քրոջ կվերագրվի (589) որ ծանոթ անձ մը չէ, մինչ Սահակդուխտի և Վահանի մեջ առաջուց հոգևոր հաղորդակցություն եղած ըլլալը շատ հավանական է»[13]:

Վահան Գողթնացին, Խոսրովիդուխտը և Սահակդուխտը ժամանակակիցներ են եղել, գուցե և անհնշան տարբերությամբ հասակակիցներ: Այն տարիներին, երբ Վահանը հոգեկան խոր ու ծանր ողբերգություն ապրելով անօգնական թափառում էր Հայաստանի մենաստաններն ու վանքերը, հավանական է, որ այդ թափառ կյանքում Վահան Գողթնացին եղել է նաև Գառնիի ձորում, որտեղ երկու բարեպաշտ և գեղեցիկ երիտասարդները ծանոթացել են, ստեղծվել է նրանց մեջ հոգեկան կապ, որի մասին իրաստացիորեն ենթադրում են երկու հմուտ բազմավաստակ հայ բանասերները՝ հ. Ղ. Ալիշանը և Օրմանյան սրբազանը:

Այժմ անցնենք Վահան Գողթնացուն նվիրված վերոհիշյալ շարականի քննությանը, պարզելու համար, թե ո՞վ է այդ ներբողի հեղինակը, Խոսրովիդուխտը, թե Սահակդուխտը: Եթե Խոսրովիդուխտի բանաստեղծ լինելու և շարական գրելու մասին միայն ավանդությունն է ասում, ապա Սահակդուխտի մասին ունենք պատմական գրավոր հիմք, ինչպես տեսանք: Մենք էլ հավանական ենք գտնում, որ «Զարմանալի է ինձ» շարականի հեղինակը Վահանի քույ-

---

[12] **Հ. Ղ. Ալիշան**, Հուշիկք հայրենեաց հայոց, հատ. Բ, էջ 195, Վենետիկ 1869 թ.:

[13] **Մաղաքիա արքեպ. Օրմանյան**, Ազգապատում, Ա հատոր, Կ. Պոլիս, 1912 թ., էջ 867—868:

ը չէ: Շարականում արտահայտված նուրբ ու լիրիկական զգացումները ցույց են տալիս, որ իրոք, նախապես, մինչ այդ շարականը գրելը «հոգեկան հաղորդակցություն» է եղել Սահակդուխտի և Վահանի մեջ: Ամբողջ բանաստեղծության մեջ արտահայտված մտքերն ու զգացումները ավելի շատ պատկանում են Սահակդուխտին, քան թե Խոսրովիդուխտին.

«Զարմանալի է ինձ քան զերգս երաժշտականաց.
Զայնս ողբոց քոց հնչմունք
Ո՛վ երանելի Տէր Վահան ընտրեալ յԱստուծոյ»
...«Առաքել յորդորէ այս զհոգւոյս մասունս
Յորինել քեզ երգս ոչ զղջականս.
Այլ հոգևորս և ուրախարարս
Յորդորականս և ներբողեանս,
Ո՛վ երանելի Տէր Վահան, ծառայ Քրիստոսի» (Շար. 747)

Բանաստեղծուհին հիանում է Վահանի հերոսությամբ, և «զարմանալի» է, որ նա փոխանակ ողբալու նրա վրա, տխուր ողբերի փոխարեն երգում է «ուրախարար» երգեր ու ներբողներ: Շարականի հեղինակը ուրախանում է Վահանի տարած հոգեկան հաղթանակի համար, նրա գերմարդկային տոկունության և արիության համար: Այս ամենը ոչ միայն զարմացրել են բանաստեղծուհուն, այլև ցնցել նրա ամբողջ հոգեկան աշխարհը՝ «զհոգւոյս մասունս»,— միտքը, կամքը: Եվ ահա Վահան Գողթնացու հերոսական մահվանը վայել ուրախ ներբողյաններ է գրում հեղինակը՝ այդ ազնիվ հայի ու ջերմ հայրենասեր հերոսի համար.

«Զարհուրեցուցանէ՝ զքո ճգնութիւնդ
Զմարմնոյս բնութիւնն.
Իսկ դու առաւել գտար,
Ով երանելի տէր Վահան սիրող Քրիստոսի» (Շար. 748)

Աստանդական, թափառաշրջիկ կյանքը, կրած զրկանքները, հոգեկան անելանելի ծանր ապրումները, այս ամենը Վահանը տարել է տոկալով, անտրտունջ ու հերոսաբար: Վահանի այդպիսի ուժեղ հոգի ու սիրտ ունենալը երգչուհուն զարմանքից հասցնում է հիացմունքի: Գողթնացու կրած տանջանքներն անտեղի չեն անցել ըստ բանաստեղծի: Նա այդ հերոսական մահով գտել է փառք, պարծանք, հիշատակ և դարձել է «Երանելի», անմահ: Շարականի նախավերջին տան մեջ հեղինակը ուզում է ասել, որ օտար բանաստեղծների (հավանաբար հունական և հռոմեական) ու իմաստասերների պաճուճական գործերն ու հերոսները սնոտի պատրանքներ ու դատարկ բաներ են Վահանի հերոսական, առաքինի կյանքի ու նահատակության համեմատությամբ.

«Արտաքնոցն ըզգաստքն
Ստեղծիչ բանք սնոտեացն ի պատրութիւն,
Իսկ քոյդ սիրայնոյ աստուածարեալ և ոգեշահ,
Ո՛վ երանելի տէր Վահան, ընտրեալ ազատաց» (Շար. 748)

Շարականի վերջին տան մեջ երգվում է Վահանը որպես հայրենիքի քաջ զինվոր, որը պատրաստվում է հոգևոր պատերազմի՝ ընդդեմ «հարաւայնոյ» (արաբական) աշխարհացուցց աճեղ պետությանը, հավատարիմ մնալով իր նախնիների ավանդներին ու հայրենիքին: Ահա և շարականի այդ վերջին տունը:

«Որպէս զքաջ նահատակ, պատրաստեալ ի պատերազմ,
Կատարեցեր զընթացս քո արիաբար յազգացն հարաւայնոյ,
Դասաւորեալ ընդ անմարմնականսն,
Ով երանելի տէր Վահան, Գողթեացն իշխեցող» (Շար. 748)

Վերևում բերված օրինակներն ու շարականի վերլուծությունը հիմք են տալիս ասելու, որ Վահան Գողթնացուն նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը շատ հավանական է, որ գրել է ոչ թե Խոսրովիդուխտը, այլ Սահակդուխտը: Այսպես ուրեմն, Սահակդուխտն եղել է 8-րդ դարի առաջին հայ կին շարականագիրը և երաժշտագետը: Երգահան բանաստեղծուհին, հավանաբար, մինչև իր կյանքի վերջը ապրել է պատմական Գառնիի ձորում: Նա իր ամբողջ կյանքի ընթացքում երգեր է հորինել, երգեր սովորեցրել հայ պատանիներին և երգելով էլ վախճանվել. «Եւ անդէն ի նմին վախճանեալ դնի ի հանգստի յորմէ բազում բժշկութիւնք լինին»[14]:

Սահակդուխտը որպես կին շարականագիր ունեցել է մտավոր մեծ պաշար: Նա լավ ծանոթ է մեր մինչ այդ եղած շարականներին և տեղյակ՝ անտիկ գրականությանը, «Սրբուհի Մարիամ» ներբողը իր մեջ ամփոփում է մինչև 8-րդ դարն եղած «Մեծացուցէ» շարականների ոգին, պատկերները, մոտիվներն և նույնիսկ բառապաշարը: Այս ամենը միայն սոսկ ամփոփում,

[14] Ստ. Օրբելեան, նշվ. աշխ., էջ 139:

համադրում չեն: Սահակդուխտը այդ կարգի շարականները զարգացրել, կատարելագործել և հասցրել է բարձր մակարդակի: Մյուս կողմից անվանակապով գրված այդ գեղեցիկ ու ջերմ շարականը ոգևորության աղբյուր և օրինակ է հանդիսացել հետագա շարականագիրների՝ հատկապես «Մեծացուցէ» գրողների համար: Սահակդուխտի ներբողը հնչեղ ու թարմ է. այստեղ շնչում է բնությունը՝ կենդանի և գունագեղ պատկերներով: Սուրբ կույսը «հոգևոր անդաստան» է, «համապայծառ ծաղիկ», «հոգեհոս անձրև», «Լուսոյ ճառագայթ», «չկիզվող մորենի» և այլն: Հոգևոր երգերի մեջ ոչ միայն մեզ մոտ, այլև ամբողջ քրիստոնյա աշխարհում Սահակդուխտը բացառիկ երևույթ է, որի գրածները լի են քնարականությամբ, հայրենասիրությամբ ու մոտիվների թարմությամբ:



ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԸ ԴԱՐՈՒՄ*

(Պատմական ակնարկ)

II

Նվիրակությունը Ղազար Ջահկեցուց մինչև Հակոբ Շամախեցի

ԺԸ դարու նվիրակության մասին սկսած Նահապետ Եդեսացի կաթուղիկոսից (1691—1705) մինչև Ղազար Ջահկեցի կաթուղիկոսը ոչ մի տեղեկություն չունենք: Ղազար Ջահկեցուց սկսած մինչև ԺԸ դարու վերջը—Ղուկաս կաթուղիկոսի մահը (1799) բավականին նյութեր կան:

Ղազար Ջահկեցի կաթուղիկոսի օրով **Բայազիտ** ուղարկվում է **Զուղայեցի Հարություն** վարդապետը, որ մի քաղաքավարի ու բարեբարո մարդ էր, սակայն շատ չափավոր ուսման տեր: Սա խնդրում է կաթուղիկոսին, որ յուր հետ իբրև սպասավոր և գործակից վերցնե Երևանցի Սիմեոնին (ապա Սիմեոն Երևանցի կաթուղիկոս), որի եռանդի ու հասկացողության վրա վստահ էր նա: Սիմեոնը արդարացնում է յուր վրա դրած հույսը ու մեծապես նպաստում է Բայազիտում Հարություն վարդապետի գործին: Բայազիտից վերադառնալով Սիմեոնը ձեռնադրվում է սարկավագ:

Նույն Զուղայեցի Հարություն վարդապետը (ապա եպիսկոպոս) Բայազիտի նվիրակության գործն ավարտելուց հետո **Հնդկաստանի** նվիրակ է կարգվում. նա այս անգամ ևս իրեն սպասավոր է խնդրում Սիմեոն սարկավագին, որին արդեն լավ ճանաչում էր, որի շնորհքն անձամբ տեսել էր Բայազիտում եղած ժամանակ: Եպիսկոպոսի այս ընտրության վրա զայրանում է կաթուղիկոսը՝ ասելով. «Հետդ մի բարետես և գեղեցիկ մարդ տար, այն քյոսան ինչ է, որ Հնդկաստան ես տանում»: Սակայն Հարությունն եպիսկոպոսը պատասխանում է, որ առանց Սիմեոնի նա չի կարող նվիրակության գնալ. ուստի և կաթուղիկոսն ակամա թույլ է տալիս Սիմեոնին նրա հետ գնալու:

Հնդկաստանի ժողովուրդը, որ քահանայական ձեռնադրություն տեսնելու խիստ ցանկություն էր զգում՝ դիմում է նվիրակ Հարություն եպիսկոպոսին և խնդրում ձեռնադրության հանդես կատարել: Նա ժողովրդի հետաքրքրության ու եկեղեցասիրական զգացումներին բավականություն տալու համար խոստանում է խաչվերացի տոնին Սիմեոն սարկավագին վարդապետ ձեռնադրել: Ժողովուրդը եպիսկոպոսի խոստման վրա ցնծում, ուրախանում է, որ շուտով ականատես է լինելու մեծ հանդեսի: Սակայն, ժողովրդի ուրախության հակառակ տրտում էին քահանաները: Նրանք իրենց սեփական շահն ի նկատի ունենալով խորհում են մի դիվային ծրագիր—սպանել նվիրակին, և չանցած 8 օր այն օրից, երբ Հիրություն եպիսկոպոսը մուտք էր գործել Հնդկաստան՝

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № Բ-ից:

քահանաները թունավորում են նրան: Այս անակնկալ մահը շանթահարում է Սիմեոն սարկավագին: Հասարակությունը, որ կարճ ժամանակամիջոցում, արդեն կարողացել էր Սիմեոնին ճանաչել, առաջարկում է միայնակ յուր եպիսկոպոսի գործը շարունակել. բայց օրինապահ սարկավագը մերժում է այդ առաջարկը, քանի որ կաթուղիկոսից հրաման չուներ: Այնուհետև խնդրում են նրան, որ գործը երեսի վրա չթողնի, մինչև որ իրենք Էջմիածնից բերել կտան նվիրական կոնդակ: Սիմեոնը զիջանելով ժողովրդի խնդրանքին սկսում է յուր եպիսկոպոսի գործը շարունակել՝ և 2 տարի անց ստանում է կաթուղիկոսից նվիրական կոնդակը և դրա հետ մեկտեղ գովասանական ու օրհնության թուղթ: Սիմեոնը յուր շնորհալի գործունեությամբ այն աստիճան սիրելի է դառնում Հնդկաստանի հայերին, որ նրանք վարձատրում են նրան թանկարժեք բազմաթիվ նվերներով, շատերն էլ, իբրև խորին հարգանքի արտահայտություն իրենց կնքահայր են անում. նրա սանամայրերից մեկը—Մարթա խաթունը—նվիրում է սարկավագ նվիրակին 12 շար մարգարիտ՝ սիսեռից մեծ հատիկներով: Ծատ սիրում էր Սիմեոնին և Գրիգոր Միքայելյան Խոջաջանյան Զաքիկենց, տեղական իշխաններից մեկը, որը թանկագին ընծաներ տալով՝ միևնույն ժամանակ պարտավորեցնում է նրան ասելով. «Պարտական լիցիս՝ եթէ ի կաթողիկոսութեանդ զերկուս զայնպիսի յիշատակս ոչ հաստատեցես իմ ծախուք, որոց նմանն ոչ իցէ եղեալ անդ և յարատևաբար ի գործ արկցին»: Իշխանն այդ խոսքերով մարգարեանում էր Սիմեոնի նկատմամբ, որ նա ապագայի կաթուղիկոսն է. սակայն Սիմեոնը, այդ համեստ, բայց ծիր ոգին հիշյալ խոսքերից վիրավորվում է և իրեն կաթուղիկոսության անարժան է համարում: Սակայն իշխանը հանաք չէր անում և ոչ էլ ծաղր, որովհետև կատարվում է նրա գուշակությունը և Սիմեոնը դառնում է հետո մի եռանդուն, ծիր ու գործունյա կաթուղիկոս (1763—1780): Երեք տարի ու կես մնալով Հնդկաստանի և Ջուղայի կողմերը՝ ավարտում է Սիմեոնը յուր գործը և ճանապարհ ընկնում դեպի ս. Էջմիածին: Ճանապարհին նաթուղիկոսից հրաման է ստանում, որ թե Մայր Աթոռի և թե ազգական բոլոր նվերները հանձնի Դավրեժում կաթուղիկոսի եղբայր տեր Հովսեփ քահանային: Հնազանդ սպասավորը կատարում է յուր իշխանավորի հրամանը և գալիս-հասնում է Էջմիածին՝ ներկայացնելով Վեհափառին յուր ժողոված նվերների մանրամասն հաշիվը: Սիմեոնի Էջմիածին վերադառնալուց հետո «դժվարահավան» ջուղայեցիք մի հանրագիր են ուղարկում Ղազար կաթուղիկոսին և շնորհակալություն հայտնում Սիմեոնին իրենց նվիրակ կարգելուն համար, և միևնույն ժամանակ խնդրում են ձեռնադրել նրան վարդապետ և կրկին ուղարկել իրենց կողմերը նվիրակության: Կաթուղիկոսը, որ այժմ արդեն առանձին հարգանքով էր վերաբերվում Սիմեոնին՝ ձեռնադրում է նրան վարդապետ ինքն անձամբ,—մի պատիվ,—որ շատ քչերին է հաջողվում ստանալ—սակայն չի ուղարկում նվիրակության, այլ պահում է իր մոտ[9]:

Ղազար Ջահկեցու օրով իբրև Հնդկաստանի նվիրակ հիշվում է նաև **Մարտիրոս վարդապետ,** որ «կարգեցեալ ի Ղազարու կաթուղիկոսէն նուիրակ երկրին Հընդկաց և Բաբելացւոց և ամենայն ծովեզերեայցն Ովկիանու»[10]:

Օսմանցւոց երկրի կողմերն ուղարկվում է **Աստապատցի Ղազար** վարդապետին իբրև նվիրակ նվիրակաց[11]:

Ամստերդամում նվիրակ է **Հովհաննես վարդապետը,** որը հետո Սիմեոն Երևանցու ժամանակ Մայր Աթոռի պարսպաշինության համար դրամ է ուղարկում Ամստերդամից[12]:

Ռուսաստան գնացող առաջնորդները սովորաբար վարում էին և նվիրակության պաշտոնը, որի համար և նշանակվում էին հոգևորականներ ս. Էջմիածնի կաթուղիկոսներից: Բայց Ղազարի կաթուղիկոսության ժամանակ 1749 թ. Ռուսաստանի հայերն իրենց համար առաջնորդ են կարգում Ռուսաստանի թագավորի հրամանով Գանձասարի վիճակից **Ստեփանոս** եպիսկոպոս Անանյանցին՝ Փառակեցի **Բարսեղ** եպիսկոպոսի փոխարեն: Այդ Բարսեղը, որ Ռուսաստանում նվիրակ էր կարգվել Ղազարից, աննախանձելի վարք ու բարքի տեր էր. ժողովուրդը բողոքում է կաթուղիկոսին նրան հեռացնելու, սակայն բողոքը մնում է «ձայն բարբառոյ յանապատի». ուստի ժողովուրդն էլ ինքնագլուխ կերպով առաջնորդ է նշանակում: Գանձասարի Ներսես կաթուղիկոսը Ռուսաստանում եպիսկոպոսներ, նվիրակներ, գանձանակներ էր հաստատում և յուր անունը եկեղեցիներում հիշել տալիս: Գանձասարի նվիրակներն այն աստիճանի հասան, որ սկսեցին խրոխտալ Մայր Աթոռի նվիրակների վրա, վատաբանելով նրանց և միևնույն ժամանակ ասում էին, թե իրենցը է այդ վիճակը և ոչ Մայր Աթոռին:

---

[9] «Արձագանք», 1888, № 11, էջ 142. նաև «Դիւան», Գ, էջ կզ-ի, Գյուտ քհ. Աղանյան:

[10] «Դիւան», Գ, էջ 95:

[11] Նույնը, էջ 27:

[12] Նույնը, էջ 739:

Այս դրությունը շարունակվում է և հաջորդ կաթողիկոսների ժամանակ—մինչև Սիմեոն, որն և վերջ է դնում այս դրության, ինչպես կտեսնենք յուր տեղում[13]:

Վանի շրջանի նվիրակ է **Հովհաննես վարդապետ:** Այս վիճակը, ինչպես նաև **Բաղեշը, Մուշը** պատկանում են Մայր Աթոռին, բայց Աղթամարի Նիկողայոս կաթողիկոսն ապօրինաբար Աղեքսանդր աբեղայի միջոցով Կոստանդնուպոլսից ծածուկ մի հրաման է հանում («Ղոլթուխ ֆէրմանի»), որով հաստատում է, թե վերոհիշյալ վիճակներն Աղթամարի կաթողիկոսության են պատկանում: Հովհաննես վարդապետի ժողովված արդյունքը ձեռից առնում են և արտաքսում: Այս լուրն առնելով Ղազար կաթողիկոսն շտապում է Էջմիածնի իրավունքը վերականգնել. իսկույն Կ. Պոլսի նույն սուլթանից «ֆէրման» է բերել տալիս, որով հաստատվում է, որ այդ վիճակներն Էջմիածնին են և ոչ ոք իրավունք չունի ձեռնամուխ լինելու դրանց:

Ջահկեցու ժամանակ հիշվում է **Պետրոս Քյոթոր** կոչված վարդապետը, որն ուղարկված էր **Կ. Պոլիս** նվիրակության դեռ ևս նախորդ Աբրահամ կաթողիկոսից[14]: Պետրոս վարդապետի և Ղազար կաթողիկոսի մի խոսակցությունից երևում է, որ ոչ պակաս ժիր և արդյունավոր նվիրակ է եղել Պետրոսը: Կաթողիկոսը նրան հանդիմանելով հիշեցնում է նրան Կ. Պոլսի նվիրակության ժամանակ արած մի գործի մասին —այն, որ ինքը 300 կանթեղ է շինել տվել: Պետրոս վարդապետն այդ մեծ բան չի համարում Կ. Պոլսի նվիրակի համար: Իսկ «ո՞ւր են այժմ քո կանթեղքդ,—ասում է նրան Վեհը,—ո՞չ ապաքէն դու ևս նուիրակ առաքեցար ի Կոստանդնուպոլիս ի բարելիս ժամանակիս»: Պետրոսը պատասխանում է, որ թեև ինքը իր հետ կանթեղներ չէ բերել, բայց շատ ուրիշ բաներ է բերել կանթեղներից էլ ավելի լավ. նա բերել է վերադառնալիս՝ վարագույր, գոգնոց, ալթոռ, կոնք, սկիհ, ավետարան, շապիկներ և շուրջառներ. բացի դրանից մի թանկագին ջահ էլ է բերում հետը, սակայն, ջուրն է ընկնում այն և կորչում[15]:

Մինասս Ակնեցի (1751—1752)

Մինասի կաթողիկոսության ժամանակամիջոցը շատ կարճ լինելով, բնական է, որ նրա ուղարկած նվիրակների թիվն էլ նվազ լինի: Նրա կարգած նվիրակներից հայտնի են երկու հոգի,—մեկը **Կ. Պոլսի** նվիրակ **Աբրահամ** վարդապետն է[16], մյուսը **Եվդոկիայի** նվիրակ **Բասենցի Հարությունն** վարդապետը—Մինաս կաթողիկոսի աշակերտ[17]:

Աղեքսանդր Բ Կ. Պոլսեցի (1754—1756)

Աղեքսանդր կաթողիկոսի ժամանակ նվիրակ է **Ռումելու** և **Ադրիմու** կողմերում **Պետրոս վարդապետ**[18]:

Սահակ Ե Կեչեցի (1756—1759)

1756 թ. Կ. Պոլսում նվիրակ է Սիմեոն Երևանցին, այժմ արդեն եպիսկոպոս: Արդեն բավականին փորձառություն ձեռք բերած՝ նա կրկնապատկում է իր եռանդը ուշ դարձնելով գլխավորապես ժողովրդի մտավորի վրա, բարոյականության վրա, ինքնաճանաչության վրա: Սիմեոնը նվիրակության տուրքը ժողովելիս, պարտադիր նշանակություն չէր տալիս նրան, որն արդեն իսկապես պարտադիր կերպարանք էր ստացել, այլ նա միշտ ի նկատի էր ունենում ժողովրդի տնտեսական դրությունը: Այսպես Կ. Պոլսի Թոփ-գաբու հայոց թաղի նվիրակության պարտականությունը կատարելուց հետո մերժում է ընդունել թաղեցիներից նվիրական տուրքը, քանի որ նրանք չքավոր էին—ապացույց, որ դեռ եկեղեցի չունեին իրենց թաղում: Սակայն բարեպաշտ բնակիչներն իրենց սովորությունից դուրս չգալու համար գրեթե աղաչանքով տալիս են տուրքը: Մի ուրիշ հանգամանք ևս ցույց է տալիս Սիմեոնի դեպի ժողովուրդն ունեցած գթոտ վերաբերմունքը: Նվիրակները, որ հավաքում էին նաև Մայր Աթոռին կտակված տուրքերը, շատ անգամ առանց մտնելու կտակողների ժառանգների տնտեսական դրության մեջ, վարվում էին զուտ օրենքով,—Սիմեոնը նախ քննում էր մանրամասնորեն կտակ անողի ժառանգների դրությունը, թե նրանք չափահա՞ս են թե ոչ, կամ թե ինչպիսի՞ կյանք են վարում, և երբ տեսնում էր, որ նրանք կարեկցության կարոտ են, բանն առանց կաթողիկոսին հաղորդելու՝ ինքն անձամբ կտակված գումարից որոշ բաժին էր հանում նրանց[19]:

Հակոբ Ե Շամախեցի (1759—1763)

Հակոբ կաթողիկոսը յուր հայրապետության առաջին տարին **Գիլանի** և **Թավրիզի**

[13] «Ջամբռ», էջ 39 և 49:
[14] **Հ. Մ. Ղամչյան,** Հ. պատմ., Գ, էջ 821:
[15] Նույնը, էջ 829:
[16] «Դիտան», Գ, էջ 96:
[17] **Հ. Մ. Ղամչյան,** Գ, էջ 865:
[18] **«Դիտան»,** Գ, էջ 98:
[19] Նույնը, էջ հե-հէ. Գ. քհ. Աղանյան:

կողմերը նվիրակության է ուղարկում **Ա-նանիա վարդապետին**: Սա նախ նվիրակում է Թավրիզի կողմերը և ավարտելով յուր գործն անցնում է **Գիլան**: Այստեղ մեկ կողմից յուր խստաբարո բնավորության և մյուս կողմից մի քանի խռովասերների քսությունների պատճառով չի կարողանում հանգիստ կերպով վարել յուր գործը. սառաջանում է վեճ և խռովություն ժողովրդյան մեջ, վեճ նաև նվիրակի ու ժողովրդի միջև: Մահասարական թղթեր են հասնում կաթուղիկոսին՝ հակասական բողոքներով: Կաթուղիկոսը հորդորական թղթեր է գրում ժողովրդին խաղաղացնելու համար, միևնույն ժամանակ գրում է, որ Անանիա վարդապետը դուրս գա այնտեղից և գնա յուր նվիրակության այլ վիճակները. և նա ճանապարհվում է «ի խոր Պարսկաստուն»: Այնուհետև էլ ժողովրդի մեջ ծագած վեճը շարունակվում է. այդ բանին վերջ տալու համար ուղարկում է կաթուղիկոսը **Գիլան Երզնկայեցի Պետրոս** վարդապետին՝ նվիրակության և առաջնորդության համար[20]:

Վանի նվիրակ է հիշվում **Բաղդասար** վարդապետ Հակոբ կաթուղիկոսի որով[21]:

III

Նվիրակությունը Սիմեոն Երևանցի կաթուղիկոսի օրով (1763—1780)

Սիմեոն կաթուղիկոսի ժամանակը շատ փոթորկալի էր: Հայ ժողովրդին բռնակալորեն իշխող խաները՝ բեգերն ամեն կերպ աշխատում էին օգտվել հայերից՝ նրանց սրբավայրերը դարձնելով իրենց ապրուստի աղբյուր: Նրանք մեծ ու համով պատառների տիրանալու համար հարձակվում էին միմյանց վրա, զենք բանեցնում իրար դեմ, և դրանց կռիվները թողնում էին ավերմունքի, թշվառության հետքեր հայ ազգաբնակության վրա: Հայ ժողովուրդը ծանր կացության մեջ էր թե տնտեսապես և թե հոգեպես, զուրկ ամենայն մխիթարությունից: Անհանգիստ են նաև կաթոլիկ պրոպագանդիստները, ճիզվիթ կրոնավորները, որոնք մեծ եռանդով գործում էին հայերի մեջ՝ «ոմանց նենգութեամբ, ոմանց բռնութեամբ և ոմանց աՀ ու դողի զօրութեամբ»: Սակայն պապական այս գործիչների դեմ, որպես մի արթուն հովիվ հանդես է գալիս Սիմեոն կաթուղիկոսը իր եռանդով, իր ոգևորությամբ,—նա հանդես է գալիս թշվառ ժողովրդի ցավերին մի փոքր թեթևություն տալու, մխիթարելու:

Սիմեոն կաթուղիկոսի անձնավորությունը կանգնած է մեր առաջ յուր ամբողջ մեծությամբ: Մարդ միմիայն զարմանալ կարող է այդ անձի վրա, երբ ծանոթանում է նրա պատմության: Այդ խառը ժամանակներում ինչեր ասես, որ նա չարավ. նրա կատարած գործերից բավական է հիշել միայն այն, որ պարսից խավար տիրապետության ներքո նա կարողացավ ս. Էջմիածնում տպարան և թղթի գործարան հիմնել, շինարարությամբ զբաղվել թե Էջմիածնում և թե վիճակներում: Սակայն ի՞նչ միջոցներով էր ձեռնարկում երջանկահիշատակ կաթուղիկոսն այնչափ շինությունները, և ո՞ւմ աջակցությամբ կարողանում էր նա տանել յուր ծանր պաշտոնը:—Միջոցները նվիրակության արդյունքներն էին, իսկ աջակիցները նվիրակները:

Նվիրակությունը Սիմեոն կաթուղիկոսի օրով ավելի առաջ է գնում. նվիրակությունը նա յուր առանձին հոգածության՝ առարկան է դարձնում՝ քաջ հոսկանալով եկեղեցական այս գործոնի ույժը: Այս իսկ պատճառով նա յուր կաթուղիկոսության 17 տարիներում անդադար ուղարկում է նվիրակներ Հայաստանի զանազան կողմերը և մեր երկրի սահմաններից դուրս: Գնում են եպիսկոպոս, վարդապետ նվիրակները մյուռոն և հայրապետական կոնդակներ վերցնելով իրենց հետ, գնում են մաքառելու «աղթարմայության»[22] դեմ, ժողովրդի սրտերը միացնելու ս. Էջմիածնի հետ ու նրանց կամավոր նվերները հավաքելու Մայր Աթոռի համար: Սիմեոն կաթուղիկոսի «Հիշատակարանը» («Դիւան» Գ.) բաց է անում մեր առաջ այդպիսի նվիրակների դեմքերը: Կարդալով այդ «Հիշատակարանը» մարդ ակամայից մտքով հետ է սլանում և կարծես յուր աչքով տեսնում Մայր Աթոռ մտնող՝ և ելնող այն բազմաթիվ մարդկանց, որոնք թղթեր են բերում և թղթեր տանում հեռու-հեռու աշխարհներ: Սիմեոնը միշտ կապված է թղթակցություններով նվիրակների հետ, շարունակ հրահանգներ է ուղարկում, նրանց գործերին վերահասու լինում, հրկում նրանց արդյունքների վրա: Փոփոխվում են անդադար նվիրակները, մեկին հաջորդում է մյուսը, լավը վարձատրվում է, վատը պատժվում: Սիմեոն կաթուղիկոսը 1763 թ. բարձրանալով հայրապետական Աթոռը հենց սկզբից նեթ ուշք է դարձնում նվիրակության վրա և մայիսի 19-ին ս. Էջ-

[20] Նույնը, էջ 49—50:

[21] Նույնը, էջ 280:

[22] Աղթարմայություն=կաթոլիկություն. աղթարմա կոչվում էր այն անձը, որ հայերին մոլորեցնում, կաթոլիկ էր դարձնում: Կար. Կոստանյան աղթարմա և կախարդ բառերը նույնանիշ է ընդունում;—«Թովմա Մեծոփ. Ցիշ.» էջ 21;

միածնից նվիրակության պաշտոնով դուրս l. ուղարկում յուր նախորդ Հակոբ կաթուղիկոսից նշանակված հետևյալ չորս անձանց —**Հարություն վարդապետ Բասենցուն՝ Բյուզանդիա** կամ **Կ. Պոլիս, Մատթեոս վրդ. Բյուզանդացուն՝ Գաղատիա, Գեորգ վրդ. Ղափանցուն՝ Ռումելի** և **Ղրիմի** ու **Կաֆայի** կողմերը և **Պետրոս վրդ. Գյանճեցուն՝ Կարին:** Սրանց հետ ճանապարհ է ընկնում և մահասարատար (=թուղթ տանող, հանրագիր տանող) Գրիգոր վարդապետը, որը Պոլսի նվիրակի հետ պետք է գնար Պոլիս: Երբ այդ նվիրակները Մայր Աթոռից ելնում են, ճանապարհների վատության պատճառով բավական ժամանակ մնում են Կարնում և հետո երեքը շարունակում են իրենց ճանապարհը՝ Կարնի նվիրակին թողնելով յուր նշանակված տեղում: Ճանապարհի մի վտանգավոր տեղում Պոլսի նվիրակի սպասավորը յուր բեռով հետ է մնում և մոտակա անտառից ելած ավազակների հարձակման ենթարկվում: Սպասավորը ձիուց իջնում է և մի կերպ փախչում ու հասնում նարավանին: Կարավանի մեջ եղած քաջ մարդկանցից շատերը ավազակներին հետամուտ են լինում, բայց գտնել չեն կարողանում: Ավազակները ձիուց առնում են բեռը, որի մեջ են լինում սուրբ մյուռոնը, նվիրական թուղթը և այլ թղթեր ու գրքեր, որոնք բոլորն էլ պատառոտվում են, իսկ մյուռոնը ծախում են ձեթի տեղ: **Հարություն վարդապետը** ձեռնունայն **Թոխաթ** է հասնում և այստեղից մի յալագին թուղթ գրում կաթուղիկոսին՝ պատմելով յուր գլխովն անցածը: Նա խնդրում է նորեն գրել և ուղարկել նվիրական կոնդակ և այլ հանձնարարական թղթեր, որովհետև յուր մոտն եղածներն արդեն անհետ կորած էին:

Պոլսի և նրա շրջակա վիճակների համար ուղարկվում էր մի նվիրակ. բայց որովհետև Սիմեոն կաթուղիկոսը իր նվիրակության ժամանակ (1756) անձամբ զգացել էր դրա դժվարությունը և որ գլխավորն է մի քանի տարվա ընթացքում հազիվ էր կարողացել մի նվիրական վիճակ ավարտել, ուստի հարկավոր է համարում Պոլսո նվիրական վիճակն բաժանել երկու մասի—Պոլսի և շրջակա վիճակների[23]:

Այնուհետև 1767 թվականին Սիմեոն կաթուղիկոսը Պոլիս է ուղարկում իբրև նվիրակ **Զաքարիա վարդապետին,** որն առաջ Եվդոկիո նվիրակ էր: Սրան պատվիրվում է նվիրակության պաշտոնին միացնել նաև մութավելիի կամ վեքիլության պաշտոնը[24], որ վարում էր Բարսեղ վարդապետը, որովհետև այսուհետև վերացվում էր մութավելիության պաշտոնը՝ Պոլսում: Սիմեոն Երևանցին, միաժամանակ թուղթ է գրում նաև Պոլսի նախկին նվիրակ Հարություն վարդապետին և խիստ հանդիմանում է նրան, որ շատ սառն է վերաբերվում թե դեպի Մայր Աթոռը և թե դեպի իրեն—կաթուղիկոսը: Նվիրակ Հարություն վարդապետը Մայր Աթոռին վերաբերյալ՝ ինչ որ լիներ, ինչ էլ պատահեր, պարտավոր էր, որպես նվիրակ, նրա շահերը պաշտպանել և հոգալ նրա մասին ու հաղորդել կաթուղիկոսին, բայց նա յուր անփութության պատճառով ոչ միայն չէր հոգում ոչ մի բանի, այլ մինչև անգամ սուկ գրությամբ իմաց տալն էլ ծանրություն էր համարում[25]: Իսկ թե ինչ եղավ այդ նվիրակի վերջը, Սիմեոն կաթուղիկոսի «Հիշատակարանից» չենք իմանում, բայց ծանոթությանց վերջը Գյուտ քահանան այսպես է գրում. «Այս Հարություն վարդապետը (Բասենցի) Կ. Պոլսի և շրջակայից նվիրակության գործն ավարտելուց հետո Պրուսայի առաջնորդ կարգվեցավ. այնտեղից գնաց Վենետիկ և Տրիեստ, տանելով իր հետ Մայր Աթոռի արդյունքները, ուստի Սիմեոն կաթողիկոսը մի թղթով դիմեց տեղական կառավարության, որի համաձայն վերջինս ստանալով նրանից աթոռապատկան բոլոր դրամները ս. Էջմիածին ուղարկեց: Իսկ Հարություն վարդապետին Սիմեոն Երևանցին զրկելով եպիսկոպոսական պատվից՝ հավասարեց աբեղաներին»:

Այժմ դառնանք Կ. Պոլսո նոր նվիրակին: Սա արդեն յուր նախորդի հակապատկերն է, ազնիվ, աչալուրջ, Մայր Աթոռի շահերի ջերմաջերմ պաշտպան, հայոց եկեղեցու նախանձախնդիր սպասավոր, այնպես որ ուրչափ տխրալի եղավ առաջին նվիրակի վախճանը, նույնչափ ավելի ուրախալի եղավ սրա վերջը: Նա թե իբրև նվիրակ և թե իբրև հայ մարդ այն աստիճանի սիրելի դարձավ ժողովրդին, որ Գրիգոր պատրիարք Բասմաճյանի (1773) հրաժարվելուց հետո նրան են ընտրում պատրիարք: Ահա այս առթիվ է, որ Սիմեոն կաթուղիկոսը մի ոգեշունչ կոնդակ է ուղղում պոլսեցոց[26], որի մեջ պարզ արտացոլում է ս. Էջմիածնի քաջ ու ազնիվ նվիրակի պատկերը, նվիրակ, որը եղավ ապա նշանավոր Զաքարիա պատրիարք Կաղզվանցին (1773—1780):

---

[23] «Դիտան», Գ, էջ 248. «Զամբռ», էջ 45:

[24] Մութավելի—վեքիլ—կաթուղիկոսի ներկայացուցիչը տնտեսականի վերաբերյալ խնդիրների: Մութավելիի պաշտոնը վեքիլությունից քիչ բարձր էր, մեծ: Այդ պաշտոնները հանձնվում էին և հոգևորականներին և աշխարհականներին անխտիր:

[25] «Դիտան», Գ, էջ 748:

[26] Նույնը, էջ 749:

Այդ կոնդակից իմանում ենք, որ Զաքարիան Պոլսում իբրև նվիրակ 7 տարի է մնում, ապա ընտրվում պատրիարք յուր անխոնջ գործունեության շնորհիվ: Սիմեոն կաթուղիկոսն ինքն ևս համաձայնում է նրան պատրիարքի աստիճանին բարձրացնել, ուստի և գրում է յուր կոնդակը ի հաստատություն և ուղարկում նրան «զփիլոն մի պատուական և զմատանի մի ազնիւ» ի վարձատրություն յուր գործունեության: Կոնդակի մեջ կաթուղիկոսը հիշում է մի քանի կանոններ, որ ինչպես պետք է վարվի պատրիարքն առհասարակ: Այդ կանոններից մեզ համար ուշագրավ է այն, որ Սիմեոն կաթուղիկոսը լավ է համարում ունենալ հավատացյալ, պարկեշտ վարք ու բարքի տեր հոգևորական, և առաջնորդ, քան ուսյալ թերահավատ և սնապարծ հոգևորական. «ի յարտաքին վիճակսն զայնպիսի անձինս կարգիցէ առաջնորդ, որք փորձեալք իցեն ի հաւատս և ի կրօնս ըստ Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ, և ի վարս պարկեշտս, զի լաւ է տգէտն, որ ըստ հաւատոյն ուղիղ իցէ և ըստ վարուցն պարկեշտ, քան զիմաստունն սնապարծ, որ ըստ հաւատոյն թերի իցէ և ըստ վարուցն անպարկեշտ»[27]: Վեցերորդ և վերջին կանոնն էլ այն է, որ պատրիարքը որպես Էջմիածնի կաթուղիկոսի հրամանակատար՝ հնազանդ պետք է լինի նրան և սուրբ Աթոռի նվիրակներին թե՛ քաղաքում և թե՛ արտաքին վիճակներում հարգանքով վերաբերվի և ժողովրդին սեր և հնազանդություն քարոզելով՝ հորդորե, որ նվիրակին առատ տուրք տրվի[28]:

Վերևում հիշեցնինք, որ Զաքարիա վարդապետ եղել էր առաջ **Եվդոկիո** (Թոխաթ) նվիրակ և այնտեղից ուղարկել Էջմիածին 5 հատ լավ «լօք ուղտեր»: Նա Էջմիածին վերադառնում է 1764 թ. մարտի 4-ին, վերջացնելով յուր նվիրակությունը[29]:

(Շարունակելի)

---

[27] Նույնը, Դ, էջ 754:

[28] Նույնը:

[29] Նույնը, Գ, էջ 35, 56, 67:



ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՊԱՈՒԼՈՍ ՄԱՐ ԳՐԻԳՈՐԻՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի հրավերով ս. թ. մարտի 9—12-ը ուխտավորաբար Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելեց մալաբար քույր եկեղեցու բարձրաստիճան հոգևորական տ. Պաուլոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտը:

Մեծարգո հյուրը Դելիի միտրոպոլիտն է և Քոթայամի աստվածաբանական ճեմարանի տեսուչ ու դասախոս, ինչպես նաև մալաբար եկեղեցու մշտական ներկայացուցիչը Ժնևում՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մոտ:

Մարտի 9-ին Երևանի օդանավակայանում, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, միտրոպոլիտ տ. Պաուլոս Մար Գրիգորիոսին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, Սարգիս սրկ. Սարգսյանը և Վազգեն սրկ. Ասատուրյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո տ. Պաուլոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտն առաջնորդվեց Վեհարան, ուր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը սիրով ողջունեց և բարի գալուստ մաղթեց նրան:

Այնուհետև, սիրալիր և եղբայրական մթնոլորտում, Հայոց Հայրապետի և քույր եկեղեցու բարձրապատիվ ներկայացուցչի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց հայ և մալաբար եկեղեցիներին հետաքրքրող մի շարք եկեղեցական հարցերի, ինչպես նաև Ժնևում՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդում երկու եկեղեցիների հետագա է՛լ ավելի ակտիվ և արդյունավետ գործակցության մասին:

Նախապես կազմված ծրագրի համաձայն, տ. Պաուլոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտը Մայր Աթոռում, հոգևոր ճեմարանի հարկի տակ, մարտի 10-ին և 11-ին, հինգշաբթի և ուրբաթ օրերին, տվեց բովանդակալից դասախոսություններ, որոնց ներկա եղան տ. Կոմիտաս, տ. Գևորգ, տ. Նարեկ սրբազան առաջնորդները, տ. Հուսիկ, տ. Արսեն եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, ներքին թեմերի քահանայից դասը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը:

Դասախոսությունների թեմաներն էին՝

ա. «Էկումենիկ շարժումը և արևելյան ուղղափառ եկեղեցիների մասնակցությունն այդ շարժմանը».

բ. «Արևելյան ուղղափառ եկեղեցիների դիրքը եկեղեցիների միության հարցում մեր օրերին».

գ. «Ավանդության և աստվածաբանության դերը միության հարցում»:

Վերջին դասախոսությանը ներկա գտնվեց նաև Վեհափառ Հայրապետը, Որն Իր ուրախությունը հայտնեց միտրոպոլիտ Պաուլոս Մար Գրիգորիոսի՝ Մայր Աթոռ այցելության առիթով և Իր հայրապետական բարձր գնահատությանն արժանացրեց նրա տված շինիչ և հոգեշահ դասախոսությունները: Հայոց Հայրապետն Իր գնահատանքի խոսքի մեջ շեշտեց նաև բարձրաստիճան հյուր սրբազանի հետագա այցելությունների և դասախոսությունների անհրաժեշտությունը Մայր Աթոռում:

Հարգելի դասախոսն իր երեք ելույթների ավարտին հանգամանորեն և սիրալիր պատասխանեց ներկաներին հետաքրքրող բազում հարցերի:

Միտրոպոլիտ տ. Պաուլոս Մար Գրիգորիոսը ներկա եղավ նաև Մայր տաճարում Մեծ պահոց հնկման արարողություններին

և աղոթեց Մայր Աթոռի միաբանության անդամների հետ միասին:

Հարգելի հյուրն իր ազատ ժամերին այցելեց Հին և Նոր Վեհարանների թանգարանային բաժինները, մայրավանքի շրջապատում գտնվող հաստատությունները և Երևանում ներկա եղավ «Հայհամերգ»-ի մեծ դահլիճում հայկական սլարի անսամբլի համերգին:

Մարտի 11-ին, ուրբաթ օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հարգելի հյուրի, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որին ներկա էին նաև տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Վահան, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ սրբազանները, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյանը, Սարգիս և Վազգեն սարկավագները:

Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետի և բարձրաստիճան հյուրի միջև փոխանակվեցին ողջույնի և հրաժեշտի ջերմ խոսքեր:

Ճաշից հետո հարգելի հյուրը կրկին անգամ մասնավոր տեսակցություն ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ և առաջարկեց, որ Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ և հրավերով, եթե հնարավոր է, հաջորդ տարի Մայր Աթոռում գումարվի արևելյան ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցական ժողով:

Մարտի 12-ին, շաբաթ օրը, առավոտյան, բարձրաշնորհ տ. Պաուլոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտը հրաժեշտ տվեց Հայոց Հայրապետին և լավագույն ու շնորհակալ տպավորություններով մեկնեց Մոսկվա՝ տ. Արսեն եպիսկոպոսի հետ մասնակցելու Խաղաղության համակրոնական համագումարի միջազգային նախապատրաստական կոմիտեի հերթական հանդիպմանը:





Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԱԲՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Քրիստոնյա արաբները, որոնց ճակատագիրը քիչ ծանոթ է գիտական հասարակությանը, երկարատև պատմություն ունեն և սերտ կապի մեջ են եղել արևելյան քրիստոնյա ժողովուրդների, ընդ որում և հայերի հետ:

Քրիստոնեությունը ներթափանցել էր Արաբիա դեռևս Գ—Դ դարերում, մանավանդ ասորի քարոզիչների միջոցով: Ե—Զ դարերում Արաբիայում իրար հետ մրցում էին ասորի միաբնակ, երկաբնակ և նեստորական քարոզիչները[1], սակայն նրանցից ոչ մեկը չկարողացավ լրիվ հաջողության հասնել:

Հայտնի է, որ 356 թվականին Կոստանդ կայսրը պատվիրակություն ուղարկեց Եմեն՝ արիոսական Թեոփիլոս Ինդոսի գլխավորությամբ[2], որն Ադենում և Հիմյարի երկրում եկեղեցիներ կառուցեց: Մոտավորապես 500 թվականին Եմենի Նաջրան քաղաքի բնակչությունը քրիստոնեություն ընդունեց և դրանից հետո ունեցավ իր եպիսկոպոսները: Սակայն քրիստոնեության հետ Եմենում մրցում էր մովսիսական (հրեական) կրոնը, և ահա Հիմյարի Զու Նուվաս թագավորը, մովսիսականության հարելով, հալածանք սկսեց քրիստոնեից դեմ, որի հետևանքով 525 թվականին քրիստոնյա եթովպացիք հարձակվեցին ու գրավեցին Եմենը:

Իրենց հիսնամյա (525—575) տիրապետության շրջանում եթովպացիք ջանքեր թափեցին Եմենում քրիստոնեությունը տարածելու: Եթովպիայի թագավորության (Աքսում) կողմից նշանակված կառավարիչ Աբրահաս Սանա քաղաքում կառուցեց մի փառավոր եկեղեցի, նպատակ ունենալով այն դարձնել ամբողջ Արաբիայի համար նոր սրբավայր և մրցակից Մեքքայի հայտնի մահմեդական ուխտավայրի: Սակայն եթովպացոց ջանքերը քիչ արդյունք տվեցին, քանզի 575 թվականին տեղական դժգոհ տարրերի օգնությամբ Սասանյան Իրանը նվաճեց Եմենը:

Արաբիայում քարոզչական աշխույժ գործունեություն ծավալեցին ասորի նեստորականները, որոնք քրիստոնեությունը տարածեցին Հիրայի (Միջագետքի հարավում) արաբական Տաննուխ ցեղի մեջ: Սակայն իշխող Լախմ տոհմի վերնախավը, կապված լինելով Սասանյան արքունիքի հետ, միշտ էլ պաշտոնապես մնում էր հեթանոս: Հիրայի արաբաց եպիսկոպոսները հիշվում են ամբողջ Ե—Զ դարերում նեստորական եկե-

---

[1] Aziz S. Atiya, A History of Eastern christianity, London, 1969, p. 258—259.

[2] Ph. Hitti, History of the Arabs, London, 1946, p. 61.

ղեցական ժողովներում: Հիրան սերտորեն կապված էր Եմենի հետ և հետաքրքրական է նշել, որ Հիմյարի թագավոր Զու Նուվասի վերոհիշյալ հալածանքի հարցը քննարկվել է Հիրայի Մունզիր (Մունդար)[3] իշխանի մոտ: Զ դարի վերջին քրիստոնեությունը մուտք գործեց նաև Լախմ իշխանների մոտ: Է դարի սկզբին Նուման Գ իշխանն ընդունեց քրիստոնեությունը և մկրտվեց նեստորական ծեսով, սակայն Սասանյաններն այդ բանը չներեցին նրան:

Արաբների մեջ քրիստոնեությունը տարածելու հարցում նեստորականների հետ մրցում էին միաբնակ ասորիները: Նրանք հաջողություն ունեցան Ասորիքի կողմերում, ուր արդեն Դ—Ե դարերում կային սարակինոսյան (արաբական) եպիսկոպոսական վիճակներ: Դամասկոսից հարավ-արևելք հաստատված էր արաբական Ղասսան մեծ ցեղը[4], որն ընդունել էր քրիստոնեությունը և կապված էր Անտիոքի միաբնակ պատրիարքության հետ[5]: Երբ 563 թվականին Ղասսանի իշխան (հուն. ֆիլարխ) Հարիսը Կ. Պոլիս այցելեց, Հուստինիանոս Ա կայսրից խնդրեց, որ Եդեսիայի ասորի եպիսկոպոս Հակոբ Բարադեոսը լինի նաև արաբաց եպիսկոպոս[6]: Նրա հաջորդ Մունզիրը նույնպես միաբնակության ջերմ պաշտպան էր: Այս հողի վրա հարաբերությունները լարվեցին Ղասսանի և Բյուզանդիայի միջև, մանավանդ որ այդ ժամանակ հայերը, ասորիները և նրանց ենթակա քրիստոնյա արաբները մի ընդհանուր ճակատ էին կազմել երկաբնակ ուսմունքը պարտադրելու՝ Բյուզանդիայի ջանքերը ի դերև հանելու համար: Քրիստոնյա արաբները ապրում էին հիմնականում Բյուզանդական Արաբիա (Բոստրա կենտրոնով) և մասամբ Փյունիկյան Լիբանան (Դամասկոս կենտրոնով) նահանգներում:

Մահմեդականության երևան գալու նախօրեին քրիստոնեությունը տարածված էր արաբական բազմաթիվ ցեղերի մեջ: Բացի Եմենի (Նաջրան) Հիրայի և Ղասսանի քրիստոնյա արաբներից քրիստոնեություն ընդունել էին նաև Բաքր, Տաղլիբ և այլ ցեղեր Արաբիայի հյուսիսում: Սակայն Հիջազում նոր կրոնը հաջողություն չունեցավ:

Առաջին խալիֆաները արաբ քրիստոնյաների նկատմամբ ավելի խիստ էին, քան օտար քրիստոնյաների: Օմար խալիֆան Միջագետք տեղափոխեց Եմենի քրիստոնյաներին՝ ելնելով այն սկզբունքից, որ Արաբիայում բացի մահմեդականությունից այլ կրոն չպետք է գոյություն ունենար: Այսուհանդերձ նույնիսկ Թ դարում Եմենում հիշվում է օրինակ Մար Պետրոս եպիսկոպոսը: Մուավիայի ժամանակ (661—680) վերաբերմունքը մեղմ էր քրիստոնյա արաբների նկատմամբ: Նրա կանանցից մեկը քրիստոնյա էր Քալբ ցեղից, իսկ Տաղլիբ ցեղին պատկանող հռչակավոր Ախթալ քրիստոնյա բանաստեղծն արքունիք էր մտնում խաչը վզին:

Սակայն հետագայում Օմայան և մանավանդ Աբբասյան խալիֆաները դաժան վերաբերվեցին քրիստոնյա արաբներին: Թ դարից հետո զտարյուն արաբ քրիստոնյաներն այլևս չեն հիշվում, այլ նրանք միաձուլվում են արաբացած ասորիների ու ղրպտիների (և այլոց) զանգվածի մեջ:

Անհրաժեշտ է հատկապես ընդգծել, որ այն զանգվածը, որն ամբողջ միջնադարում և այսօր էլ ծանոթ է «քրիստոնյա արաբ» անվամբ, ըստ էության բաղկացած է Վերին Միջագետքի, Ասորիքի, Պաղեստինի ու Եգիպտոսի արաբացած քրիստոնյա ազգաբնակչությունից: Դրանք են՝ արաբացած ասորի նեստորականները, հակոբիկ ասորիները, հունադավան մելքիտները, մարոնիները և ղպտիները:

Արաբական նվաճումից հետո ասորիները արաբացման սպառնալիքի առջև գտնվեցին: Եթե նախկինում միաբնակ (հակոբիկ) ասորիները և նեստորականներն իրենց էին ենթարկել քրիստոնյա արաբներին՝ ասորերենը մասամբ տարածելով նրանց մեջ, ապա այժմ նվաճումից հազիվ մեկ դար անց ասորիները արագորեն յուրացնում էին արաբերենը, այնքան, որ Թ դարում արդեն ասորերենի հետ մեկտեղ արաբերենն էլ օգտագործվում էին մատենագրության մեջ:

Ընդհանուր անունով ասորի կոչված զանգվածը Ը—Թ դարերում (երբ արաբացումը արդեն նկատելի էր) չորս եկեղեցական համայնքներից էր բաղկացած՝ նեստորական, հակոբիկ, ասորի, հունադավան (մելքիտ) և մարոնի:

Դեռևս Ե դարից գոյություն ունեցող նեստորական, այսինքն քաղդեական (արաբ.

[3] Մունզիր (Մունդար) անունով իշխաններ կային թե՛ Լախմիների, թե՛ Ղասսանիների մոտ: Սրանք պատմունդարոս ձևով հիշվում են բյուզանդացի պատմիչների մոտ: Պրոկոպիոս Կեսարացի, թարգմ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 47—49, 77—78..:

[4] Hitti, History of the Arabs, p. 62—64.

[5] Н. В. Пигулевская, Арабы у границ Византии и Ирана в IV—VI вв. М.—Л., 1964, стр. 180—214.

[6] Hitti, History of the Arabs, p. 79.

[7] Անդ, p. 61.

քիլդանի)[8] եկեղեցին Օմայանների և մանավանդ Աբբասյանների օրոք կարողացավ իր համար տանելի դիրք ստեղծել: Մծբինի, Ջունդիշապուրի նեստորական դպրոցները շարունակեցին իրենց գործունեությունը խալիֆայության տալով գրագիրներ, պաշտոնյաներ, բժիշկներ, թարգմանիչներ և այլն: Աբբասյանների օրոք նեստորական պատրիարք-կաթողիկոսը (արաբ. ջաթլիկ) տեղափոխվեց Բաղդադ[9], և նրա ընտրությունը հաստատում էր անձամբ խալիֆան: Ըստ էության նա ավելի բարձր հեղինակություն ուներ, քան հակոբիկ ասորիների և հունադավան մելքիտների պատրիարքները: Թ դարում նեստորականները հունարենից արաբերեն թարգմանական մեծ շարժման ղեկավարներն էին՝ հելլեն մշակույթը ծանոթացնելով արաբներին: Բժիշկ փիլիսոփա Հունայն իբն Իսհակը և ուրիշներ իրենց կատարած թարգմանություններով հեղաշրջեցին արաբական միտքը: Մյուս ասորիների նման նեստորականները ևս Թ դարից արդեն սկսել էին արաբերենը օգտագործել որպես խոսակցական ու գրական լեզու:

Հայ եկեղեցին նեստորականների հետ հաճախ լարված հարաբերության մեջ է եղել: Նեստորական եկեղեցին ամեն կերպ ձգտում էր իր առաջնությունը պարտադրել և թույլ չէր տալիս, որ մյուս եկեղեցիների հոգևոր պետերը որևէ հեղինակություն վայելեն խալիֆայության մեջ:

Սակայն ասորի (արաբ. սուրիանի) անունը միջին դարերում տրվում էր հատկապես հակոբիկ ասորիներին[10]: Արաբական նվաճումից հետո սրանք աշխուժացան, քանի որ այլևս չկար Բյուզանդիայի ճնշումը, և կարող էին մրցել թե՛ նեստորականների, թե՛ հունադավան մելքիտների հետ:

Անտիոքի միաբնակ պատրիարքները նեստորականների նման ձգտում էին տեղափոխվել Բաղդադ, բայց վերջիններիս թելադրանքով Աբբասյան խալիֆաներն այդ բանը թույլ չտվեցին նրանց: Այսուհանդերձ հակոբիկ ասորիները եպիսկոպոսական Աթոռ ունեին Տաքրիտում՝ Բաղդադից ոչ հեռու: Անտիոքի հակոբիկ պատրիարքը ընտրվելու ժամանակ պետք է գնար Աբբասյան արքունիք իր հաստատման հրովարտակն ստանալու համար:

Այդ շրջանում Ասորիքում ու Վերին Միջագետքում ասորիները դեռ բավականին մեծ թիվ էին կազմում. օրինակ՝ Եդեսիայում և Տաքրիտում գերիշխում էին: Նրանք հաճախ վարում էին մանր պետական պաշտոններ, և կային նրանց մեջ մեծ թվով գրագիրներ, քարտուղարներ ու բժիշկներ:

Թ դարում նեստորականների հետ միասին նրանք մեծ դեր խաղացին արաբների մեջ հելլեն մշակույթը տարածելու գործում, արաբերենի թարգմանելով հին հունական մատենագրության շատ արժեքավոր երկեր:

Անտիոքի պատրիարքությունը, որը գոյություն ուներ քրիստոնեության առաջին դարերից, սերտ հարաբերության մեջ էր հայ եկեղեցու հետ: 726 թվականին Մանազկերտում կայացավ երկու եկեղեցիների հայտնի ժողովը[11], ուր դավանաբանական հարցեր լուծվեցին և միաժամանակ հայտնի դարձավ երկու եկեղեցիների դիրքորոշումը թե՛ օմայան խալիֆայության, թե՛ Բյուզանդիայի նկատմամբ: Ըստ ասորի մատենագիր Դիոնիսիոս Բարսալիբիի վկայության Մանազկերտի ժողովից հետո հայերը աստիճանաբար սկսեցին իջնել Ասորիք: Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը Ասորիք է ուղարկում 3 հայ եպիսկոպոսի նրանց հովվելու համար, իսկ ասորվոց Աթանասիոս պատրիարքը հայերին տրամադրում է մի վանք[12]:

Ը—Թ դարերում Հայաստանում այնքան շատ է եղել ասորի ազգաբնակչությունը, որ գոյացել են մի քանի եպիսկոպոսական թեմեր՝ Հանձիթ, Խլաթ, Կարնո քաղաք (Թեոդոսուպոլիս), Ծիմլաթ, Խարբերդ և այլ վայրերում[13]: Եղել է նաև Մեծ Հայքի եպիսկոպոսական վիճակը (թեմ), որին հավանաբար ենթակա էին վերոհիշյալ քաղաքների եպիսկոպոսները:

Հակոբիկ ասորիները միշտ բարյացակամ են եղել հայերի նկատմամբ: Ըստ Թովմա Արծրունու վկայության, 850—852 թվականների ապստամբության ժամանակ ձերբակալված և Միջագետք ուղարկված հայ նախարարների մի մասը մերժելով հավատափոխ լինել նահատակվեց: Դրանց մեջ էին Սմբատ սպարապետը (Խոստովանող) և նրա քույր

[8] Atiya. A History of Eastern Christianity, p. 267—273.

[9] M. Allard, Les chretiens a Bagdad, Arabica, t. IX, t. III, 1962, p. 375—388.

[10] Atiya, A History of Eastern Christianity, p. 195—199.

[11] Ե. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 173—197:

[12] A. Mingana, The Work of Dionysius Bar Salibi against the Armenians, Woodbrook Studies vol. IV, Cambridge, 1931, p. 55.

Հ. Թոփուզյան, Միջագետքի և Ասորիքի հայկական գաղթավայրերը, Հայ ժող. պատմություն, հտ. Գ, Երևան, 1977, էջ 506:

[13] Chronique de Michel le Syrien, Paris, 1963, III, (Appendice V).

Հռիփսիմե տիկինը (Արծրունյաց իշխանուհին), որոնց մարմինները հակոբիկ ասորիները «փառաւորապէս, ըստ օրինի քրիստոնէից»[14] հողին են հանձնում:

Ասորիքի կողմերում գոյություն ունեցող չորրորդ համայնքը մարոնիներն (սուրբ Մարոնի հետևորդները) էին: Է դարում, Հերակլ կայսեր ժամանակ, նրանք ընդունել էին միակամությունը: Լիբանանի լեռներն ապաստանած այս միաբանությունը ձգտում էր անկախ դառնալ Անտիոքի մելքիտ պատրիարքությունից և ահա Ը դարի սկզբին, օգտվելով այն առիթից, որ Անտիոքի մելքիտ պատրիարքը Կ. Պոլիս էր փախել, մարոնիները իրենց պատրիարք ընտրեցին Հովհան Մարոնին[15]:

Մարոնիները լավ հարաբերությունների մեջ էին նեստորականների հետ և դրա շնորհիվ նրանք Բաղդադի արքունիքի հետ իրենց հարցերը հեշտ էին լուծում: Սակայն Լիբանանի լեռնականները միշտ ձգտում էին իրենց ինքնավարությունը պահպանել, որի հետևանքով եղան մի քանի ապստամբություններ, ինչպես օրինակ 759—760 թվականների ապստամբությունը Մանսուր խալիֆայի օրոք:

Ահա այս չորս համայնքներն էլ Թ—ԺԱ դարերում դարձել էին երկլեզու, և արաբերենը նրանց համար դարձել էր մատենագրության և աստիճանաբար նաև եկեղեցական ծիսակատարության լեզու: Նեստորականների, հակոբիկների և մարոնիների եկեղեցիներում ասորերենի հետ մեկտեղ արաբերենն էր գործածվում, իսկ հունադավան մելքիտների մոտ հունարենի կողքին՝ արաբերենը:

Ասորիքի և Վերին Միջագետքի կողմերում հայկական բազմաթիվ գաղթավայրեր կային խալիֆայության տիրապետության ժամանակ և մանավանդ ԺԱ—ԺԳ դարերում: Կային նաև հայկական իշխանություններ: Այսպես սելջուկյան արշավանքների ժամանակ Եդեսիա (Ուռհա) քաղաքի կառավարիչն էր Թորոս իշխանը[16]: Եդեսիայում և Անտիոքում կային եպիսկոպոսական Աթոռներ: Ժ—ԺԱ դարերում երբ Անտիոքը բյուզանդական տիրապետության տակ էր գտնվում, քաղաքի կառավարիչ էին նշանակվում նաև հայ իշխաններ: Հայերը կարևոր դիրք ունեին Երուսաղեմում, ուր մեծաթիվ հայ բնակչություն կար և կար եպիսկոպոսական վիճակ, որը 311 թվականին դարձավ պատրիարքական Աթոռ[17]: Միջագետքի և Ասորիքի հայ բնակչությունը սերտ հարաբերության մեջ էր տեղի արաբախոս հակոբիկ ասորիների և այլ համայնքների հետ:

Վերին Միջագետքի և Ասորիքի քրիստոնյաներից[18] (որոնք հիմնականում ասորիներ էին) հետո երկրորդ քրիստոնյա խոշոր զանգվածը, որն արաբացավ, Եգիպտոսի ղպտիներն էին[19]:

Արաբները Եգիպտոսը նվաճեցին այն ժամանակ, երբ Ալեքսանդրիայի Աթոռի համար խիստ պայքար էր գնում ղպտի միաբնակ հոգևորականության և բյուզանդական իշխանությունների միջև: Արաբական նվաճումը անուղղակիորեն վերականգնեց միաբնակ հոգևորականության դիրքերը: Սակայն Ը դարում սկսեցին խստություններ, և ահա ղպտիները քանիցս ընդվզեցին: Բայց Մամուն խալիֆայի ժամանակ ծագած ապստամբության նվաճումից հետո խիստ թուլացան: Թ—Ժ դարերում ղպտիներն այնքան էին արաբացել, որ ասորիների նման երկլեզու էին: Ղպտերենի կողքին արաբերենը դարձել էր խոսակցական և գրական լեզու:

Ֆաթիմյանների օրոք (969—1171) Եգիպտոսի ղպտիները դեռ բավական ազդեցիկ դիրք ունեին: Կային նահանգների ղպտի կառավարիչներ և այլ պետական պաշտոնյաներ: Ֆաթիմյան Ազիզ խալիֆան ամուսնացել էր քրիստոնյա մելքիտ կնոջ հետ, որի ազդեցության շնորհիվ նրա երկու եղբայրները դարձան Աղեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքներ[20]: ԺԱ դարում ղպտի պատրիարքարանը Աղեքսանդրիայից տեղափոխվեց Կահիրե (այժմ Հին Կահիրե), ուր ընդմիշտ մնաց:

Ֆաթիմյան ժամանակաշրջանում Եգիպտոսում կար նաև բազմամարդ հայ գաղութ: Երևան եկավ հայազգի վեզիրների մի ամբողջ շարք[21], որը կարևոր դեր խաղաց երկրի քաղաքական և մշակութային կյանքում: Երբ ԺԱ դարում վեճ ծագեց հայերի

[14] Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ, 1887, էջ 208:

[15] Atiya, p. 396.

[16] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 248—252:

[17] Տ. Սաւաղանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Ա., Երուսաղեմ, 1931, էջ 509:

[18] Արաբախոս քրիստոնյաներ կային նաև Սպանիայում (Անդալուս), ուր Ը—ԺԳ դարերում գոյացավ արաբախոս սպանացիների (մոզարաբ) մի ստվար զանգված: Դեռևս Ը դարում մոզարաբներն այնքան շատ էին, որ Աստվածաշունչը լատիներենից արաբերենի թարգմանելու պահանջ առաջացավ. Ph. Hitti, History of the Arabs, p. 543.

[19] Atiya, p. 79—84.

[20] Hitti, p. 620.

[21] Գ. Մսըրլեան, Անկանաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրե, 1947, էջ 23—36, 75—80:

և ղպտիների միջև, հայազգի վեզիր Բադր ալ-Գամալիի հրամանով Աղեքսանդրիայի պատրիարքը ժողով գումարեց, որին ներկա էր հայոց Գրիգոր արքեպիսկոպոսը, և տարակարծությունները հարթվեցին: Եգիպտոսի հայ վեզիրների մեջ բացառիկ տեղ ունի Վահրամ Պահլավունին, որը հավատարիմ էր մնացել իր քրիստոնեական կրոնին: Սրա օրոք հայերի թիվը հասել էր 30 հազարի: Կար նաև հայկական զորաբանակ, որը կարևոր դեր էր խաղում երկրի քաղաքական կյանքում:

Աբբասյան խալիֆայության թուլացումից հետո ԺԱ—ԺԳ դարերում (սելջուկյան տիրապետության ժամանակաշրջանում) արդեն գոյություն ուներ քրիստոնյա արաբների մի հսկայական զանգված, որն արաբերենը յուրացրել էր և դրա կողքին դեռ օգտագործում էր ասորերենը, ղպտերենը և հունարենը: Այս զանգվածը բավական մեծ ազդեցություն ուներ խալիֆայության երկրների տնտեսական, հասարակական, մշակութային և նույնիսկ քաղաքական կյանքում: Արաբացած ասորիներն ու ղպտիները դառնում էին նահանգների կառավարիչներ և երբեմն նույնիսկ մահմեդական տիրակալների վեզիրներ[22]:

Հայաստանը սերտ հարաբերության մեջ էր արևելքի քրիստոնյաների հետ, և Հայոց թագավորությունը (Բագրատունյաց և Կիլիկյան շրջաններում) բարոյապես զորավիգ էր քրիստոնյա արաբներին: Ներսես Շնորհալի կաթողիկոսի (1166—1173) և ասորիների պատրիարք և նշանավոր պատմիչ Միքայել Ասորու միջև սերտ հարաբերություններ կային: Վերջինս 1198 թվականին Տարսոնում ներկա եղավ Լևոն Բ Մեծագործի հանդիսավոր թագադրությանը[23]: Երբ Միքայել Ասորին պայքարի մեջ էր իր հակառակորդների հետ, Լևոն Մեծագործը զորավիգ եղավ նրան[24]:

ԺԳ դարում քրիստոնյա արաբների տարբեր համայնքները դեռևս կարևոր դեր էին կատարում արևելքի երկրներում: Անտիոքի հակոբիկ պատրիարքությանը դեռ ենթակա էին քսան մետրոպոլիտություններ և հարյուրի չափ եպիսկոպոսություններ: Մոնղոլ զորավար Հուլաղուի Բաղդադի վրա հարձակման ժամանակ նեստորական պատրիարքը միջամտեց մեղմելու համար գիշատիչ նվաճողի վայրագությունը, սակայն ի-զուր[25]: Համենայն դեպս քաղաքի նվաճումից հետո նեստորականները կարողացան իրենց համար նպաստավոր դիրք ստեղծել: Պատրիարքը ստացավ Աբբասյան խալիֆայի պալատներից մեկը և այնտեղ հաստատվեց: Հեթանոս մոնղոլները դեռ բարյացակամ էին նեստորականների նկատմամբ, որոնց պատրիարքը որոշ հեղինակություն էր վայելում: Այդ շրջանում նպաստավոր վիճակում էին նաև մարոնիները, որոնք խաչակրաց իշխանությունների օրոք մասամբ ուժեղացան: Օրինակ Տրիպոլիի կոմսության մեջ մարոնիները մեծ թիվ էին կազմում: Նրանք աստիճանաբար նորամուծություններ էին կատարում լատինական ծեսից, մինչև որ միացան Հռոմի Աթոռին:

Խաչակրաց արշավանքների հետևանքով ստեղծված բարդ իրադրության մեջ որոշ մահմեդական երկրներում մասամբ փոխվեց վերաբերմունքը քրիստոնյա արաբների նկատմամբ: Եգիպտոսի Այյուբյան սուլթան Սալահ ալ-Դինը սկսեց նեղել հարավային Եգիպտոսի ղպտիներին, հարձակվեց Նուբիայի քրիստոնյա թագավորության վրա, Աղեքսանդրիայում բռնագրավեց ու կործանեց ս. Մարկոս եկեղեցին: Այսուհանդերձ Երուսաղեմի խաչակրաց թագավորության կործանումից հետո Սալահ ալ-Դինը փոխեց իր վերաբերմունքը. ղպտիները որոշ պաշտոններ ստացան, և հենց իր բարտուղարը ղպտի էր[26]:

Սակայն ԺԳ դարի վերջին և ԺԴ դարի սկզբին արմատապես փոխվեց քրիստոնյա արաբների դրությունը: Մամլուքների (1250—1516) իշխանության տիրանալը Եգիպտոսում և մոնղոլների մահմեդականություն ընդունելը (ԺԴ դարի սկզբին) մահացու հարված տվեցին արևելքի քրիստոնյաներին և հատկապես քրիստոնյա արաբներին:

Առաջին մամլուքների (որոնք թյուրքական ծագում ունեին) օրոք հալածանքները խիստ բնույթ ստացան: Եկեղեցիների ու վանքերի կործանումը Եգիպտոսում և ղպտիների պաշտոններից հեռացումը սովորական երևույթներ դարձան: Միայն Կահիրեի շրջակայքում 54 եկեղեցի կործանվեց: Ղպտիների մի մասը ընդունեց մահմեդականությունը: Վայրագություններն այն աստիճանի հասան, որ դրանից միջամտեցին Կ. Պոլսո հունաց պատրիարքը, Արագոնի թագավորը և Եթովպիայի նեգուսը (թագավորը)[27]:

Մամլուքները Ասորիքում կործանելուց հետո խաչակրաց վերջին իշխանություններ-

[22] **А. Мец.** Мусульманский ренесанс. М., 1966, стр. 85.

[23] **Н. В. Пигулевская,** Византия и Иран на рубеже VI и VII веков. М.—Л., 1946, стр. 33.

[24] **Atiya,** p. 202.

[25] Անդ, p. 274.

[26] **Atiya.** p. 95.

[27] **Atiya,** p. 98.

ը, սկսեցին հալածել քրիստոնյա ազգաբնակչությունը: Նրանք մզկիթի վերածեցին բազմաթիվ եկեղեցիներ Բեյրութում, Սիդոնում, Տրիպոլիում և այլ վայրերում: Հալածանքներից փախչելով մարոնիների պատրիարքը ապաստանեց լեռնային Լիբանան: Ասորիքում մեծ կորուստներ տվեցին նաև հակոբիկ ասորիները, որոնք արդեն ԺԴ դարից հետո երկրորդական դիրք ունեին քրիստոնյա արաբների միջավայրում: Ասորիքում կատարած չարագործություններից հետո մամլուքները իրենց հարվածն ուղղեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ, որն ի վերջո կործանեցին 1375 թվականին:

Մոնղոլների մահմեդական դառնալով մահացու հարված ստացան նեստորական ասորիները: Բաղդադում նրանց պատրիարքը հեռացվեց իր պալատից, և սկսեցին հալածանքները[28]: Վերջապես Լենկ Թեմուրի մահասփյուռ արշավանքներից հետո նեստորական պատրիարքը Բաղդադից տեղափոխվեց Մարաղա:

Ուշ միջնադարում (օսմանյան տիրապետության տակ) նման վերիվայրումներից հետո թեև դեռ իրենց գոյությունը շարունակում էին պահպանել խալիֆայության ժամանակներից եկող հինգ քրիստոնյա արաբական համայնքները (նեստորական, հակոբիկ, հունադավան մելքիտ, մարոնի և ղպտի), այնուհանդերձ նրանց ընդհանուր պատկերը արմատապես փոխվել էր: Ինչ վերաբերում է լեզվին, ապա արաբերենը նրանց բոլորի մոտ լրիվ իշխում էր, իսկ ասորերենն ու ղպտերենը գրեթե մեռած լեզուներ էին:

Ասպարեզից դուրս էին եկել նեստորականները և հակոբիկ ասորիները: Նեստորական պատրիարքները, որոնք Մար Շիմոն էին կոչվում (լինելով ժառանգաբար նույն ընտանիքից), ապաստան էին գտել Վանա և Ուրմիո լճերի միջև քրդաբնակ շրջանում: Իսկ հակոբիկ ասորիների պատրիարքը բաշվել էր Մարդինի մոտ գտնվող Դայր ալ-Զաֆարան վանքը[29]:

Սրա հետ մեկտեղ իրենց դիրքը և ազդեցությունը պահպանել էին հունադավան մելքիտները և Եգիպտոսի ղպտիները, իսկ մարոնիները ավելի էին ուժեղացել: Մելքիտ (հույն ուղղափառ կոչված) պատրիարքը նստում էր Դամասկոսում[30], իսկ ղպտիների պատրիարքը՝ Կահիրեում, և նրան ենթակա էր նաև Եթովպիայի պատրիարքը: Մարոնիները, որոնք դեռ խաչակրաց ժամանակ միացել էին լատին եկեղեցուն ուշ միջնադարում, առավել ևս մերձեցան և 1736 թվականին վերջնականապես ամրապնդեցին իրենց կապը Հռոմի հետ: 1584 թվականին Հռոմում բացվեց մարոնիների ճեմարան, որի սաները մշակութային աշխույժ գործունեություն ունեցան Սիրիայում և Լիբանանում: Այդ ժամանակ և հաջորդ դարերում քրիստոնյա արաբների կարևորագույն կենտրոնն էր Հալեպը[31], ուր կային բազմաթիվ դպրոցներ:

ԺԶ—ԺԷ դարերում սկսեց կաթոլիկության ներթափանցումը քրիստոնյա արաբական միջավայրը: ԺԶ դարում նեստորականների մոտ պատրիարքական ընտրության ժամանակ տեղի ունեցավ մի պառակտում, որի հետևանքով մի խումբ հարեց լատին եկեղեցուն: ԺԷ դարում ծնունդ առավ ասորի հռոմեադավան պատրիարքությունը, իսկ ԺԸ դարում կազմավորվեց հույն կաթոլիկ եկեղեցին, որն իրեն վերապահեց «մելքիտ» անունը: Եգիպտոսում ղպտի եկեղեցին կարողացավ դիմադրել, և կաթոլիկությունը քիչ տարածում ունեցավ[32]:

Հայերը սերտ հարաբերության մեջ էին մարոնիների հետ ուշ միջնադարում, երբ Ասորիքում հռոմեադավան հայերի համայնք առաջացավ: Վերջիններիս մի մասը դառնալով արաբախոս սկսեց մասնակցել մարոնիների մշակութային կյանքին[33]:

---

[28] Այդ ժամանակ և դեռ ավելի շուտ սկսեց Սպանիայի արաբախոսների (մոզարաբների) քայքայումը: Հյուսիսային Աֆրիկայում իշխող տիրակալների ներխուժումը Սպանիա թուլացրեց մոզարաբներին, սակայն նրանց վերջին հարվածը տվեց Սպանական թագավորությունը ԺԶ դարում:
Ph. Hitti, p. 555—556.

[29] Atiya, p. 23'.

[30] ԺԸ—ԺԹ դարերում Դամասկոսի պատրիարքները երկարատև պայքար մղեցին ազատվելու համար Կ. Պոլսո հունաց պատրիարքի գերիշխանությունից և միայն 1898 թվականին նրանց հաջողվեց դառնալ անկախ:
А. Крымский, История новой арабской литературы. М., 1971, стр. 316—318.

[31] А. Крымский. История..., стр. 108—119.
ԺԹ դարում քրիստոնյա արաբների կենտրոնը դարձավ Բեյրութը:

[32] ԺԹ դարում բողոքական հոսանքը որոշ չափով տարածվեց քրիստոնյա արաբների մեջ, և առաջացան փոքր համայնքներ տարբեր երկրներում:

[33] G. Graf, Geschichte der christtichen Literatur, Vatican, 1951, S. 82—93.



ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ժամանակակից Հադրութի շրջանի մեծ մասը հնում հարևան Մարտունու շրջանի հետ միասին կոչվել էր Մյուս Հաբանդ: Շրջանի լեռնային՝ Դիզափայտի արևմտյան փեշերին գտնվող գյուղերը մտնում էին Բերդաձոր, իսկ հարավայինը՝ Պարզկանք գավառի մեջ:

Հադրութի շրջանը, որ պատմության մեջ հայտնի է նաև Տիզակ-Դիզակ անուններով, արդարև թանգարան է բաց երկնքի տակ: Հատկապես շատ են վանքերն ու եկեղեցիները, հին բնակավայրերը, ամրոցներն ու աշխարհիկ շինությունները: Այստեղ գտնվող բազմաթիվ հուշարձանների վրա փորագրված հարյուրավոր արձանագրությունները գավառի պատմության էջերն են, տեղարանակ հայության անցյալի մասու և կենաց պայքարի լուռ. վկաները:

ՏՈՂԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Տող գյուղը Լեռնային Ղարաբաղի հնագույն նշանավոր գյուղերից մեկն է: Այն հիշատակվում է արաբական բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի ժամանակներից: Պատահականորեն, հողային աշխատանքների ժամանակ գտնված կավե ամանները, կարասները, գինու հնձանները, ինչպես նաև Գտչավանքը, կանգուն և ավերակ եկեղեցիները, մելիքների տները, հնագույն պարիսպները, աղբյուր-հուշարձանները ցույց են տալիս Տող գյուղի պատմահնագիտական բավականին մեծ արժեքը:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱՀԱՏԱԿ.—Այս եկեղեցին գտնվում է գյուղի հարավ-արևմտյան կողմում, հին, ընդարձակ գերեզմանոցի մեջ: Մակար եպիսկ. Բարխուդարյանցը նրա դուռն ճակատակալ քարի վրա կարդացել է. «ԹՎ. ՌՃՂԶ (1747): Յիշատակ է սուրբ ընՍտեփանոս եկեղեցուս գլուխն, որ նորոգեց մելիք Եգան և որդին մելիք Եսային: Յիշատակ է հոգոյ»[1]:

Պարզվում է, որ եկեղեցին գոյություն է ունեցել վաղուց, և մելիք Եգանն ու որդին միայն նորոգել են նրա ծածկը:

Թաղածածկ դահլիճի հորինվածքով կառուցված եկեղեցին ունի մաքուր տաշած և կոպտատաշ քարերի զուգակցված շարվածք, ընդ որում ճակատային պատերը իրականացված են կոպտատաշ, իսկ թաղի կամարները, մուտքը և լուսամուտները՝ սրբատաշ մեծ քարերից: Որմնամույթերը կառուցած են պատի շարվածքի սկզբունքով՝ արտաքին երեսները սրբատաշ քարերից, միջուկը՝ բուտոբետոնից, և նրանք են հիմնականում կրում ծածկի ծանրությունը:

Ս. Ստեփանոս Նահատակի եկեղեցին, ինչպես նշեցինք, կառուցված է կիսամշակ որձաքարից, միջնադարին բնորոշ շինարարական տեխնիկայով, իսկ շարվածքում օգտագործված բեկորները բոլորովին ուրիշ քարից են՝ կաթնագույն կրաքարից: Բեկորները հանդիսանում են ատամնավոր քիվի ու քանդակազարդ զարդագոտու հատվածներ: Անհայտ է, որ ներկայիս եկեղեցու

[1] **Մակար եպիս. Բարխուդարյանց,** Արցախ, Բաղու, 1895, էջ 77:

տեղում եղել է մի ուրիշ, ավելի հին հուշարձան, որը լրիվ քանդվել և քարերը մասամբ օգտագործվել են նորը կառուցելու ժամանակ: Նման օրինակներ շատ կան Ղարաբաղի 16—18-րդ դարերի ճարտարապետության մեջ, երբ 14—15-րդ դարերի արհավիրքներից վնասված, քանդված տաճարների, եկեղեցիների տեղում շինում էին նորերը:

Գերեզմանոցի մյուս ծայրին գտնվում է մի այլ եկեղեցի, որը, ճիշտ է, ուշ շրջանին է վերաբերում, սակայն իր վրա պահպանում է հնի հետքերը: Դրա վկայություն կարելի է համարել եկեղեցու ճակատային մասում տեղադրված խաչքարը, որի վրա փորագրված է «Խաչս սբ. Վարդան»: Ըստ երևույթին դա առանձին խաչքար է եղել, որ եկեղեցու շինարարները դրել են պատի մեջ, ճակատի կողմում, այնպես, որ թվում է, թե եկեղեցին սուրբ Վարդան անվամբ էլ կոչվել է:

Ինչպես հայտնի է, Ավարայրի ճակատամարտի մեծ նահատակ Վարդան զորավարի անունը ժողովրդի շուրթերին դարեդար մնաց, և նրա հիշատակին խաչքարեր ու մատուռներ կանգնեցրին Հայաստանի տարբեր շրջաններում:

Հադրութի շրջանի Թեզխարաբի եկեղեցին ևս իր վրա կրում է Վարդանի հիշատակը: Այդ եկեղեցում, իբրև սրբություն, պահվում է սևագույն մի լեռ քար, որն իբրև թե ներկված է սուրբ Վարդանի արյամբ[2]: Վարդան զորավարի անունով մեկ ուրիշ մատուռի ավերակները գտնվում են Մարտունու շրջանի Մեջքապատ-Մուշկապատ գյուղում: Այս մատուռը, ականատեսների վկայությամբ, ամբողջ Վարանդա գավառի ամենահայտնի ուխտավայրերից մեկն է եղել: Ս. Ջալալյանցն այդ մասին գրել է. «Մեջքապատցիք ունեն զքարաշէն եկեղեցի, առ որով է մատուռն սուրբ Վարդան նահատակի, ուր յաճախեն ուխտաւորք բազումք»[3]:

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ գտնվում է գյուղի կենտրոնում և այժմ էլ բարվոք վիճակում է:

Համաչափություններով ու կառուցապատման տեխնիկայով նման է ս. Ստեփանոս Նահատակի եկեղեցուն, բայց հատակագծային և ծավալային հորինվածքով ավելի շատ նման է վաղ շրջանի բազիլիկներին: Այդ տեսակետից էլ սուրբ Հովհաննեսի եկեղեցին մեծ հետաքրքրություն է ներկայացնում պատմա-ճարտարապետական առումով:

Եկեղեցին կառուցված է խիստ թեքադիր տեղանքի վրա: Նրա հյուսիսային պատն իր բարձրության կեսի չափով խրված է ժայռի մեջ, իսկ հարավային պատը լրիվ բաց է, նույնիսկ երևում են հիմքերը: Այս



Տող. Ս. Ստեփանոս նահատակ եկեղեցին արևմուտքից

պատճառով հյուսիսային պատը բոլորովին բացվածք չունի, իսկ հարավայինն ունի մի փոքրիկ լուսամուտ: Եկեղեցու միակ մուտքը, որը արևմտյան կողմից է, բացվում է դեպի պարսպապատ, գեղեցիկ բակ:

Բակի հարավ-արևմտյան անկյունում շրջանաձև աշտարակ է, որտեղից երևում է գյուղի համայնապատկերը, շրջակա լեռներն ու այգիները, գետակներն ու դաշտերը:

Եկեղեցու (որի երկարությունը 21,7 մետրը է, լայնությունը՝ 12,9) ծածկը հենվում է չորս մույթերի վրա: Կառուցված է տեղական և Կավաք կոչվող քարահանքերից բերված քարերով: Արևմտյան պատն արտաքին կողմից սրբատաշ է, իսկ մյուս պատերը՝ կիսամշակ քարերից: Երկթեք տանիքը ծածկված է մաքուր տաշած քարե սալերով:

Եկեղեցին ունի քարե խաչկալ, որի վրա փորագրված է ընդարձակ արձանագրություն: Դրա վերծանումից պարզվում է, որ խաչկալը եկեղեցու պատի մեջ է տեղադրել Մելիք Եգանը:

Դոնակալի (դռան բարավորի) մեծ քարի վրա գտնվող արձանագրությունը հաստատում է, որ 17-րդ դարում Դիզակի Մելիք Եգանը հիմնովին վերանորոգում է եկեղեցու տանիքը: Իսկ բուն եկեղեցին, ինչպես գրում է Մակար եպիսկ. Բարխուդարյանցը,

---

[2] **Խ. Սամվելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. Ա., Երևան, 1931 թ., էջ 314:

[3] **Սարգիս եպիսկ. Ջալալեանց**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 339:

«շատ հին է»[4], մոտավորապես 13-րդ դարից:

Եկեղեցու բակում թաղված են Դիզակի մելիքներն ու նրանց ընտանիքների անդամները:



Տող. Ս. Հովհաննես եկեղեցին հարավ-արևմուտքից

Ինչպես վկայում են շիրմաքարերի վրա պահպանվող չափածո արձանագրությունները, պարսկական դաժան տիրակալներից մեկը՝ Նադիր Շահը, հաշվի էր նստում մելիք Ավանի հետ՝ նրան կոչելով «Բարբալող» (հայրացու): Մելիք Ավանի շիրմաքարին գրված է, որ մելիք Ավանը՝ Նադիր Շահի կողմից հարգված, խալաթներով (նվերներով) սիրաշահված այդ քաջ դիզակեցին, բացի իր երկրից իշխում էր նաև Աղվանից աշխարհին, իսկ մելիքի որդու՝ մելիք Արամի շիրմաքարին կարդում ենք հակառակը.

Շահն ոգեց (ուզեց) Արամ տարաւ,
ՁՌ (6000) թուման ջարմայ առաւ»[5]:

Մելիք Արամին հաջորդեց նրա եղբայր մելիք Եսային, որ Խամսայի ամենահռչակավոր իշխաններից մեկն էր և այդ պատճառով էլ ժողովրդական զրույցների ու ավանդույթների սիրված հերոս էր հանդիսանում: «Այսօր էլ,—գրել է Լեոն,—Դիզակի ժողովուրդը դեռ պատմություններ է անում իր մեծ մելիքի մասին, որ իր հոր՝ Մելիք Եգանի (Ավանի) արժանավոր ժառանգ հանդիսացավ և նույնիսկ գերազանցեց նրան իր քաջություններով»[6]:

ԳՏՉԱՎԱՆՔ

Տողասարի կամ Ճգնավորի լեռան հյուսիսային լանջի գոգավորությունում, թավուտ անտառների ֆոնի վրա, շատ հեռվից երևվում է նշանավոր Գտչավանքի գմբեթը:

Իր դիրքով ու շրջապատի բնության հետ ունեցած սերտ կապով Գտչավանքը զգալիորեն տարբերվում է Արցախի միջնադարյան հուշարձաններից: Բարձրադիր տեղանքը, երկինք մխրճված գրանիտյա ժայռերի սեհությունը, վայրի պտղաբույսերով հարուստ անտառապատ ձորերի խորությունը, դեռևս մաքուր օդը, սառնորակ աղբյուրները մի առանձնակի շուք են տալիս վանքին: Իր ճարտարապետական հիանալի արժանիքներով Գտչավանքը, առանձնահատուկ տեղ բռնելով հանդերձ, հարստացնում է երկրամասի բազմադարյան ճարտարապետության գանձարանը՝ հաստատորեն կանգնելով այնպիսի կոթողների կողքին, ինչպիսիք են Գանձասարն ու Խութավանքը, Ամարասն ու Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին:

Մատենագիտական աղբյուրները հիշատակում են, որ հնագույն ժամանակներում ներկայիս վանքի տեղում կառուցված է եղել մի եկեղեցի, որը համարվել է հայտնի ուխտատեղի: Այդ եկեղեցին ավերվել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Հին եկեղեցու հիմքերի վրա, ինչպես մատնանշում են ներկայիս եկեղեցու հյուսիսային պատի վրա գտնվող ընդարձակ արձանագրությունները, Ամարասից այստեղ գաղթած երկու եպիսկոպոսներ՝ տեր Սարգիս և տեր Վրդանես եղբայրները, կառուցում են Գտչավանքի գլխավոր եկեղեցին: Շինությունը հիմնադրվել է 1241 թ., ավարտվել է 1246-ին[7]:

13—16-րդ դդ. պատկանող հարուստ վիմական արձանագրությունները արժեքավոր աղբյուր են հանդիսանում հայ ժողովրդի հյուսիս-արևելյան հատվածի պատմության համար:

Պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գտիչը, վաղնջական ժամանակներից սկսած, եղել է գավառի քաղաքական ու հոգևոր կենտրոնը: Այստեղ էին նստում թեմի եպիսկոպոսները: Այն իր նշանավոր ամրոցով Եսայի Աբու-Մուսեի նստավայրն էր 9-րդ դարում: Իսկ 10-րդ դարում թագավորանիստ էր, Դիզակում հիմնված թագավորության կենտրոնը:

Գտիչը 13-րդ դարի վերջերին ընդարձակվում է նորանոր շենքերով, իսկ Դիզակի մելիքների, հատկապես Ավան Յուզբաշու իշխանապետության ժամանակ հասնում է իր զարգացման գագաթնակետին, դառնալով Հայաստանի կրոնական, քաղաքա-

[4] «Արցախ», էջ 75:

[5] Նույնը, էջ 76:

[6] Լեո, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Երևան, 1973, էջ 261:

[7] «Արցախ», էջ 81:

կան ու մշակութային խոշոր կենտրոններից մեկը:

Գտչավանքի հուշարձանն իր արվեստով, բարձր ճարտարապետական առանձնահատկություններով հանդիսանում է հայ բազմադարյան ճարտարապետության նշանավոր կոթողներից մեկը:

«Առհասարակ,—գրել է Լեոն,—ներքին և արտաքին կողմերից Գտչավանքի ճարտարապետությունը կրում է Բագրատունյաց ոճի կնիքը»:[8]

Վանքի գլխավոր եկեղեցին միջին մեծության կենտրոնական գմբեթավոր կառուցվածք է: Գմբեթը նստած է չորս կամարների վրա:

Հիմնապատերը շարված են տաշած դեղնագույն քարերից: Որմնամույթերը միանում են աղեղնաձև կամարներով, որոնք իրենց վրա կրում են գմբեթը՝ բարձր, բայց ոչ այնքան սրածայր վեղարով:

Հուշարձանն արևելյան կողմում ունի աբսիդ, բարձր բեմով և երկու կողմերում նրկնահարկ խորաններ, որոնք արևելյան կողմից ունեն փոքր աբսիդներ և մեկական փոքր լուսամուտներ: Վերին հարկի խորանների դռները բացվում են աբսիդի մեջ, որտեղից բարձրանում են քարե սանդուղքով:

Եկեղեցին արտաքուստ ուղղանկյուն է, իսկ ներսից՝ խաչաձև հատակագծով, ուղղանկյուն խաչթևերով: Ներսը ծեփված է կրաշաղախով, արևելյան կողմի վերին խորանից մի գաղտնի անցք պատերի միջով բարձրանում է դեպի տանիքի տակը: Պատերի մեջ դրված են քանդակազարդ և արձանագրված բեկորներ, որոնցից մեկի վրա նշված է 1000 թվականը: Սա դարձյալ ապացույց է, որ այժմյան հուշարձանի տեղում հնում եղել է մի ուրիշ քարաշեն հուշարձան: Դա երևում է նաև եկեղեցու հիմքերից, որոնք տեղ-տեղ բացվել են: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Գտչավանքի ճարտարապետական մանրազնին քննությունը դեռ չի կատարվել և ոչ էլ պեղմամբ ուսումնասիրվել են վանքի ու նրա ավերակների երևացող հիմնապատերը, որպեսզի վերջնական խոսք ասվեր հնագույն շենքերի կազմի ու հիմնադրման ժամանակի մասին: Վանքն ունի գավիթ, որը «խիստ հին է քան եկեղեցին»[9], գավթի միակ մուտքը զարդարված է նրբահյուս քանդակներով: Դռան երկու կողմերին, պատի մեջ, տեղավորված են քանդակազարդ խաչքարեր: Հարավային կողմի խաչքարի վրա գրված է. «Թվին ՈՂԵ Ես տէր Վրդանէս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ»: Իսկ հյուսիսային կողմի խաչքարի վրա՝ «Յիշատակ է Սուրբ տաճարիս կաթողիկէն Դողեցի Սարգսի որդի Սայուն և իր կողակից Հերիքնազին թվին ՌԾԿԶ»:

Գտչավանքի եկեղեցին հարավից

Շենքը սալահատակված է եղել, տանիքը ևս պատած է սրբատաշ քարերով: Արևմտյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ բացվում են զույգ կամարակապ պատուհաններ, որոնք բավականին բարձր են ու արտաքուստ նեղ, իսկ ներսից՝ ընդարձակ բացվածքով և քառակուսի կողմերով: Պատերը հաստ են, շքեղ և նուրբ զարդաքանդակներով: Գավթի ներսի հատակը ծածկված է վանքի հոգևորականների և Դիզակի մելիքների գերեզմաններով, որոնց քարերը մշակված են գեղեցիկ ու նուրբ ժանյակներով: Բացի հիշյալ գերեզմաններից, եկեղեցու ներսում, արևելյան պատին նից, կան մի քանի մահարձաններ՝ խաչքարերով:

Գերեզմանոցը տարածված է եկեղեցու շուրջը, որը մեծ մասամբ ավերված է. հատ ու կենտ գերեզմանաքարեր թաղված են գետնի մեջ, իսկ մեծ մասը ծածկված են հողով, խաչքարերն ընկած են գետնին:

Գտչավանքը շրջապատի բնակելի ու տնտեսական (ավերված) շենքերի[10] հետ

[8] Լեո, Իմ հիշատակարանը, Շուշի, 1885, էջ 247:

[9] «Արցախ», էջ 81:

[10] Այստեղի ավերակները լրիվ կուլ են գնացել փարթամորեն աճած անտառին:

միասին ժամանակին դիտվել է որպես ավարտուն ճարտարապետական անսամբլ:

Վանքի գլխավոր եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում՝ Կաթնաղբյուրի հարավային մասում է գտնվում մի անանուն եկեղեցի, որը ևս հնաշեն է:



Դիզափայտի ժայռեղեն բերդը Հին Թաղլարից

Գտչավանքը հնուց ի վեր հայտնի է իբրև Արցախի խոշոր հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը: Այնտեղ էին նստում գավառի եպիսկոպոսները: Վանքն ուներ իր դպրոցն ու գրատունը: Այնտեղ էին հավաքված նշանավոր բազմաթիվ գրչագրեր, և հենց տեղի գրչատանն էլ ստեղծվում էին ձեռագիր նոր մատյաններ: 19-րդ դարում Գտչավանքի վարդապետ Առաքել Կոստանյանցը գրել է պատմագիտական ու ազգագրական մի շարք ուսումնասիրություններ, որոնցից մի փոքրիկ հատոր՝ Դիզակի մելիքության մասին, լույս է տեսել 1913 թ.:

Դող կամ Քթիշ բերդը Դիզակի և ընդհանրապես Արցախի հին, անառիկ և խոշոր ամրոցներից է, հավանաբար գոյություն է ունեցել դեռ վաղ միջնադարում:

Առանձնահատուկ տոհմի Դիզակի հյուղը, Տոլը դարձնելով իր վարչական կենտրոնը, ռազմական հենակետ է դարձրել ինչպես Գորոզ բերդը, այնպես էլ այս ամրոցը:

Դիզակի քաջ իշխան Աբու Մուսեն շատ լավ էր ամրացրել Գտիչը, որին նպաստել է և անառիկ դիրքը: Արտաքին աշխարհի հետ այն կապված էր գետնափոր երկար անցքերով, ինչպես Արցախի մյուս հայտնի բերդերը:

Այժմ երբեմնի հզոր բերդից շատ քիչ բան է պահպանվել, և Դիզակի իշխանության կենտրոնի բազմաթիվ կառուցվածքներից ավերակներ են մնացել: Կիսով չափ կամ արդեն լրիվ հողածածկ Միջնաբերդի վիմաներձի գլխին դեռ կանգուն մնում է անտաշ քարով շինված եկեղեցին, որին տեղացիները վանք են կոչում: Հուշարձանի ներսում կան սպիտակ շերտաքարերից պատրաստված հինգ փոքր խաչքարեր, որոնց վրա քանդակված է. «Խաչս Նազարին», «Խաչս Մրհապետին», «Խաչս Շանումին», «Խաչս Ղազարոյ», «Խաչս Եղուայ»[11]:

Տեղացիները պատմում են, որ վերջին տարիներին այս բարձունքներում գտել են զանազան տնային իրեր, եկեղեցական առարկաներ, տարբեր զենքերի տեսակներ, մետաղյա անոթներ, հին դրամներ: Այստեղ դեռ երևում են միջնաբերդի շրջապարսպի հետքերը: Այն շարված է անտաշ որձաքարով, կրաշաղախով: Պարսպի պատերի մեջ երևում են հին եկեղեցու սրբատաշ քարեր, գերեզմանաքարեր, մեծ և գեղաքանդակ խաչքարերի մասեր: Բնակավայրի կիսավեր պատերը բոլորովին մամռապատ են, տների տեղը վեր է ածվել մեծ-մեծ փոսերի, որտեղ աճել են վիթխարի ծառեր, թփեր:

Մեռած «գյուղաքաղաքից» քիչ վերև՝ Տոլասարի ամենաբարձր գագաթին է գտնվում, ինչպես տեղացիներն են անվանում, Թեռ եկեղեցին: Այն մի պարզ շինություն է, առանց զմբեթի: Թաղածածկ դահլիճի հորինվածքով կառուցված կիսավեր եկեղեցին ներսում ունի չորս մույթեր, արևելյան կողմից՝ կիսակլոր աբսիդ, որի երկու կողմերում կան խորաններ: Դուռը հարավային կողմից է: Շարված է անտաշ որձաքարով և կրաշաղախով: Եկեղեցու արևելյան կողմում նկատվում են մի քանի գերեզմաններ, որոնց տապանաքարերը բավականին մեծ են և լավ մշակված, բոլորն էլ տեղական քարից: Ավերակների մեջ գերեզմանաքարերից միայն մեկի վրա կա չորս տող՝ «Պետի»: Ավերակները բավականին տարածություն են գրավում: Տնատեղերն ունեն կիսաբոլորաձև, իսկ մի քանիսը՝ ձվաձև հատակագիծ:

Պատմագիրների վկայություններն ու նյութական կուլտուրայի հուշարձանները հնարավորություն են տալիս ասելու, որ այստեղի ավերակները հիմնականում պաշտպանական կառույցներ են եղել: Պատերազմական տարիներին այստեղ է հավաքվել Դիզակի բնակչությունը և դիմադրություն ցույց տվել թշնամուն: Այդ տեսակետից խիստ բնորոշ է արաբական խալիֆայության դեմ մղած պայքարում դիզակցիների վառ օրինակը: Պատմությունը պահել է Արցախ աշխարհի ամենախոշոր դեմքերից մեկի՝ Եսայի իշխանի սխրագործությունները:

[11] «Արցախ», էջ 84:

Լեոյի կարծիքով Եսային կամ, ինչպես արաբական աղբյուրներն են նրան հիշում, «Իսա Իբն Յուսուֆ Աբու Մուսե»-ն[12], իր գլխավորած պայքարով «...ամենախոշոր մխիթարական երևույթն էր կազմում Հայոց աշխարհի այդ ժամանակվա (9-րդ դար— Շ. Մ.) արյունոտ նահատակների մեջ»[13]: 853 թ. ամրացված լինելով Տողասարի գագաթին, վերը նշված «գյուղաքաղաքի» սլուդիսպների ներսում, Աբու Մուսեն ավելի քան մեկ տարի համառ դիմադրություն է ցույց տվել արաբ զորավար Բուդայի բազմաքանակ զորքերին: Արաբ զորավարը 28 անգամ գրոհում է այդ անառիկ ամրոցի վրա, բայց գրոհները ապարդյուն են անցնում: Վերջիվերջո նա՝ Եսայի իշխանը, ընկավ թշնամու ձեռքն այն պատճառով, որ ազնվություն է ունեցել հավատալու թշնամու երդումներին՝ պատգամախոսության է գնացել Բուդայի մոտ և այնտեղ էլ ձերբակալվել:

Դիզակի քաջ իշխանի և նրա հետնորդների հիշատակին կառուցված մի շարք հուշարձաններ կան Տողասարից ոչ այնքան հեռու գտնվող Տումի գյուղի շրջակայքում:

Այսպես. գյուղի արևելյան մասում է գտնվում Դիզակի մյուս նշանավոր Գորոզ կամ Գոռոզա անունով բերդը, «Ի Գոռոզո մերձ ի լեառն Քթիչ»[14]: Մյուս նշանավոր հուշարձանը համարվում է Կարմիր եկեղեցին: 10-րդ դարի այս շինությունը լրիվ քանդված է: Պահպանվել է արևմտյան լուսամուտի վերնամասի արձանագրությունը (այն գտնվում է Լեռնային Ղարաբաղի մարզային թանգարանում): Ահա տեքստը.

«Ի նխթ. թվ. (1000) և ի թագաւորութեանս տեառն Գագիկայ (Աղունից) որդոյ Մուսէի եւ Սոփի դուստր Մուսէի շինեցի սոուն Աստուծոյ ի փրկութիւն հոգո իմո և ծնողաց իմոց»[15]:

Եկեղեցու փլատակները գտնվում են Տումի գյուղի հարավային կողմում, ձորակի աջ լանջին, հին գերեզմանոցի մեջ: Կարմիր եկեղեցուց փոքր ինչ վերև, մի առանձնացած բլրի վրա, կա քարակիր շինության բեկորներ: Բոլոր տվյալներից երևում է, որ շրջապարիսպով ամրացված է եղել բլուրը: Կալև խողովակների շարքերը այս ավերակներից ձգվում են դեպի մոտակա Թագավորի աղբյուրը: Տեղացիները ավանդաբար Թագավորի պալատ անունով են կոչում այս ավերակները:

Պալատատեղից դեպի հարավ գտնվող կոնաձև բլուրը պատած է հին գերեզմանաքարերով: Ուշագրավ է ավերակ դամբարանը, որի հարավային մասում կա մի տապանաքար: Դժբախտաբար այն չունի արձանագրություն: Այս ավերակ դամբարանն ու «անխոս» տապանաքարը սերնդե սերունդ մատնանշվել են որպես թագավորի գերեզման:

Պալատից դեպի հյուսիս, ձորակում, կա մի հիանալի սառնորակ աղբյուր, որի վրա իր ժամանակին սրբատաշ քարով կառուցվել է շենք: Աղբյուրն էլ կոչվում է Թագավորի աղբյուր:

Այս բոլորը վկայում են, որ Դիզակի տերերի աթոռանիստը Տողից հետո եղել է Տումին, իսկ նրանց գլխավոր բերդերը, ինչպես նշվեց, Գտիչն ու Գորոզն էին:

ԴԻԶԱՓԱՅՏԻ ԿԱՏԱՐՈ ՎԱՆՔԸ

Գտիչ վանքի բարձունքից հազիվ է երևում Դիզափայտի կատարին թառած հին բազիլիկը՝ ծովի մակերևույթից 2800 մետր բարձրության վրա: Ի դեպ, Դիզափայտի Կատարո վանք կոչվող այս կոթողը Ղարաբաղի տարածքում հանդիպող ամենաբարձրադիր հուշարձանն է:

Աղբյուրները մի հին ու հուզիչ պատմություն են պահել այս հուշարձանի պոնչությամբ:

335 թվականին Մազքուտների թագավոր Սանեսանը պարսից արքայի հրահրումով հավաքեց իր՝ Աղվանք երկրի կիսավայրենի ցեղերին, անցավ Կուր գետը և հարձակվեց հայոց վրա[16]:

Սպարապետ Վաչե Մամիկոնյանը մեծ ճանապարհորդության էր գնացել Հունաց երկիրը: Այդ պատճառով էլ հայոց զորքերը ցրված էին երկրի տարբեր կողմերում, և մազքուտներն ու նրանց խաժամուժ դաշնակիցները մի ամբողջ տարի ասպատակեցին Հայաստանի արևելյան անպաշտպան գավառները, թալանեցին ու գերեվարեցին ժողովրդին: Սանեսանի առաջին գործն այն է լինում, որ հարձակվում է Կատարո վանքում ապաշխարող նորահավատ իր երեք տղա-

[12] Արաբները սովորաբար հատուկ անունները գործածելիս հարմարեցրել են իրենց լեզվի օրենքներին: Եսային դարձրել են Իսա, սրան ավելացվել է Իբն Յուսուֆ, որ նշանակում է Հովսեփի որդի և Աբու Մուսե, որ նշանակում է Մովսեսի հայր:

[13] Տես «Հայոց պատմություն», հ. 2, Երևան, էջ 446:

[14] Տես **Արծրունի**, էջ 304: Նաև՝ **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ աշխարհացույցի, էջ 70:

[15] «Արցախ», էջ 79: Արձանագրությունը պահվում է Լոնդոնի պատմա-երկրագիտական թանգարանում: «Արցախ»-ի հեղինակը նշված արձանագրության մեջ «Սոփի» անվան փոխարեն սխալմամբ կարդացել է «Ոսկի»:

[16] **Բյուզանդ**, էջ 24:

ների ու 3870 ճգնավորների վրա, կոտորում նրանց, ապա դիակները դիզում լեռան կատարին և այրում: Այդ օրվանից էլ «կոչեցան անունն լերինն Դիզափայտ»[17]:

Կաղանկատվացին վկայում է, որ թշնամիների ձեռքով հրի են մատնվել Դիզափայտի մատուռ-վկայարանները ու Կատարո վանքը, «...թշնամեաց հրդեհեցան վկայարանքն ի Դիզափայտ լերինն, ի Կատարոյ վանս»[18]: Լեռնաշխարհի ամենաբարձր գագաթի վրա է գտնվում Կատարո եկեղեցին: Հին ու բարեշեն վանքի ավերակները չեն երևում: Ներկայիս եկեղեցին, որ 17-րդ դարի շինություն է, Կատարո վանքի հիմքերի վրա է կառուցված, թե ոչ, դժվար է ասել, քանի որ նրի հետքերն անգամ չեն երևում:

Կատարո վանքի եկեղեցին Դիզափայտ լեռան կատարին

Եկեղեցին ուղղանկյուն է, երկթեք ծածկով, կառուցված կիսամշակ տեղական կայծքարից: Պատերի հարթությունների միապաղաղ ֆոնը խախտվում է միայն փոքր ու նեղ լուսամուտների ճեղքերով: Արևմտյան մասում գտնվող միակ մուտքը զուրկ է հարդարանքից և կառուցված է մշակված քարից: Համեմատաբար խոր արտաքին որմնասկամարը ստեղծում է լույս ու ստվերի խաղ ու դրանով միայն ընդգծում եկեղեցու մուտքը: Միակ դեկորատիվ մասը արձանագրություն պարունակող քարն է: Հյուսիսային պատը կիսով չափ թաղված է հողի մեջ, իսկ հարավայինը շարված է բաց ժայռի վրա: Տեղ-տեղ թափվել են անկյունաքարերը:

Եկեղեցին աչքի է ընկնում իր ներդաշնակությամբ բնությանը, համապատասխանությամբ տեղանքին: Կատարո վանքի եկեղեցու կտուրից նայողի առաջ բացվում է մի լայնատարած անկրկնելի համայնապատկեր, որի մեջ ընկած են մայր Արաքսի կապույտ ժապավենը, իրանական ձյունապատ լեռները, Արցախի դաշտը, Զանգեզուրի չքնաղ լեռները, ծեր Մոսվի հողմահարված կատարները:

ՀԱԴՐՈՒԹ ՁՈՐԱԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հադրութի հիմնադրման ժամանակը հայտնի չէ: Տեղում հանդիպող տասնյակ հուշարձանների բեկորները վերաբերվում են թե՛ հեթանոսական և թե՛ վաղ քրիստոնեության ու միջնադարյան շրջաններին: Այսպես. այժմյան շրջկենտրոնի հարավարևելյան մասում կա մի հին գերեզմանոց՝ ավերակ եկեղեցիով: Գերեզմանաքարերի վրա չկան ո՛չ արձանագրություններ և ո՛չ էլ քանդակներ, բացառությամբ երկուսից, որոնց վրա նշմարվում է խաչանշանը: Տեղացիները այդ գերեզմանոցը անվանում են «Կռապաշտի հանգստարան» կամ «Հին հանգստարան»: Հյուսիս-արևելյան կողմում նկատվում են շատ հին բերդապարսպի հետքերը: Տեղանքը կոչվում է «Ղալին Բանդ» (Բերդի մուտք), իսկ ավանի հարավային մասում, նախորդից մոտավորապես 1,5 կմ հեռավորության վրա, ոչ մեծ բլրի լանջով ձգվում են մեկ ուրիշ՝ «ծծախաչ Ղալայ» անունով բերդի ավերակները: Այս բերդը ջուր է ստացել Սարոշեն գյուղից, 5 կմ երկարությամբ ձգվող կավե խողովակաշարով: Հադրութի հյուսիս-արևմտյան մասում գտնվում են «Վենեսաղալայ» կոչվող բերդի բնական և մարդաշեն պարիսպների մնացորդները:

Հադրութ. Շախկախի վանք կոչվող եկեղեցին

---

[17] **Կաղանկատվացի**, էջ 134: **Ալիշան**, Հայապատում, էջ 187:

[18] **Կաղանկատվացի**, նույն տեղում:

Իրոք որ Հադրութի ձորակը օղակված է եղել պաշտպանական ամուր պատնեշներով: Դրան օժանդակել են նաև շրջակա բարձր և դժվարամատչելի լեռները, անդրնդախոր ձորերը:

Արցախ աշխարհի տերերը ժամանակին հոգացել են իրենց երկրի հարավային, ռազմագիտական տեսակետից խիստ կարևոր եզերքը ամուր փականքի տակ պահելու մասին: Այդ ամրոցները կարևոր դեր են խաղացել թշնամիներին դիմագրավելու գործում:

15—16-րդ դարերում պարսիկների և օսմանյան թուրքերի կողմից հիմնովին ավերվել են միջնադարում կառուցված հուշարձանները, շեն գյուղերը:

Ներկայիս եկեղեցիները, գյուղերը դրանց մի չնչին մասն են կազմում, որոնք վերակառուցվել են մելիքների տիրապետության ժամանակ:

Ի դեպ, Հադրութ անունն այդ ժամանակներից է մնացել: Այն պարսկերեն նշանակում է միջագետ, կամ բառացի՝ երկու գետերի մեջ[19]: Հին Հադրութի երկու կողմերով հոսում են երկու գետակներ: Ներկայիս Հադրութը ընդարձակվել է արևելյան և արևմտյան ուղղություններով:

Շախկախի վանք. Այս հուշարձանը կառուցվել է 17-րդ դարում: Պատերի մեջ օգտագործված են հին եկեղեցուն պատկանող սրբատաշ քարեր և խաչքարեր, որոնք բնորոշ են 12—14-րդ դարերին: Վերակառուցված սուրբ Աստվածածին կոչվող եկեղեցին եռանավ բազիլիկ է, ներսում ունի երկու մույթ, որոնցից ձգվող կամարների ծայրերը հենվում են որմնասյուների վրա: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, որի կողքերին կան խորաններ: Եկեղեցու թաղածածկ, ուղղանկյուն դահլիճի մեջտեղում, շրջանաձև երդիկի վրա, բարձրանում է գմբեթը, որն ունի վեց սյուն և բրգաձև ծածկ: Եկեղեցին կառուցված է անմշակ քարով, իսկ գմբեթն ամբողջապես սրբատաշ քարերով է կերտված: Եկեղեցին ունի չորս փոքր լուսամուտներ: Միակ դուռը գտնվում է հյուսիսային մասում: Ուշադրություն է գրավում դռան բարավորը, որն ավելի հին հուշարձանի քիվի բեկոր է և ունի բավականին բարդ պրոֆիլով՝ գլանիկներով ու ատամիկներով կտրվածք:

Եկեղեցին ունի մի շարք արժեքավոր արձանագրություններ, որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում ինչպես բուն վանքի, այնպես և շրջանի պատմության մասին:

«Երկիր Դիզակայ եւ գեաւղս Հադրութի յանապատս որ կոչի Շախկախ է ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ի Հայրապետութիւն Տաւիթ կաթողիկոսին ել ի սուրբ անապատիս առաջնորդութիւն Հովհաննէս էպիսկոպոսէս ել իշխանութիւնս խոտայպանդին դառն եւ դժուարին ժամանակիս»: Ապա «Աւետարան գրեալ ի թվ. ՌՃԻԲ յերկիրն Դիզակո ի գիւղս Դաք ընդ հովանեաւ սուրբ եւ նշանաւոր տեղւոջ, որ կոչի Շախկախ եւ այլ միաբանիցս Յակոբ եպիսկոպոսի եւ տէր Մկրտիչին, տէր Բարսղին գրոց աշակերտ Սաղաթին»[20]:

Շախկախ վանքի լավագույն հուշարձաններից մեկը որմնափակ Խաչակալ կոթողն է, որ գտնվում է եկեղեցու հյուսիսային մասում: Այդ հետաքրքիր շինության արևելյան ճակատային կողմում սրբատաշ քարից կերտված, գեղեցիկ շրջանակներով որմնախորշում կանգնեցված մի խաչքար կա: Քանդակվել է 1330 թ. հին եկեղեցու հետ միասին: Խաչը կերտված է մի ամբողջական քարից, ունի միջին մեծություն:

Սպիտակ խաչվանք—Այս վանքը գտնվում է Հադրութից մի քանի հարյուր մետր դեպի հյուսիս-արևմուտք, Վանք անունով գյուղի մոտ, բլրի վրա: Սպիտակ խաչ անվան ժողովրդական ստուգաբանությունը կապվում է ավանդության հետ, ըստ որի՝ Արցախի առաջին եպիսկոպոս Գրիգորիսի նահատակությունից հետո նրա գավազանը և բյուրեղյա լանջախաչը պահվում էին Ամարասում, որտեղ ամփոփված են նրա նշխարները: Ամարասը կործանվելուց հետո հիշյալ սրբությունները պահվում էին Գոտիչ վանքում, իսկ հետո՝ Սպիտակ խաչ վանքում[21]:

Ստույգ հայտնի չէ եկեղեցու շինության ժամանակը: Սակայն պետք է ենթադրել, որ այն կառուցվել է 14-րդ դարից հետո, քանի որ 14-րդ դարի բազմաթիվ հետքեր է պարունակում: Օրինակ, տաճարի ներսում՝ հյուսիսային կամարի տակի խաչարձանի գիրն է. «Ես Սիրաւք կանգնեցի զխաչս հաւր իմոյ խուրլափի թվ. ՉՁԲ» (1333 թ.)[22]:

Գավթի դռնակալ քարի վրայի արձանագրությունից պարզվում է, որ վանքը, կամ թերևս միայն գավիթը, վերակառուցվել է 1735 թ.՝ «Զեռամբ Սուրապի որդի Յովհաննէս եպիսկոպոսի»[23]:

Սպիտակ խաչ վանքի եկեղեցին դարձյալ եռանավ բազիլիկ տիպի շենք է: Շարված է տարբեր տեսակի անմշակ քարերից՝ կրա-

[19] «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», Тифлис, 1888 г., стр. 150.

[20] «Արարատ», Վաղարշապատ, 1896 թ., էջ 46:

[21] Նույնը:

[22] «Արցախ», էջ 66:

[23] «Արարատ», Վաղարշապատ, 1896 թ., էջ 47:

շաղախով: Հուշարձանը թե՛ հորինվածքով և թե՛ չափերով շատ մոտ է Ծախկախ վանքի եկեղեցուն: Եկեղեցին գավթի հետ միասին ունի 15,75 մ երկարություն, 7,1 մ լայնություն: Ուշադրության արժանի է զան-



Սպիտակ խաչ վանքի որմնափակ խաչքարը

գակատունը. «Յիշատակ է զանգակատունս Սուրապի որդոյ Աւանէս եպիսկոպոսին թ. ԻԾԻԳ» (1674 թ.): Ոչ այնքան բարձր զանգակատունը տեղադրված է աղոթասրահի սեղտեղում, շրջանաձև երդիկի վրա: Քարե օղակի վրա նստած զանգակատունն ունի վեց այուն, բրգաձև ծածկ: Եկեղեցու արևմտյան մասում, գերեզմանոցում, կա մի կիսավեր որմնափակ խաչքար, որը շինված է սրբատաշ քարով: Նրա արևմտահայաց կողմում, որմնակամարի մեջ, զետեղված է մի գեղեցկաքանդակ խաչարձան, որի վերի մասում գրված է. «Ես Աջամի որդի Իշխանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ որդոյ իմոյ Ասուպարայ: Որք կարդէք, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, աղաչեմ: Ի թվիս ՉՂԷ» (1348): Խաչքարն ունի ավելի քան 2,5 մետր բարձրություն, պատած է նուրբ ու շքեղ զարդաքանդակներով:

Քանդակազարդ տապանաքարեր մեծ թվով կան հատկապես վանքի շրջակայքում գտնվող ընդարձակ գերեզմանոցում: Տապանաքարերից մի քանիսի վրա կա որսի, ճակատամարտի, վար ու ցանքի տեսարաններ: Գերեզմանոցի մեջ, գավթի հյուսիսային կողմում, կա մի մեծ կիսավեր շինություն, որը մի ժամանակ ծառայել է որպես հյուրատուն ուխտավորների համար: Այստեղ ուշադրության արժանի են քիչ հեռու գտնվող վիմափոր խուցերը: Լավ պահպանված երկու խուցերն ունեն մի ընդհանուր մուտք և հին ժամանակներում հավանաբար օգտագործվել են որպես ճգնարան ու ննջարան:

Թաղասեռի անապատ—Այս հուշարձանը գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հարավ-արևմուտք, գեղեցիկ ձորի թթենու և ընկուզենու այգիների արևակող բլրակի ստորոտում: Եկեղեցին, որը կոչվում է սուրբ Աստվածածին, չորս մույթերով եռանավ բազիլիկ է: Երբեմնի գավթից մնացել են քանդված պատերի զանգվածները: Եկեղեցին ունի երկու շինարարական արձանագրություն՝ մուտքի բարավորի վրա և ներսում: Այդ արձանագրություններից պարզվում է կառուցման ժամանակը: Այն հիմնադրվել է 1635 թ., թաղասեռցիների օժանդակությամբ, նախկին ավերված եկեղեցու դիմաց, հին և նոր Թաղասեռ գյուղերի արանքում:

Բավականին մեծ շենք է, թաղածածկ՝ առնված երկթեք տանիքի տակ: Արևելյան կողմից ունի կիսակլոր աբսիդ, որի երկու կողքերին կան խորաններ: Շարված է կիսատաշ որձաքարով, կրաշաղախով, պատե-

Թաղասեռ. Անապատ եկեղեցու ճակատը

րի մեջ օգտագործված են հին գերեզմանաքարեր և քանդակազարդ խաչքարեր: Եկեղեցուց քիչ ցած, մոտավորապես 500 մ դեպի հարավ, կարկաչուն աղբյուրների ջրերից գոյացած գետակի աջ ափին, մեծ տա-

ռածություն են զբաղեցնում հին գյուղի ավերակները, որը կոչվում է Շենատեղ:

Պահպանվել են երկար ձգվող պարիսպների պատերը, տների ու եկեղեցիների տեղերը, սալահատակված փողոցների հետքերը: Խաչքարեր ու արձանագրություններ պարունակող քարաբեկորները թաղված են խոտերի ու թփերի մեջ:

ՑՈՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Դեռևս մեր թվարկության առաջին դարում Ցորը նշանավոր բերդաքաղաք է եղել: Մատենագիտական նյութերը բավականին առատ տեղեկություններ են պահում այդ մասին: Բայց Ցորը դրանից էլ հին է: Հնագույն քարտեզագիրներն իրենց կազմած արևելքի քարտեզներում զետեղել են նաև Ցոր բերդաքաղաքը: 5-րդ, 7-րդ դարերի հայ պատմագիրներն ու քարտեզագիրները գովեստով են խոսում Ցորի անառիկության ու գեղեցկության մասին:

Ցորաբերդը գտնվում է գյուղի թիկունքի լեռան գլխին: Գեղատեսիլ լեռն իր բնական անառիկ դիրքով շատ համապատասխանում էր այն ժամանակվա ռազմական պահանջներին: Տեղանքի բնորոշ գծերն են՝ բարձր, ցցված ժայռեր՝ հարավային մասում, հատ պարիսպներ՝ հակառակ կողմում, և դեպի բերդը տանող դժվարանցանելի ճանապարհը: Եթե դրանց գումարենք նաև նրա իշխող դիրքը՝ ձորերին ու կիրճերին հսկելու հնարավորությունը, ապա պարզ կդառնա Ցորաբերդի անխոցելիությունը:

Ցորաբերդի հիմնական շինություններից մնացել են պարիսպների ավերակները և ջրավազանների հողածածկ փոսորակները:

Բերդն ունեցել է երկու դարպաս: Անմըշակ, կրաշաղախով շարված պարիսպների հաստությունը մոտ երկու մետր է[24]: Բերդի ներսում գտնվել են կավե ջրախողովակներ, կարասներ, բրոնզե նետասլաքներ, դաշույններ:

Այս բերդը, որի նշանակությունը շատ մեծ է հայոց արևելյան ծայրագավառների պաշտպանության համար, բազմիցս թատերաբեմ է եղել պատերազմական կատաղի մարտերի, որի հետևանքով մի քանի անգամ այն ավերվել, կործանվել է թշնամիների կողմից, իսկ երբ նվաճողները քշվել են երկրամասից, տեղական ազգաբնակչությունը վերստին ամրացրել է բերդը: Վերջին անգամ այս բերդը նորացվել է 15-րդ դարում: Դրա վերաբերյալ արձանագրություն կա Սպիտակ խաչ վանքում:

Ամենափրկիչ եկեղեցի—Այս բարձր ու գեղեցիկ հուշարձանը գտնվում է Ցոր գյուղի կենտրոնական մասում: Հավանաբար կառուցվել է 10-րդ դարում: Այդ է ասում դռան բարավորի արձանագրությունը. «Ցիշատակ է և թվ.»: Շենքը եռանավ բազիլիկ է, չորս մույթով, աբսիդի երկու կողմում՝ խորաններով:

Սուրբ Լուսավորչի անապատը գտնվում է Ցոր գյուղի հարավային մասում, ձորի ձախ եզրին, մի փոքրիկ հարթության վրա: Ուղղանկյուն հատակագիծ ունեցող փոքրիկ կառուցվածք է, շինված մոխրագույն անտաշ քարերից: Անապատի շուրջը տարածվում է ընդարձակ գերեզմանոց, որը հարուստ է զանազան ձևի տապանաքարերով: Վերջիններս զարդարված են կենցաղային ու սրբապատկերների բարձրաքանդակներով: Տապանաքարերից շատերն ունեն 13 և 17—19-րդ դարերի արձանագրություններ:

Անապատի մոտ կա մի ստորգետնյա քարակերտ դամբարան: Ավերված դամբարանում՝ հողի մեջ կիսով չափ խրված է մի շքեղ գերեզմանաքար:

ԻՋԵՎԱՆԱՏՈՒՆ

Հին ու միջին դարերում փոխադրական միակ միջոցը գրաստների կարավաններն էին: Կարավանային բանուկ ճանապարհների վրա շինվում էին ընդարձակ իջևանատներ՝ ճամփորդների և գրաստների հանգստանալու և կերակրվելու հարմարություններով: Իջևանները շինվում էին ոչ միայն այն քաղաքներում ու գյուղերում, որոնց միջով անցնում էր ճանապարհը, այլև այդ երկու բնակավայրերի արանքում եղած բաց դաշտերում, երբեմն էլ լեռնանցքերի վրա, երբ ճանապարհն անցնում էր լեռնային անմարդաբնակ վայրերով: Պատմական Արցախի շատ վայրերում մնացել են միջնադարյան այդպիսի իջևանների ավերակներ թե՛ բնակավայրերի մոտ, թե՛ լեռնանցքների վրա և թե՛ բաց ու ընդարձակ դաշտերում:

Ահա այդպիսի մի լավ պահպանված հուշարձան է Իջևանատուն կոչվող համալիրը: Այն գտնվում է Հադրութ-Ստեփանակերտ խճուղու 10-րդ կիլոմետրի հատվածում, այժմյան Ղարղաբազար գյուղի կենտրոնում բարձրացող բլրի արևմտյան լանջին: Նրա հարմար աշխարհագրական դիրքը, վիմափոր ընդարձակ դահլիճները, տնտեսական ու պաշտամունքային կառույցներն ավելի են բարձրացրել հուշարձանների դերն առևտրական կարևոր ճանապարհների հանգուցակետում: Փոքրիկ եկեղեցին, ընդարձակ գետնափոր դահլիճները, թաղակապ պահեստներն ու ախոռները

[24] «Արցախ», էջ 83:

հիմք են տալիս ենթադրելու, որ միջնադարյան ճարտարապետական այդ անսամբլը ձևավորվել է երկար ժամանակամիջոցում, տարբեր շինարարների ձեռքով: Այս հանգամանքը ոչ թե բացասաբար է անդրադարձել շինությունների միջև եղած փոխադարձ կապի, ներդաշնակության վրա, այլ ընդհակառակը, այստեղ հմտորեն նկատի են առնված բոլոր կառույցների միասնականությունը և ընդհանուր ճարտարապետական կերպարի ամբողջությունը:

Իշևանատուն. Տեսքը հյուսիս-արևմտյան մասից

Իշևանատան համալիրը կառուցված է ազատ հատակագծման սկզբունքով՝ ելնելով միայն տեղանքից և կողմնորոշումից: Այստեղ ռելիեֆը թողնված է անփոփոխ, ու կառույցներն են հարմարեցված տեղանքին: Բլրի գագաթին գտնվող եկեղեցին կառուցված է սրբատաշ, մոխրագույն քարից, միանավ բազիլիկայի հորինվածքով: Եկեղեցին աչքի է ընկնում պատերի զգալի հաստությամբ:

Եկեղեցուց 4 մետր ցած (դեպի հարավ-արևմուտք)՝ բլրի լանջով ձգվող կիսամշակ քարով շարված պատը կենտրոնական մասում ունի երեք կամարակապ դուռ: Դռների ետևում ընդարձակ սրահն է, որի հյուսիսային և հարավային կողմում գտնվում են վիմափոր դահլիճների դռները: Ավելի քան 100 մետր տարածություն ունեցող երեք դահլիճներն ամբողջապես գտնվում են բլրի մեջ: Արտաքուստ բոլորովին չեն երևում այդ դահլիճները: Սրահի և դահլիճների թաղակապ ծածկը բնական ապառաժ բլուրն է, վերնամասում քիչ հարթեցված՝ հավանաբար եկեղեցու համար բակ նվաճելու նպատակով:

Իշևանատան համալիրի մյուս շինությունները գտնվում են բլրի լանջի ստորին մասում: Հիմնական մուտքը, որով անգամ սայլերն են մտնում, տեղադրված է եկեղեցու ուղղությամբ:

Այդ գլխավոր մուտքից կամ դարպասից դեպի աջ և ձախ իրար կից երկու ընդարձակ դահլիճներն են, որոնցից մեկը ձգվում է արևմուտքից հյուսիս, իսկ մյուսը՝ հյուսիսից հարավ: Ինչպես այդ դահլիճները, այնպես էլ նրանց կպած երկու այլ դահլիճներ գեղեցիկ են: Եթե չլինի դարպասը, արտաքուստ բոլորովին չի զգացվի նրանց գոյությունը: Բոլոր դահլիճները թաղակապ են, ունեն ախոռներ, բուխարիներ և սանդղաստիճաններ, որոնցով կարելի է բարձրանալ դեպի երկրորդ հարկի դահլիճները, այնտեղից էլ՝ եկեղեցի:

*
* *

Վերը նշված հուշարձաններից բացի շրջանի գյուղերում հանդիպում են ավելի քան 80 այլ հուշարձաններ: Վաղեմի կյանքի մասին անգնահատելի իրեղեն ապացույցներ համարվող (նաև աստիճանաբար անհետացող) այդ հուշարձանները ոչ միայն ուսումնասիրված չեն, այլև նույնիսկ նրանց մի զգալի մասը չեն էլ նշված գրականության մեջ՝ թեկուզ գրանցման կարգով:

Այդ բացը որոշ չափով լրացնելու համար մի այլ առիթով կտրվեն համառոտակի տեղեկություններ այստեղի ավելի քան 80 հուշարձանների վերաբերյալ:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՀԻՆԳ ՆՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ԵԽՀ-ՈՒՄ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի դիվանը 1976 թվականի նոյեմբերին Տորոնտոյում գումարած իր նիստում նշանակել է հինգ նոր աշխատակիցներ, որոնք պատասխանատու պաշտոններ են զբաղեցնելու ԵԽԽ-ի անձնակազմում: Այսպիսով, քսանհինգ տարբեր ճյուղերի վրա բաշխված ԵԽԽ-ի գործունեությունը ղեկավարող գրասենյակների պետերի և բաժանմունքների տնօրենների ընդհանուր թիվը հասնում է 110-ի:

Հանովերի (ԳՖՀ) մանկավարժական ինստիտուտի դասախոս պրոֆ. Ուլրիխ Բեկերը գլխավորելու է «Դաստիարակություն» բաժանմունքը՝ փոխարինելով այդ պաշտոնում պաստոր Վիլյամ Քենեդիին:

Սույն թվականի ապրիլի 15-ից «Ուան Ուորլդ» պարբերականի ընդհանուր խմբագրությունը ստանձնելու է անգլիկան հոգեվորական Ջոն Բլընկը: Անգլերեն լեզվով հրատարակվող ԵԽԽ-ի Տեղեկագրի խմբագրի պաշտոնը վարելու է մեթոդական եկեղեցու ներկայացուցիչ Ռուբին Էդուարդ Գերնին:

ԵԽԽ-ի ֆինանսական բաժանմունքի աշխատանքների վերակառուցումից հետո, որը տեղի էր ունեցել անցյալ տարվա ամռանը կենտրոնական կոմիտեի որոշումով, ֆինանսական գործերի վարիչի նոր պաշտոնը վստահվելու է շվեյցարացի Պիեռ Բիրուսին:

Ռուս պրավոսլավ եկեղեցուց պրոֆ. Նիկոլայ Զաբոլոցկին, որը երկար տարիներ դասախոսել է Լենինգրադի աստվածաբանական ակադեմիայում, ժնևում ստանձնել է ԵԽԽ-ի «Արդարության և ծառայության» միավորումի շրջանակում գործող Ուսումնասիրությունների բաժնի քարտուղարի պաշտոնը: Վերջինիս նշանակումով ԵԽԽ-ի անձնակազմում պատասխանատու պաշտոններ վարող օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների թիվը հասնում է հինգի:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ» ՇՈՒՐՋ

Վերջերս Կարտինյիում (Շվեյցարիա) տեղի է ունեցել միջազգային մի խորհրդակցություն՝ «Աստվածաշնչի մատերիալիստական ընթերցում» թեմայի շուրջ: Սույն խորհրդակցությանը, որը կազմակերպված է եղել Ուսանողների քրիստոնեական ընկերակցությունների համաշխարհային ֆեդերացիայի Եվրոպայի բաժանմունքի և Եվրոպայի աշխարհիկ ակադեմիաների և կենտրոնների էկումենիկ ընկերակցության միացյալ ջանքերով, մասնակցել են Պորտուգալիայի, Իտալիայի, Սկանդինավյան երկրների, Անգլիայի, Գերմանիայի և Հոլանդիայի ուսանողական խմբերի ներկայացուցիչներ:

Աստվածաշնչական տեքստերի ընթերցման այս ձևը, ուր շեշտը դրվում է գլխավորապես դասակարգային պայքարի վրա, Աստվածաշնչի բովանդակությունը նորովի մեկնաբանելու մի փորձ է, որը ներկայումս լայնորեն կիրառվում է ժամանակակից սուրբ գրական աստվածաբանության մեջ: Այս նոր մոտեցումը հիմնվում է ոչ միայն սուրբ գրական տեքստերի կրոնական և փիլիսոփայական կողմի վրա, այլև տեքստերի սոցիալ-քաղաքական և տնտեսական կոնտեքստի մեկնաբանման վրա՝ նպատակ ունենալով տեքստերում բացահայտել նշանակությունների մի բազմազանություն:

Խորհրդակցության նպատակն է եղել՝ ընդգծել նման մի նյութի կարևորությունն ու օգտակարությունը ուսանողական քրիստոնեական շարժումների և աշխարհիկ ակադեմիաների հետագա աշխատանքի համար:

ԵՀԽ-ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար Ֆիլիպ Փոթերը գլխավոր զեկուցողներից մեկն է լինելու այն ազգային համաժողովում, որը տեղի է ունենալու տույն թվականի հունիսի 22—24-ը Սիդնեյում՝ Ավստրալիայի միացյալ եկեղեցու բացման առիթով:

Այս նոր եկեղեցին, որի մեջ կմիավորվեն մեթոդական, միաբանական և պրեսբիտերական եկեղեցիները, կունենա շուրջ 200.000 անդամ, 2.400 հոգևոր հովիվ, ավելի քան 1000 եկեղեցական շենք՝ հարակից բազմաթիվ աղոթատներով, և կդեկավարվի 54 կոնսիստորիաների, վեց սինոդների և մեկ ազգային խորհրդի կողմից:

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՇԱՄԲԵԶԻՈՒՄ

Տասներեք երկրներից ժամանած շուրջ երեսուն օրթոդոքս եպիսկոպոսներ համաօրթոդոքս իրենց առաջին նախապատրաստական կոնֆերանսի ընթացքում, որն ավարտվել է 1976 թվականի նոյեմբերի 29-ին Շամբեզիում, Ժենևի մոտ, միաձայնությամբ ընդունել են տասը կետերից բաղկացած մի օրակարգ առաջիկա օրթոդոքս եկեղեցական այն մեծ ժողովի համար, որը նախատեսվում է գումարել մի քանի տարի հետո: 787 թվականին գումարված Նիկիո եկեղեցական ժողովից ի վեր, առաջին անգամ լինելով, օրթոդոքս եկեղեցիները հավաքվելու են այդպիսի մակարդակով:

Մեկ շաբաթ տևած իրենց աշխատանքների ընթացքում օրթոդոքս եպիսկոպոսները բազմակողմանիորեն ուսումնասիրել ու մշակել են վերոհիշյալ ժողովի նախապատրաստման հետ կապված պրոցեդուրային անհրաժեշտ հարցերը: Հանդիպման ժամանակ ջերմ ցանկություն է հայտնվել, որ շարունակվեն և առավել ևս առաջ մղվեն աստվածաբանական դիալոգները օրթոդոքս եկեղեցու և անգլիկան, քրիստոնեական կաթոլիկ, հռոմեական կաթոլիկ ու լութերական եկեղեցիների միջև: Միաժամանակ ընդգծվել է, որ հատուկ ջանք պետք է գործադրվի ամենամոտ ժամանակում անկաշկանդ դիալոգի հնարելու համար նաև արևելյան ուղղափառ հին եկեղեցիների հետ, մի անհետաձգելի խնդիր, որի կատարումն «արդեն իսկ ուշացել է»:

Անդրադառնալով էկումենիկ շարժման մեջ օրթոդոքս եկեղեցու կատարած դերին՝ տույն նախապատրաստական կոնֆերանսը որոշել է, որ «օրթոդոքս եկեղեցու մասնակցությունն այսուհետև առավել ուժեղանա էկումենիկ շարժման ամբողջության մեջ»: Նույնպիսի որոշում է ընդունվել նաև ԵՀԽ-ին նրա մասնակցության կապակցությամբ, «որպեսզի օրթոդոքս եկեղեցիների նպաստը, որն այդ խորհրդին տալիս է էկումենիկ բնույթ, արտացոլվի հատկապես Ժենևի կենտրոնում գործող ԵՀԽ-ի անձնակազմի մակարդակի վրա՝ այդ անձնակազմի մեջ օրթոդոքս աստվածաբանների ներգրավումով» և որպեսզի եկեղեցիների միության համար տարվող աստվածաբանական աշխատանքները «հաշվի առնեն օրթոդոքս տեսակետը և իրենց վրա չկրեն բացառապես բողոքականության դրոշմը»:

Քննության առնելով Զատկի տոնը բոլոր քրիստոնյաների համար ընդունելի միասնական մի օր նշելու հարցը՝ կոնֆերանսը արտահայտել է իր սկզբունքային համաձայնությունը: Սակայն նկատի ունենալով հին եկեղեցում կիրառվող դրությունը և օրթոդոքս տեղական մի շարք եկեղեցիներում հովվական կարգի որոշ դժվարություններ՝ որոշվել է «այդ հարցը իր բոլոր կողմերով ենթարկել հետագա հանգամանալից ուսումնասիրության»:

Կոնֆերանսում ցանկություն է հայտնվել նույնպես համագործակցել ոչ քրիստոնեական մյուս կրոնների հավատացյալների հետ՝ «վերացնելու համար ամեն տեսակի մոլեռանդություն և ապահովելու ազատության, ժողովուրդների եղբայրության և աշխարհի խաղաղության իդեալների իրականացումը հօգուտ ժամանակակից մարդու», առանց ցեղի և կրոնի խտրության:

Համաօրթոդոքս այս առաջին նախա-

պատրաստական կոնֆերանսին, որը հրավիրված է եղել Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի կողմից, և որի երեք հիմնական խնդիրներն են եղել՝ բազմակողմանիորեն նախապատրաստել օրթոդոքս եկեղեցիների առաջիկա եկեղեցական մեծ ժողովը, առաջ մղել միջքրիստոնեական հարաբերությունները ու էկումենիկ շարժումը եկեղեցիների միության ճանապարհին և «ծառայել ամբողջ մարդկությանը օրթոդոքսների և այլ կրոնների հավատացյալների համագործակցության միջոցով», մասնակցել են Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Անտիոքի, Երուսաղեմի, Մոսկվայի, Սերբիայի, Ռումինիայի, Բուլղարիայի օրթոդոքս պատրիարքությունների, ինչպես նաև Կիպրոսի, Հունաստանի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի և Ֆինլանդիայի օրթոդոքս եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները:

«ՀԱՎԱՏՈ ԵՎ ԿԱՐԳԻ» ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

1977 թվականի մայիսին, Հոգեգալստյան տոնի օրը, հանդիսավորապես նշվելու է «Հավատո և կարգի» շարժման համաշխարհային առաջին կոնֆերանսի 50-րդ տարեդարձը Լոզանում, որտեղ 1927 թվականին տեղի ունեցավ այն պատմական ժողովը, որի ընթացքում շուրջ հարյուր քրիստոնեական եկեղեցիներ ներկայացնող ավելի քան 400 պատգամավորներ որոշեցին աշխատել միասին եկեղեցիների միության համար: Լոզանի համալսարանում առաջիկա մայիսի 26-ին, հինգշաբթի օրը, տարեդարձի բացման հանդիսավոր արարողության ժամանակ, ԵՀԽ-ի պատվո նախագահ դոկտ. Վիսերտ Հուֆտը և հռոմեական կաթոլիկ եկեղեցու հայտնի աստվածաբան հայր Իվ Կոնգարը զեկուցելու են «Հիսուն տարվա ուսումնասիրություն միության շուրջ» թեմայի մասին: Հետևյալ օրը երեկոյան, «Պահանջված միության ձևը այսօր» նյութի շուրջ վերլուծական զեկուցումներով հանդես են գալու Տյուբինգենի համալսարանի դասախոս պրոֆ. Ժ. Մոլտմանը և Աթենքի համալսարանի դասախոս պրոֆ. Ն. Նիսիոտիսը:

Հանդիսությունների երկրորդ փուլն սկսվելու է մայիսի 28-ին գիշերային մի հրկումով, որը տեղի է ունենալու Լոզանի մայր եկեղեցում, իսկ հաջորդ օրը, Հոգեգալստի առավոտյան, մատուցվելու է հանդիսավոր ս. պատարագ և ապա կազմակերպվելու է հետմիջօրյա ժողովրդական մի տոնախմբություն, որի ընթացքում հանդիսությունների մասնակիցներին ուղղված ողջույնի մի ուղերձով հանդես է գալու ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերը: Հսկումի, ինչպես նաև Հոգեգալստյան պատարագի արարողությունները հաղորդվելու են համաեվրոպական հեռուստատեսությամբ:

Հանդիսությունների երրորդ փուլը բաղկացած է լինելու մի սեմինարից, որը տեղի է ունենալու Հոգեգալստյան հաջորդող շաբաթվա ընթացքում և որին մասնակցելու են բազմաթիվ աստվածաբաններ և տարբեր եկեղեցիների ղեկավարներ: Սեմինարի աշխատանքների թեման է լինելու «Մեկ մկրտություն, մեկ պատարագ, մեկ նվիրապետություն»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԵՎ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Քրիստոնյաների և մահմեդականների միջև «վերքերը դարմանելու», «նախապաշարումները վերացնելու» և «նոր կամուրջներ հաստատելու» նպատակով ԵՀԽ-ի «Առաքելության և ավետարանչության հանձնաժողովի» տասներկու մասնագետներ և «Իսլամական հիմնարկության» ներկայացուցիչներ անցյալ մայիս ամսին Ծամբեզիում մասնակցել են քրիստոնեական առաքելության և իսլամական **դավահ**-ի հարցի շուրջ կազմակերպված քրիստոնեական-մուսուլմանական մի ժողովի: Ժողովի մասնակիցները ծանոթացել են մի շարք զեկուցումների, որոնք ուսումնասիրության և լայն քննարկման առարկա են դարձել հանդիպման հինգ օրերի ընթացքում:

«Քրիստոնեական առաքելության գաղափարը և կիրառումը» նյութի շուրջ զեկուցել է Առն Ռուդվին եպիսկոպոսը՝ Կարաչիից (Պակիստան): «Իսլամական **դավահ**-ի բնույթը» թեմայով մի ուսումնասիրություն է ներկայացրել պրոֆ. Իսմայիլ Ալ-Ֆարուկին՝ Ֆիլադելֆիայից (ԱՄՆ): Գանայի համալսարանի դասախոս Լամին Սաննեհը հանդես է եկել մի զեկուցումով, որի թեման է եղել «Իսլամական **դավահ**-ի փորձառությունը», իսկ Ինդոնեզիայի կրոնական գործերի նախկին մինիստր Մուհամմադ Ռասջիդին և Զանզիբարի նախկին փոխվարչապետ Ալի Մուհսին Բարվանին ուսումնասիրություններ են ներկայացրել Ինդոնեզիայում և Զանզիբարում քրիստոնեական առաքելությունների մասին:

Սույն հանդիպումը նախաձեռնել ու կազմակերպել է ԵՀԽ-ի «Առաքելության և ավետարանչության հանձնաժողովի» տնօրեն դոկտ. Էմիլիո Կաստրոն, որը «Ինտերնեշընալ Ռեվյու օֆ Միշընս» հանդեսի հոկտեմբերի համարում, անդրադառնալով վերոհիշյալ ժողովի նշանակությանը, նշել է,

որ մահմեդականները, ինչպես և քրիստոնյաները, ունեն առաքելական կոչում և պարտավորություն, որոնք անցյալում նրանց երկուստեք առաջնորդել են ծանր սխալների և անհաշտ թշնամանքների՝ կրոնական երկու համայնքների միջև առաջացնելով լուրջ ընդհարումներ, որոնք հաճախ թելադրված են եղել տնտեսական, քաղաքական և գաղափարական պատճառներից: Նա հույս է հայտնել, որ այս հանդիպումը հնարավորություն կտա թե՛ մեկ և թե՛ մյուս կողմին բացատրելու և պարզաբանելու վերոհիշյալ հաստատումները, հասկանալու և, հնարավորության դեպքում, սրբագրելու միմյանց նկատմամբ մինչև այժմ գոյություն ունեցող սխալ պատկերացումները և, վերջապես, մտածելու այն միջոցների մասին, որոնցով կարելի կլինի փոխել վնասակար գործելակերպերը և որդեգրել գործունեության ճիշտ ուղեգիծ առաքելության և դավանի-ի բնագավառում:

Ժողովի կողմից ընդունված եզրափակիչ փաստաթղթում կոչ է արվել քրիստոնյաներին և մահմեդականներին վերատեսության ենթարկել և այժմեականացնել երկու կրոնների աստվածաբանության, պատմության, մշակույթի, կանոնական և էթիկական ուսմունքների նկատմամբ փոխադարձաբար իրենց ունեցած հասկացողությունները, որպեսզի «պայծառանա քրիստոնեական-մահմեդական հարաբերությունների մթնոլորտը» և հնարավոր լինի «բարիդրացիական համագործակցություն հաստատել» երկու կրոնական համայնքների միջև:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Էկումենիզմի ուսուցման անհրաժեշտությունը օրակարգի գլխավոր հարցերից մեկն է եղել Քրիստոնյաների միության քարտուղարության տարեկան վերջին ժողովում, որը գումարվել է Վատիկանում կարդինալ Ժան Վիլլբրանդսի նախագահությամբ, և որին մասնակցել են վեց կարդինալներ և 16 արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ:

Ժողովի ավարտից հետո Ռադիո-Վատիկանից ձայնասփռված մի հարցազրույցի ժամանակ Քրիստոնյաների միության քարտուղարության փոխնախագահ Ռամոն Տորելլա Կասկանտ եպիսկոպոսն ընդգծել է, որ էկումենիզմը կարևոր մտահոգություններից մեկն էր եղել Վատիկանի Բ ժողովի, և հետևաբար եկեղեցիների միության վերահաստատման նպատակով առաջացած շարժման պատմությունը լրացուցիչ մասը պետք է կազմի կրոնական ուսուցման: «Էկումենիկ շարժումը տագնապի մեջ չէ, ընդհակառակը, զգալի առաջընթաց է ապրում», հայտարարել է նա: Որպես ապացույց այդ բանի, իսպանացի եպիսկոպոսը վկայակոչել է երկկողմանի այն բազմաթիվ դիալոգները, որ ունեցել է հռոմեական կաթոլիկ եկեղեցին այլ դավանությունների պատկանող տարբեր եկեղեցիների հետ: Բացի այդ, նա նշել է, որ Քրիստոնյաների միության քարտուղարության հարաբերությունները ԵՀԽ-ի հետ միշտ ընթացել են դրական զարգացման ուղիով, և որ ստեղծվել է նախապատրաստական խառն մի հանձնաժողով՝ վերահաստատելու համար դիալոգը օրթոդոքս եկեղեցիների հետ: Տորելլա եպիսկոպոսը առանձնապես շեշտել է էկումենիկ համոզմունքների խորացումը քրիստոնյա հավատացյալների մեջ՝ դրանում տեսնելով առաջնորդ մի հզոր ուժ եկեղեցիների մերձեցման ճանապարհին: «Հետևաբար,—եզրակացրել է նա,—էկումենիկ շարժումը տեղատվության մեջ չէ, մենք մեզ ավելի ու ավելի համարում ենք եղբայրներ և, որպես այդպիսիք, մեր վերաբերմունքը միմյանց նկատմամբ պետք է խարբսխված լինի խոնարհության, պարկեշտության և եղբայրական փոխադարձ ճշմարիտ սիրո վրա»:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՊԻՄԵՆԻ ԱՅՑԸ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա-ի հրավերով ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությունը, Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի գլխավորությամբ, 1977 թվականի հունվարի 22-ից փետրվարի 2-ը փոխայցելությամբ գտնվել է Հնդկաստանում:

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչների ուղեկցությամբ, ռուս եկեղեցու պատվիրակությունն իր շրջագայության ընթացքում եղել է Բոմբեյում, Կոշինում, Տրիվանդրումում, Մադրասում, Դելիում՝ ամենուրեք արժանանալով հավատացյալ ժողովրդի ջերմ ընդունելությանը:

Բոմբեյում Պիմեն Պատրիարքը և նրա շքախմբի անդամները այցելել են ս. Կույս Մարիամի մայր տաճարը, ուր ներկա են եղել եկեղեցական արարողության: Քոթայամում ռուս եկեղեցու պատվիրակությունը այցելել է ս. Թովմաս առաքյալի տաճարը, որի հրապարակում, բազմահազար հավատացյալների ներկայությամբ, տեղի է ունեցել բացօթյա համատեղ էկումենիկ աղոթք, որին մասնակցել են Պիմեն Պատրիարքը և

Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը: Քոթայամի աստվածաբանական ճեմարանում հյուրերը հանդիպում են ունեցել ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության հետ:

Հոկտեմբերի 31-ին Դելիում պատվիրակությունը այցելություն է տվել Հնդկաստանի վարչապետ Ինդիրա Գանդիին և հանրապետության նախագահ Ֆախրուդդին Ալի Ահմեդին:

«ՍՍՀՄ—Հնդկաստան» ընկերության մշակութային կենտրոնը կազմակերպել է մի հարցազրույց, ուր հայտարարություն է տրվել մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության համար:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԶԱԳՈՐՍԿՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1977 թվականի հունվարի 25-ին Զագորսկում, Մոսկվայի աստվածաբանական ակադեմիայի Բարեխոսության տաճարում, ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի օրհնությամբ, տեղի է ունեցել էկումենիկ աղոթք քրիստոնյաների միության համար: Համատեղ աղոթքի արարողությունը ղեկավարել է Մոսկվայի աստվածաբանական ակադեմիայի և հոգևոր ճեմարանի վերատեսուչ տ. Վլադիմիր Դմիտրովսկի արքեպիսկոպոսը:

Աղոթքին մասնակցել են՝ քրիստոնյա-ադվենտիստների ավետարանական եկեղեցուց՝ Տուլայի համայնքի հոգևոր հովիվ Մ. Պ. Կուլակովը, Հայաստանյայց առաքելական եկեղեցուց՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ներկայացուցիչը Մոսկվայում, հռոմեական կաթոլիկ եկեղեցուց՝ Մոսկվայի ս. Լոյուս եկեղեցու ավագերեց հայր Ստանիսլավ Մաժելյան, քրիստոնյա-մը-կրտչականների ավետարանական համամիութենական խորհրդից՝ Վ. Գ. Կուլիկովը, ռուս պրավոսլավ եկեղեցուց՝ միջեկեղեցական արտաքին հարաբերությունների փոխնախագահ տ. Հոբ Զարայսկի եպիսկոպոսը, Մոսկվայի Աստվածահայտնության պատրիարքական եկեղեցու ավագերեց տ. Վիտալի Բորովոյը և ավագ քահանաներ Անատոլի Նովիկովն ու Նիկոլայ Պետրովը:

Աղոթքին մասնակցել են նաև Մոսկվայի աստվածաբանական ակադեմիայի և հոգևոր ճեմարանի դասախոսներն ու ուսանողները:

Քրիստոնյաների միության մասին քարոզով հանդես է եկել տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Աղոթքի ավարտին ներկաներին օրհնություններ են բաշխել Վ. Գ. Կուլիկովը, տ. Տիրան վարդապետը և տ. Վլադիմիր արքեպիսկոպոսը:

Էկումենիկ սույն աղոթքին մասնակցել են նույնպես այլ դավանությունների պատկանող քրիստոնյաներ, ինչպես նաև Մոսկվայի դիվանագիտական անձնակազմի ներկայացուցիչներ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի մարտի 15—17-ը Մոսկվայի «Ուկրաինա» հյուրանոցի սրահներից մեկում տեղի է ունեցել Խաղաղության համակրոնական համագումարի նախապատրաստական կոմիտեի հերթական հանդիպումը:

Նախապատրաստական միջազգային կոմիտեին մաս են կազմում, հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, գերշ. տ. Ծահե արք. Աճեմյանը և գերշ. տ. Արսեն եպս. Բերբերյանը:

Սույն հանդիպմանը մասնակցել են տ. Արսեն եպս. Բերբերյանը և Մոսկվայի ու Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Հանդիպմանը ներկա են եղել աշխարհի տարբեր երկրներից Մոսկվա ժամանած զանազան կրոնների շուրջ 70 ներկայացուցիչներ: Համագումարը տեղի է ունենալու ընթացիկ տարվա հունիսի 6—10-ը, իսկ նախապատրաստական կոմիտեն իր աշխատանքները վերջացնելու է հունիսի 1—2-ին:

Մարտի 17-ին Նախապատրաստական կոմիտեն հրապարակել է մի հաղորդագրություն, որտեղ ամփոփված են այդ հանդիպման ընթացքում ընդունված որոշումները:

Նույն օրը, ժամը 16-ին, Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Պիմենը «Սովետսկայա» հյուրանոցում, ի պատիվ հանդիպման մասնակիցների, տվել է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են եղել հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, շուրջ 350 հոգի:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Թ. 112բ.—Արիստոտէլի պատմութենէ կենդանեաց. Գիրգ տասներորդ:

Թ. 118ա.—Արիստոտէլի զմասանցն կենդանեաց. Գիրգ առաջին:

Ի Թէոթորոս Գազայ թարգմանչէ.

ընդ ոճիւն Ավէռոսի Գոստուպէնսիոյ,

Յակոբ Մանթինոս սպանիացի եբրայեցւոյ բժշկէ թարգմանչէ:

Թ. 129ա.—Արիստոտէլի զմասանցն կենդանեաց. Գիրգ երկրորդ.

ընդ մեկնութեանն Աւէրիոսի.

Թ. 156բ.—Արիստոտէլի զպատմութենէ կենդանեաց. Գիրք երրորդ.

ընդ մեկնութեամբ Աւէրիոսի:

Թ. 202ա.—Արիստոտելի զկենդանեաց գայլման.

Ի Նիկողայոս Թոմէոս թարգմանչէ.

Յառաջադրին խնդիրք զքայլմանէ կենդանեաց:

Թ. 210բ.— Արիստոտէլի զմոգոյ. Գիրգ երեք.

ընդ մեկնութեանցն Աւերիոսի և ճնագոյն թարգմանութեանն ածեալ յամբողջութիւն իւր:

Թ. 213ա.—... և այսպէս նմանէ ի վերնագոյն տեղւոջ, ցորում ասէ զգաղտնի վճիռսն փիլիսոփայից, լուիցեն, յանախ հանապազ ի փափայ ընթանան, որ վերամնայ գերապայծառ կարտինալ, զայս իմ արարեալ դրուատս, ոչ յինքենէ որ առաւել հեռի ատորև քան զարժանապատուութիւն քո գոլ կայանայ, այլ յիմոյ ի քեզ զնկատումն տրամակշռիցես, կամիմ, ողջ լեր, ի Փաթաւիա, յուլիսի ամսոյ 7, 1552:

Թ. 213բ.— Զկարգէ բնական գրեանցն. վիճաբանութիւն Արիստոտէլի.

Ի գրեանցն Մարկոսի Անտոնի Փասէրինի Եանվոսի արտահանեալ:

Թ. 216բ.—Ցանկ գլխոց երից գրեանցն հոգւոյ:

գրեալք նախկին գրեանցն հոգւոյ:

Թթ. 218ա—224ա.—(Այստեղ տրված է ձեռագրի բոլոր հատվածների և նյութերի մանրամասն ցանկը այբբենական կարգով):

Ձեռագրում կա միայն երեք հատարակ գծանկարներ՝ թ. 183ա, թ. 205ա («Շարժումն օձու») թ. 208բ (ձեռքի և ոտքի շարժման մասին՝:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրի սկզբում գտնվող պահպանակի երկրորդ էջում կա մի փոքրիկ կնիք, որ անընթեռնելի է:

Թ. 227բ.—Կենդանեաց, կենդանեաց վայ թողեալ:

№ 402
ՇԱՐՈՅԳՐ ՄԱՐԳԱՐՏԻ

Թերթերը՝ 182:— **Պրակները՝** 24, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Ա և Է՝ 5, Դ և ԻԴ՝ 6 թերթից են:— **Մեծությունը՝** 30,3×20,5×3 սմ.:—**Նյութը՝** դեղնած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով ուղիղ գծեր են քաշված:—**Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար, սակայն տեղ-տեղ որոշ թերթեր պակասում են:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 3բ, 4բ, 5ա, 5բ, 6բ, 7բ—9բ, 10բ, 11ա, 13բ, 14բ, 15բ, 16բ, 17բ, 18բ, 19բ—20բ, 21բ, 23ա—24բ, 31բ, 32բ, 33բ, 37բ, 39բ, 40բ, 43ա, 43բ, 44բ, 45բ, 46բ, 47բ, 48բ, 49բ, 50բ, 51բ, 52բ, 53բ, 56բ, 62բ, 63բ, 64բ, 65բ, 66բ, 69բ, 83բ, 84բ, 85բ, 87բ, 88բ, 89բ, 91բ, 95բ, 99բ, 100բ, 103բ, 106բ, 108բ, 112բ, 114բ, 120ա, 120բ, 136բ, 147բ, 172բ, 173բ, 176բ, 181բ և 182ա:—**Տողերը՝** անհամաչափ, 2—33:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** մի քանի տեսակի նոտրգրեր:—

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից և ԺԲ-ից:

Զարդագրություն՝ չունի։—**Գրիչները՝** մի քանիսն են, որոնցից մեկի անունը Քրիստափոր վարդապետ է, իսկ մյուսներինը անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝** անհայտ։— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Կաիրեից Եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ Զավեն Եպիսկոպոս Չինչինյանի ձեռամբ 1973 թ. նոյեմբեր ամսին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է կրոնա-բարոյական բազմահարյուր խրատներ, խորհուրդներ, առակներ, առածներ և կարճ պատմվածքներ, որոնք բոլորը դասավորված են փոքր վերնագրերի տակ։ Ստորև տրվում է այս վերնագրերից մի մասը միայն։

Թ. 4ա.—ՅԱստուծոյ փախչիլ անհնարին է։
Թ. 14ա.—Հովիւ քաջ։
Թ. 15ա.—Գող կամ գայլ։
Թ. 18ա.—Նշան իմաստու(թեան)։
Թ. 19ա.—Ուսանի ի խոկալն։
Թ. 26ա.—Բարկացուցանէ զԱստուած։
Թ. 27ա.—Կերակուր Աստուծոյ։
Թ. 28ա.—Յիմարութիւն։
Թ. 29ա.—Ընդդէմ օրինաց մեղանչէ։
Թ. 31ա.—Ընդդէմ հրեշտակաց։
Թ. 35ա.—Արժանաւոր նուէր։
Թ. 36ա.—Անարժան նուէր։
Թ. 40ա.—Մոռացուցանէ զհաշիւ։
Թ. 41ա.—Առնէ ժառանգ գեհենոյ։
Թ. 42ա.—Յիմար վասն հոգևորին։
Թ. 46ա.—Վախճան։
Թ. 47ա.—Զանքննելի իրաւանց։
Թ. 51ա.—Հանգստութիւն։
Թ. 54ա.—Զդժուարութենէ։
Թ. 55ա.—Յոյս և համբ(երութիւն)։
Թ. 56ա.—Զինուորութիւն չար։
Թ. 58ա.—Մունետիկ։
Թ. 59ա.—Յորմէ հեռանայ Աստուած։
Թ. 60ա.—Ապերախտութիւն։
Թ. 61ա.—Զերախտեացն Աստուծոյ։
Թ. 62ա.—Ընդդէմ բազմաց։
Թ. 63ա.—Զսպանութենէ։
Թ. 65ա.—Զանիրաւութենէ։
Թ. 66ա.—Զծնողաց։
Թ. 68ա.—Զմարմնոյ և զարենէ Տեառն։
Թ. 69ա.—Պանդխտութիւն։
Թ. 71ա.—Զանոխակալութենէ։
Թ. 72ա.—Զսիրոյ թշնամեաց։
Թ. 73ա.—Զխրատուց։
Թ. 74ա.—Զանխրատից։
Թ. 75ա.—Զփարթամութեանց։
Թ. 76ա.—Զքղջախոհութենէ։
Թ. 78ա.—Զլեզու է։
Թ. 79ա.—Այր ով իցէ։
Թ. 80ա.—Կատարելութեան։
Թ. 82ա.—Զտրտնջողաց։
Թ. 84ա.—Կամք Աստուծոյ։
Թ. 86ա.—Վարձկան։
Թ. 88ա.—Զօրացուցանէ զյոյսն։
Թ. 89ա.—Փառաւորի Աստուած։
Թ. 90ա.—Կրթութիւն։
Թ. 91ա.—Բաժակ յԱստուծոյ։
Թ. 92ա.—Առ աղօթս։
Թ. 95ա.—Դառն և քաղցրն։
Թ. 96ա.—Կցորդութիւն ընդ Քրիստոսի։
Թ. 98ա.—Օրինակք ի սրբոց։
Թ. 101ա.—Առակ յետնոց։
Թ. 104ա.—Ճանապարհ քրիստոնէութեան։
Թ. 105ա.—Պաշտօն Աստուծոյ։
Թ. 105բ.—Զաղօթս զօրացուցանէ։
Թ. 107ա.—Ուսոյց Քրիստոս։
Թ. 108ա.—Աւանդ Քրիստոսի։
Թ. 111ա.—Վճարումն յանցանաց։
Թ. 113ա.—Մարտիրոս։
Թ. 114ա.—Պատճառն առնէ։
Թ. 115ա.—Հարկ աշխարհի։
Թ. 116ա.—Զմասն քահանայից։
Թ. 118ա.—Պտուղ մեղաց։
Թ. 119ա.—Ընկեր Աստուծոյ։
Թ. 122ա.—Եմք ի մէջ ծովու։
Թ. 125ա.—Փրկէ ի դժոխաց։
Թ. 129ա.—Նախասահմանութիւն։
Թ. 130ա.—Զինուորութիւն։
Թ. 132ա.—Հատուցումն։
Թ. 135ա.—Զարեաց յաջողմունք։
Թ. 136ա.—Բաժակ ապաշխարութեան։
Թ. 137ա.—Բաժակ մեղաւորաց։
Թ. 138ա.—Բժշկութիւն։
Թ. 139ա.—Գին արքայութեան։
Թ. 140ա.—Դուռն երկնից։
Թ. 141ա.—Զարգելմանց մեղք։
Թ. 142ա.—Թերահաւատութիւն։
Թ. 143ա.—Անյուսութիւն։
Թ. 144ա.—Անպատշաճ խնդրուածք։
Թ. 146ա.—Չար խնդրուած։
Թ. 147ա.—Շատախօսութիւն։
Թ. 152բ.—Անբարեգործութիւն։
Թ. 154ա.—Զչար խորհրդոց։
Թ. 155ա.—Զհպարտութենէ։
Թ. 156ա.—Զնախանձու։
Թ. 158ա.—Ծուլութիւն։
Թ. 159ա.—Ագահութիւն։
Թ. 160ա.—Որկրամոլ։
Թ. 162ա.—Անյարատևութիւն։
Թ. 163ա.—Հայր մեր։
Թ. 164ա.—Սուրբ եղիցի անուն քո։
Թ. 165ա.—Եկեսցէ արքայութիւն քո։
Թ. 166ա.—Եղիցին կամք քո։
Թ. 172ա.—Զիմաստութիւն։
Թ. 173ա.—Զկեանս։
Թ. 175ա.—Վասն եկեղեցւոյ։
Թ. 176ա.—Զխնդրելեաց։
Թթ. 178ա—179բ.—(Տրվում է նյութերի ցանկը)։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Երեսի կազմի ներսի կողմից)
Շարոցք մարգարտի:
Ա. 1ա.—Գրքուկս որ կոչի Շարոցք մարգարտի:
Թ. 153բ.—Քրիստափոր վարդապետ (այս էջում անունը նշված է չորս անգամ: Մի շարք ուրիշ էջերում էլ նշված է գրիչներից մեկի՝ Քրիստափորի անունը, այսպես՝ թթ. 36ա, 71ա, 77բ, 165բ և 167բ):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Երեսի կազմի ներսի կողմից)
Թիւ 8:
Թ. 1ա.—Թիւ 8:

№ 403
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 295:— **Պրակները՝** 25, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի բ և ի՝ 10, իսկ՝ 11 թերթից են:— **Մեծությունը՝** 35,5×24,8×3,8 սմ.,—**Նյութը՝** դեղնած դիմացկուն թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ հաստ ստվարաթուղթ, որի պիտակի վրա գրված է «Պատմութիւն Եփեսոսի Սուրբ ժողովոյն», ապա ներքևում՝ № 23, կարգ 24, տեսակ 18:— **Պահպանակները՝** ձեռագրի սկզբում երկու թերթ ապիտակ մաքուր թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն.— **Դատարկ թղթերը՝** պահպանակի երկու թղթերը, թթ. 1ա, 1բ, 286բ—295բ:— **Տողերը՝** 37 (երբեմն միայն 38):— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիրը Ստամբուլից բերվել է Վահան Եպիսկոպոս Տերյանի ձեռամբ 1973 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է Տիեզերական ժողովների ընդունած եկեղեցական կանոնները, ինչպես նաև այդ ժողովների նկարագրությունը, մասնակիցների անունները և պաշտոնները, զանազան ճառեր և նամակներ: Ստորև տրվում է գրքում նշված վերնագրերի մի մասը միայն:

Թ. 6ա.—Թուղթք գրեցեալք յառաջ քան զՆիկիոյ ժողովն:

Թ. 17ա.—Գիր Նիգոմէտիոյ Եպիսկոպոսին՝ Եւսեբիոսի և Թէոկնիոսի Նիկիայ Եպիսկոպոսին:

Թ. 34ա.—Պատմութիւն Կոստանդնուպօլսոյ Սուրբ ժողովոյն՝ որ է երկրորդ ընդհանրական ժողով:

Թ. 59ա.—Թուղթ Կիրղի Աղեքսանդրիայ Եպիսկոպոսի առ Կելեստինոս Հռովմայ Հայրապետն:

Թ. 84բ.—Օրինակ հրովարտակի, զոր առաքեաց յոյժ բարեպաշտ թագաւորն Թէոդոս առ Կիւրեղ Եպիսկոպոսն Աղէքսանդրիայ:

Թ. 124բ.—Օրինակ թղթոյն զոր գրեցին կղերիկոսքն Կոստանդնուպօլսոյ՝ առ Սուրբ ժողովն:

Թ. 140բ.—Թուղթ Կելեստինոս Պապին առ Թէոդոս կայսրն:

Թ. 164ա.—Թուղթ Նեստորին առ սրբազանագոյն Կիւրեղին Թէոդոս կայսերն:

Թ. 169ա.—Օրինակ թագաւորական գրոց, որք առաքեցան յԵփեսոս առ Սուրբ ժողովն ձեռամբ Պաղլադ նախարարին առ ի աւերել զգործս հարցն, իբր թէ պարտ իցէ վերատին լինել քն(ն)ութիւն հաւատոյ:

Թ. 194ա.—Մասն երրորդ որով բովանդակին ոմանք որք առ սիւնոդոսն պատկանին, և այլք ոմանք յետ ժողովոյն որք գործեցան:

Թ. 214ա.—Թուղթ Սուրբ Կիւրեղ վերատեսչին Աղեքսանդրիայու առ Եւսեբիոսն ընդդէմ հակառակիսութեան Թէոդորիտոսին ի վերայ երկուտասան գլխադրութեանն:

Թ. 229բ.—Սահման եպիսկոպոսացն Նիկիայու ժողովոյն վասն մարդեղութեան բանին Աստուծոյ ընդդէմ Պօղոսի Սամոսատցւոյն:

Թ. 241ա.—Ճառ Կիւրեղ Աղէքսանդրացւոյն ասացեալ յԵփեսոս յաւուր Սրբոյն Յօհաննու առնտաբանչին:

Թ. 262բ.—Օրինակ թղթոյն զոր գրեաց Կիւրեղն՝ առ Ակակիոս Եպիսկոպոսն վասն նոխազի արձակելոյ:

Թ. 274ա.—Թուղթ նոյնոյ Քրիստոսի Պապին առ Յօհան Անտիոքացին:

Թ. 275բ.—Նիկիոյ հաւատամքն:

Թ. 282ա.—Պատուէր իշխանացն՝ առ ի չընթեռնելոյ զգրեանսն Նեստորի:

Թ. 283բ.—Յանկ Սրբոյ Աստուածային մատենիս:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 21ա.—Թարգմանեցեալ ի նուաստ Յակոբ դպրէն՝ ի լեզուէն յունաց և լաթինացւոց ի փառս Աստուծոյ և ի զուարճութիւն հայկազունեացն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 283բ.—Անդրէաս վարդապետ ակնցի Ազնիւանց, գրագիր Պատրիարքարանին Պոլսոյ, 1839 նորոգ ստորագրեցի:

№ 404
ԳՐՈՒԹԻՒՆ ՅԱԿՈԲ
ՆԱԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Թերթերը՝ 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 31×21,5 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն ապիտակ թուղթ:—**Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 2ա և 2բ:— **Տողերը՝** 26:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը** և **Պատվիրատուն՝** Հակոբ Նալյան պատրիարք Կ. Պոլսի (1741—49 և 1752—64 թթ.):— **Ժամանակը՝** 1764 թ.:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:—**Ծանոթություն՝** Հակոբ Նալյան պատրիարքի սույն գրությունը Ստամբուլից բերել է Վահան Եպիսկոպոս Տերյանը 1973 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
Է

Ջօրութիւն գրոյս այս է, որ ես Յակօբոս Պատրիարքս Կոստանդնուպօլսոյ, ի ՌՄԺԳ (1764 թ.—Ն. Մ.), ի մայիս ամսոյ Բ (2), ի Հայոց թուին, իմովս կամաւ և յօժարութեամբ, զայսոսիկ ստորև գրեալ զգեստքս ետու և շնորհեցի Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի. որք են այսոքիկ՝ մէկ ոսկի սկի(ի) ականակուռ. էլմաս, կարմիր եախուտ և զիւմրիւտ սկներով զարդարեալ: Հանդերձ ոսկի մաղզմայով: Մէկ սկոյ ծածկոց բանուած սրմայով և մարգարտով: Մէկ ստօփայ տիպայ գօրփուրայ: Մէկ բաժկաման արծաթեայ. ոսկի եալտզով: Մէկ պատուական գաւազան, եէշիմ գլխով, և ոսկի վիշապագլխով՝ էլմաս, կարմիր եախուտ և զիւմրիւտ ակամբք զարդարեալ, որոյ բունն է զիլպահար ձևով արծաթ բանած. և զմէջն պաղայով և արուսեկով լցած, և ի գլուխ գաւազանիս՝ փոքր խաչ մի. չորս զիւմրիւտ և չորս մարգարտով: Երկու շուրջառ դեղին ստօփայ տիպայ՝ խատիֆէ ծաղիկներով: Երկու սարկաւագի ուրար, դեղին ստօփայ. շրջապատքն սպիտակ շէքիտով: Երկու դպրի շապիկ, սպիտակ կտաւի վերայ՝ սիւզէնի բանած, որոց եախայքն են վէնէտիկու կլապտօնով բանուած: Ընդ ամէնն ԺԱ (11) կտոր բան: Արդ յայսոսիկ վերոյ գրեալ էշեայիցս՝ ես իլախայ չունիմ, զի Սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի, կամաւ և յօժարութեամբս շնորհեցի: Վասն որոյ՝ զկնի անցման իմոյ, ով որ ի ծանօթից և ի յազգականաց իմոց վասն վերոյ գրեցելոցս՝ ի դատ մտեալ ընդ Սրբոյ Աթոռոյն և Աթոռայնոցն, կամիցի զեղեալ յիշատակս(ս) զայսոսիկ իբրև զմիրաս իւրացուցանել. այնպիսին անիծեալ, կապեալ և բանադրեալ է ի հոգևոր իշխանութենէ և յառաքելական կարգէս իմմէ, ուստի և կնքեցի զգիրս իմով կնքով, և լերուք ողջք համայն տեսօղք գրոյս, Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գրության վերևի մասում կա Հակոբ պատրիարքի փոքրիկ կնիքը, 1,2×1,2 սմ. չափերով, որի վրա կարդացվում է նրա անունը՝ «Յակոբ վարդապետ»:

№ 405
ԳՐՈՒԹԻՒՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 40,2×26,3 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 18:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբական տառեր:— **Զարդագրություն՝** չունի— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն:**— անհայտ:— **Ժամանակը՝** 18-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** տաճկերեն սույն գրությունը Ստամբուլից բերել է Վահան Եպիսկոպոս Տերյանը 1973 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
Սույն գրությունը թվում է, թե կապ ունի հայերի հետ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Թերթի առաջին երեսում տաճկերեն գրությունից բացի աջակողմյան լուսանցքում կա տաճկերեն երկու գրություն և հայերեն երկու կնիք, որոնք հետևյալներն են.—

Ա. Կարճ գրության վերջում կա հիջրայի 1147 թվականը (1734 թ.—Ն. Մ.), որի կողքը կա Կոստանդնուպոլսի Հակոբ Նալյան պատրիարքի փոքրիկ կնիքը (նույնը, ինչպես № 404 գրության վրա) «Յակոբ վարդապետ»:

Բ. Երկար գրության վերջում կա հիջրայի 1171 թվականը (1757 թ.—Ն. Մ.), որի կողքը կա փակագրով հայերեն եպիսկոպոսական մի փոքրիկ կնիք (1×1 սմ. չափերով), որի վրա կա հետևյալ թվականը՝ ՌԺԶԶ (1737 թ.—Ն. Մ.):

Թերթի կոնակում գրված է հետևյալը.—

Ա. Մահտեսի Աստուածատուրին է, պաթալ 1171 (1737 թ.—Ն. Մ.) շեվալին ԺԴ (14):

Բ. Կա ձվաձև մի կնիք (1,7×1,3 սմ. չափերով), որի վրա գրված է փակագրով «Յովհաննէս Եպիսկոպոս—ՌՃԽԹ» (1700 թ.—Ն. Մ.), որի տակ մատիտով գրված է «1800 Փրկչական—հաւանաբար Զամաշրճեան Յովհաննէս պատրիարքն է»:

№ 406
ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թերթերը՝ 327:— **Պրակները՝** 41, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի ԺԸ՝ 10 և ԽԱ՝ 3 թերթից ևն:— **Մեծությունը՝** 20,5×16,2×5,7 սմ.:— **Նյութը՝** դեղնած դիմացկուն թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ հաստ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով նախշեր է փորագրված երկու երեսին:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն: —**Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** անկանոն, 16—21:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր: —**Զարդագրություն՝** ձեռագրում կան երկու տեսակի ճկարչական նմուշներ, որոնցից առաջինը գծանկարներ են, կատարված թանաքով, որոնք բավականին գեղեցիկ են: Այսպես 1բ, 49բ, 60ա, 90բ, 125ա, 128բ, 177բ, 236բ, 250բ, 251ա, 277բ, 287բ, 288ա, 319բ և 327բ էջերում եղած գծանկարները ներկայացնում են ծաղիկներ, ծառեր, սիրամարգեր, խաչեր և գլխազարդեր: Առանձնապես ավելի գեղեցիկ են 60բ (օձ և արծիվ) և 129բ (աղվես, արծիվ և աղուց) էջերի գծանկարները: Ձեռագրի ճկարչության երկրորդ տեսակը գունավոր ճկարներն են, որոնք կատարված են պարզ ջրաներկով և ունեն հասարակ բնույթ: 2ա, 32բ, 50ա, 61ա, 67ա, 85բ, 91ա, 91բ, 92ա, 93ա, 93բ, 94բ, 130ա էջերում եղածները գրեթե բոլորն էլ հասարակ գլխազարդեր են: Առանձնապես գեղեցիկ են 318բ (մի շենք, որի կտուրին մեծ թռչուն է կանգնած—ճկարի տակը գրված է «Նապալիոն թագաւորի պալատն է») և 319ա (երկու սիրամարգ և մի

հատ թոչնագիր) էջերում եղածները:—**Գրիչը՝** Մարգար:— **Պատվիրատուն՝** հայրը՝ Կոստանդ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1825 թ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն ձեռագիրը հանձնել է Ջեռագրատուն 1974 թ. նոյեմբերի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ջեռագիրն ունի երկու գլխավոր բաժին, առաջինը՝ Պղնձե քաղաքի պատմությունն է, իսկ երկրորդը՝ Աղվեսագիրքը: Սրանցից բացի վերջում կան նաև մի քանի բաժին այլ նյութերի շուրջ գրված: Ստորև տրվում է գլխավոր վերնագրերը:

Թ. 1ա.—Գիրք պատմութեան վասն Պղնձէ քաղաքին, և հարցմունք աղջկան և մանկանն, և պատմութիւն Խիկարա և Փահլոզ թագաւորին, և այլ որ է օրինակ աշխարհիս:

Ի Հայրապետութեան Տեառն Աղէկսանդրի Զուղայեցւոյ սրբազան կաթուղիկոսի ամենայն հայոց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Եւ ի յամի Փրկչին ՌԷՃԹ-ին (1709 թ.—Ն. Մ.): Եւ Հայոց ՌՄԾԸ-ի (1709 թ.—Ն. Մ.) ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս:

Թ. 2ա.—Պատմութիւն վասն Պղնձէ քաղաքին, որ է օրինակ աշխարհիս:

Գլուխ Ա.

Կայր ի Պաղտատ քաղաքն ...

Թ. 32բ.— Գլուխ Բ.

Այր մի էր մեծատուն ...

Թ. 50ա.— Գլուխ Գ.

Վարք և պատմութիւն Ալէքսիանոսի Ճքնաւորին:

Թ. 61ա.— Գլուխ Դ.

Պատմութիւն Փալահուր թագաւորին:

Թ. 67ա.— Գլուխ Ե.

Խրատք և իմաստութիւնն ասացեալ է ի Խիկարայ, զոր խրատեն որդիք մարդկան և ի միտ առնոյն իմաստութեամբ:

Թ. 85բ.— Գլուխ Զ.

Խրատ և նէսիկաթ օգտակար արարեալ զարմանալան թագաւորին ... .

Թ. 91ա.— Գլուխ Է.

Հաջելի պատմութիւնք խեշտ շարադրութեամբ:

Թ. 91բ.— Գլուխ Ը.

Պատմութիւն երկրորդ . . . . . .

Թ. 129ա.— Գիրք Աշխարհաց և Առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք. ի Հայրապետութեանն Տեառն Յակոբայ կաթուղիկոսի Սրբոյ Էջմիածնի: Յամսթէլստամում, ի թուոյ Փրկչին 1668, և Հայոց ՌՃԺԷ (1668 թ.—Ն. Մ.) Հոկտեմբերի ամսոյ մէկ:

Թ. 130ա.— Գիրք Առասպելաբանութեանց, որ ասի Աղուէսագիրք, արարեալ սակս խրատու և զգուշութեանն (տրվում է 161 պատմություն):

Թ. 230ա.—Խաղ խրատու (տրվում է 7 խրատական խաղեր):

Թ. 237ա.— (Տրվում է 16 տաղեր):

Թ. 251ա.— Գլուխ Ա.

Բանք պիտանիք, օգտակարք և խոհեմականք հաւաքեցեալ յումեմնէ բանասիրէ ի զանազան գրեանց այբուբենական կարգաւ. ի ներքոյ բառեակ թուոյ:

Թ. 278ա.— Գլուխ Բ.

Յաղագս պատկերացութեան առեալ ի մեծէ փիլիսոփայէն Արիստոտելէ Ալբերթոս:

Թ. 284ա.— Գլուխ Գ.

Լուսնացոյց և երազացոյց:

Թ. 288ա.— Գլուխ Դ.

Երազաւոր զոր ասացեալ է Դանիէ(լ) մարգարէն վասն պէս պէս տեսակաց:

Թ. 312ա.— Գլուխ Ե.

Տաղ ի վերայ նավին:

Թ. 313բ.— Գլուխ Զ.

Թ. 315ա.— Գլուխ Է.

Ներգործութիւնն մանիլու փաթիթէն շատ լաւ է յուժ բժիշկայ (այստեղ բուժման 13 դեղատոմս է տրվում):

Թ. 316ա.— Գլուխ Ը.

Թ. 318ա.— Գլուխ Թ.

Վասն դատարկութեանն տեղւոյն:

Թ. 320ա.— Ցանկացողք պարտիս լեսնիլ եթէ զինչ շարադրեալ է ի մէջ նորատիպ գրքիս, 282 պատմութիւն գրեցի (այստեղ տրվում է այս պատմությունների այբբենական ընդհանուր ցուցակը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.—Մարգար (գրված է գլխազարդում):

Թ. 32բ.—Կոստանդ (գրված է գլխազարդում):

Թ. 319ա.—Կարդա եղբայր ով սիրել . . . . ի
Ուշիմ մտօք զարմանալ . . . . . ի
Ես Մարգարս նուաստ հոգ . . . . ի
Որ եմ որդի պարոն Կոստանդ . . . ի
Որէն որդի գոլով Տէր Պետրոս . . . ի
Գրկուկս այս որ նորոգեց . . . . . ի
Նովէմբր ամսին սկսեց . . . . . ի
Մարջ սկիզբն աւարտեց . . . . . ի
Այժմեան թուոյս Փրկչ . . . . . ի
Հազար և ութն հարիւր . . . . . ի
Քսան և հինգ ամբ առել . . . . . ի
Եւ օգնութեամբն ի սմա գրտ . . . . ի
Հայցեմ եղբայր ով սիրել . . . . . ի
Եթէ գտ(ն)ես տղալ ինչ սոր. . . . . ի

Թ. 319բ.—Ներումն խնդրեմ յայսմ բան. . . . ի
Եթէ յեղբարց որ ընթերցց . . . . . ի
Մի հայր մեղայ և Գ Տէր ողորմ. . ի
Զիս և զիմ ծնողսն յիշեսց . . . . . ի
Ցաւել բան զայն ինքն գիտասց . . . ի
Ցիշողն յիշեալ իսկ լինից . . . . . ի
Առաջի անմահ գառին Քրիստոս . . . ի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Գրութեան ի թիվն Փրկչի 1863 Զուղայ... զայս գնեցի հարգոյ Պրն. Մարկոս մանտեսի Հովսէփ, Տէր Մինաս Պետրոսեան Պողոսեանց: 20 ռուփի: Քսան Ռուփի:

Թ. 1բ.—Գրեցաւ ի շիրս, և աղջկանս, և աղջկանս:
Թ. 2ա.—Այվազը բարևում է, 1919 թվից:
Թ. 3ա.—1863 թ. գրեցաւ:
Թ. 32բ.—Կոստանդ այր մի էր մեծատուն և իշխան ի քաղաքի մի:
Թ. 128բ.—Գիրք:
Թ. 250բ.—Տէր ողորմեա(յ), վերջ, Տէր ողորմեա(յ):

№ 407
ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 72:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— **Մեծությունը՝** 19,4×13,7×1,7 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն սպիտակ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ:— **Պահպանակները՝** սկզբում չորս և վերջում երկու թուղթ:— **Վիճակը՝** լավ: —**Գրությունը՝** միապլուն:— **Դատարկ թղթերը՝** 69բ—71ա, 72բ:— **Տողերը՝** 25:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի հինգ հատ թռչնագրեր (թթ. 1ա, 3բ, 5ա, 5բ և 6ա), հինգ հատ զարդագրեր (թթ. 3բ, 4ա, 4բ և 5ա), մի հատ էլ լուսանցազարդ (թ. 1ա), բոլորն էլ նկարված հասարակ ոճով: Բազմաթիվ էջերում (թթ. 6բ—19բ) էլ զարդագրերի տեղը բաց է թողնված, սակայն չի նկարված հետագայում:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18—19-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Կահիրեից Եգիպտահայոց թեմի առաջնորդական տեղապահ Զավեն Եպիսկոպոս Չինչինյանի ձեռամբ 1978 թ. նոյեմբեր ամսին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Սկիզբն արասցուք Ավ յայտնութեան և իմաստութեան Ստուղապի արուեստիս, որ է գործիք երկրաչափութեան, և աստեղաբաշխութեանն, և է մեծ իմաստութիւնն ուսումնասիրաց:
Թ. 69ա.— Նշանակութիւնք նշանագրացն որք գտանին Իստուղապի գրգիս:
Թ. 71բ.—(Այստեղ կա մի աղյուսակ, որի առաջին սյունակի վերևում գրված է «Գիր տարոյ», իսկ երկրորդ սյունակի վերևում՝ «Հեթմոյ թագաւորի յատենադպրէ յԱնդրիասէ յիմաստասիրէ արարեալ ձայնագիւտ գեղեցիկ և մղք. ք և»):
Խրատք վերոգրեալ աղիւսեկիս մշտնջենականի ձայնագիւտի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 69ա.—...Եւ զինչ որ գրեցաք աստեղացն՝ բաւական է գիտողացն: Եւ Աստուած յաջողեսցէ ի գործս նոցա: Եւ Քրիստոսի ամենից գիտութեանցն տրուողի փառք յաւիտեանս ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբի պահպանակների վրա գրված է)
Թիւ 10:
Հանրմայխաթուն:
Դուռն առաջին;
Մասն առաջին:
Հարց:
Թիւ 10:
Սկիզբն արասցուք Ավ յայտնութեան և իմաստութեան Ստուղապի արուեստ:
Սկիզբն աբ դուռ Դունա:
Թ. 1ա.— Ցիշատակ եմ արարեալ գիրքս այս Եգիպտոսի Սուրբ Աստուածածնայ վանուց և Խորէնեան դպրոցին ձեռամբ Սուրբ Երուսաղէմի միաբան Մկրտիչ Եպիսկոպոսի, 1864 նոյ(եմբեր) 11: (Նույն ինքն Մկրտիչ Եպս. Քեֆսիզյան Մարաշցին, որ 1864 —66 թթ. Եգիպտահայոց թեմի առաջնորդն էր, իսկ հետագայում՝ 1871—94 թթ. եղել է Կիլիկիայի կաթողիկոսը:)
(Այստեղ կա ձվաձև մի կնիք, 2,3×1,9 սմ. չափերով, որի վրա գրված է)
Է—Գաբրիէլ Եպկս.:
(Սա շատ հավանաբար Եգիպտահայոց 1830—64 թթ. առաջնորդ Գաբրիել Եպիսկոպոս Մարաշցու կնիքն է):
Թ. 72ա.—Աբգդեզ ... (գրչափորձ):
Դուռն առաջ, ը Հեթմ.:
Թ. 72բ.—Սկիսբ:
Սկիբն արասցուք Ավ:
Սկիբն արասցուք Ավ յայտնութեան և իմաստութեան Ստուղապի ար.:
Աբգդեզ ... (գրչափորձ):
(Ձեռագրի վերջի պահպանակի վրա գրված է)
Սկիսբն:
Դուռն առաջին վասն ցուցանելոյ զգործ:

№ 408
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 96:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 16-ական թերթից:— **Մեծությունը՝** 28,3×19,8×2 սմ.:— **Նյութը՝** դեղնած սպիտակ թուղթ:— **Կազմը՝** լաթակազմ հաստ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մեկական մանուշակագույն հաստ թուղթ:— **Գրությունը՝** միապլուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ և 96բ:— **Վիճակը՝** անբավարար, քայքայված և կազմը պոկված:— **Տողերը՝** 9, երբեմն ավելի նվազ:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծված է:— **Գիրը՝** շղագիր և հայկական նոր խազեր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Սերովբե Սիրունյան, աշակերտ Գրիգոր Մեհթերյանի:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է Ստամբուլից 1974 թ. ձեռամբ Բագարատ Սեմերճյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական նոր խազագրության սույն ձեռագիրը գրված և նոտագրված է պոլսահայ անվանի երաժշտագետ Գրիգոր Մեհթերյանի աշակերտ և Գումգաբուի Սուրբ Հարություն եկեղեցու երաժշտապետ Սերովբե Սիրունյանի կողմից: Գրքի գլխավոր վերնագրերը հետևյալներն են.

Թ. 2ա.—Կանոն երկրորդ կիւրակէին Աղուհացից:
Թ. 14բ.—Մանկունք Ս. Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին:
Թ. 15ա.—Կանոն Գ. Կիւրակէի աղուհացից:
Թ. 21ա.—Տէր յերկնից:
Թ. 27ա.—Տէր յերկնից:
Մանկունք:
Թ. 33բ.—Մեղայ քեզ Տէր մեղայ:
Թ. 41ա.—Կանոն Դ. կիւրակէի (աղուհացից):
Թ. 54բ.—Մանկունք Քառասնից մանկանց Դկ (ստեղի):
Թ. 56բ.—Կանոն Ե. կիւրակէին աղուհացից:
Թ. 61բ.—Հարց պահոց:
Թ. 71բ.—Ողորմեա:
Թ. 74ա.—Կանոն վեցերորդ կիւրակէի Աղուհացից:
Թ. 80ա.—Հարց ապաշխարութեան:
Թ. 89ա.—Հարց (բձ) Ղազարու յարութեան:
Թ. 91ա.—Մանկունք (դկ) ստեղի:
Թ. 92ա.—Կանոն մեծի երկուշաբթիի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում մի փոքրիկ թղթի վրա գրված է)
Ձեռամբ Տիար Բագարատ Սէմէրճեան Իսթանպուլից:
Թ. 1ա.—Սերովբէ Սիրունեան (2 անգամ):
Serobé Sirunyan.
Տարի 1935:
Գրեց Սերովբէ Սիրունեան
(աշակերտ Գրիգոր Մեհթէրեանի)
Վաստակաւոր երաժշտապէտ
Ս. Յարութիւն եկեղեցւոյ ի Գումգաբու:
Թ. 96բ.—(Այստեղ արաբերեն տառերով 6—7 բառ է գրված, նաև մի քանի թվեր):
(Ձեռագրի բոլոր էջերի վերևի անկյունում կա մի կլոր կնիք, 3 սմ. տրամագծով, կենտրոնը՝ մահիկ և աստղ, իսկ շուրջ բոլորը տառերեն մի գրություն):

№ 409
ԱՒԵՏԱՐԱՆ
(Եթովպերեն)

Թերթերը՝ 94:— **Պրակները՝** 12, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի Զ՝ 9 և ԺԲ՝ 5 թերթից են:— **Մեծությունը՝** 18,2×11,8×4,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ և կոշտ մագաղաթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով նախշեր և խաչ է նկարված: Ձեռագիրը դրված է կաշյա հաստարակ մի ուսապարկի մեջ, ուսից այն կախելու նպատակով:— **Պահպանակները՝** երկու թերթ դեղնած կոշտ մագաղաթ սկզբում:— **Վիճակը՝** բավարար, սակայն Յուզմի կոնակի կաշին պոկված է:— **Գրությունը՝** թթ. 1ա—85ա միապուն, իսկ 85բ—94ա երկսյուն:— **Դատարկ թղթերը՝** 94բ:— **Տողերը՝** 30—31:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** ամհարերեն:— **Ձարդագրություն՝** ձեռագրում կան չորս սրբերի ջրաներկ նկարներ ամբողջական էջի ծավալով: Պահպանակի նկարը մի հրեշտակ է ներկայացնում, թ. 31բ-ի նկարը ցույց է տալիս Հայր Աբրահամը, իր որդու՝ Իսահակի վիզն է կտրում, իսկ թթ. 67բ և 89բ ներկայացնում է երկու սրբերի: Բացի այդ ձեռագրում կան հաստարակ երկու գլխազարդ (թթ. 1ա և 73բ), մեկ լուսանցազարդ (թ. 1ա) և հարեր վանականի նորագույն շրջանի մի նկարը (թ. 49բ):— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Մաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** շատ հավանաբար Եթովպիա:— **Մանոթություն՝** Վենետիան Հայրապետը սույն ձեռագիրը հանձնել է Ձեռագրատուն 1974 թ. նոյեմբերի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Պահպանակի առաջին թերթի վրա մատիտով գրված է եթովպերեն մի բառ, իսկ երկրորդ թերթի վրա թանաքով գրված է յոթ բառ:)
Թ. 94բ.—(Թանաքով և մատիտով մի քանի բառ է գրված:)

№ 410
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 147:— **Պրակները՝** 4, անհամաչափ (Ա՝ 38, Բ՝ 39, Գ՝ 40 և Դ՝ 30 թերթից):— **Մեծությունը՝** 21×13,2×1 սմ.:— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ:— **Կազմը՝** լաթակազմ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում կա մեկական մանուշակագույն հաստ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միապուն:— **Դատարկ թղթերը՝** 63բ, 64ա, 108բ—118ա, 119ա—148բ:— **Տողերը՝** անհամաչափ, 7—14:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծված է:— **Գիրը՝** բոլորգիր և հայկական նոր խազեր:— **Ձարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Սերովբե Սիրունյան, աշակերտ Գրիգոր Մեհթերյանի:— **Ժամանակը՝** 20-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Մանոթագրություն՝** ձեռագիրն ստացվել է Ստամբուլից 1974 թ. ձեռամբ Բագարատ Սեմերճյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական նոր խազագրության սույն ձեռագիրը գրված և նոտագրված է պոլսահայ անվանի երաժշտագետ Գրիգոր Մեհթերյանի աշակերտ և Գումգաբուի Սուրբ Հարություն եկեղեցու երաժշտապետ Սերովբե Սիրունյանի կողմից: Գրքի գլխավոր վերնագրերը տրվում են ստորև.—
Թ. 1ա.—Հարց յարութեան (բձ):
Թ. 5բ.—Մեծացուցէ:
Թ. 6ա.—Ողորմեա (բձ):
Թ. 7ա.—Հարց Ծննդեան (գձ):
Թ. 10ա.—Տէր յերկնից:
Օրհնութիւն Ծննդեան Զ-րդ աւուր:
Թ. 15բ.—Հարց բուն Բարեկենդանի (ամ դարձ.):
Թ. 20ա.—Կանոն Գ-րդ կիւրակէի աղուհացից (զկ):
Թ. 55ա.—Օրհնութիւն Ծաղկազարդի կիւրակէին (ամ):

Թ. 66ա.—Համբարձի (բկ):
Թ. 67բ.—Ծաղկազարդի երեկոյին:
Թ. 68բ.—Կանոն մեծի հինգշաբթի (գձ):
Թ. 70բ.—Գանձ:
Թ. 71բ.—Կանոն մեծի ուրբաթի (բձ):
Թ. 74բ.—Հարց (գձ):
Թ. 78բ.—Համբարձի (ստեղի) դձ:
Թ. 81բ.—Կանոն մեծի ուրբաթուն (բձ):
Թ. 84ա.—Դ. Կենդանին յաւիտենից Քրիստոս ...
Թ. 89ա.—Կանոն Սրբոյ Զատկին (աձ. դարձ.):
Թ. 97բ.—Հարց յարութեան (բկ):
Թ. 103ա.—Հարց Ծննդեան Բ-րդ աւուր (գձ):
Թ. 118բ.—Քահանայք և ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր ...
Ի վերինն Երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց ...
Թթ. 145բ—146ա.—(Այստեղ տրվում է բոլոր նյութերի ընդհանուր ցանկը):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Գրեց Սերովբէ Սիրունեան, 1950:
Թ. 74բ.—Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց.
Օրհնեալ և փարաւորեալ է անուն քո յաւիտեան:
Թ. 108ա.—Գրեց Սերովբէ Սիրունեան
(Աշակերտ Գրիգոր Մեհթերեանի)
վաստակաւոր երաժշտապէտ
Ս. Ցարութիւն եկեղեցւոյ ի Գումգաբու:
Թ. 147բ.—Բարեբանիլ, բոշական, բարեկամ.
Seropé Sirunyan.

№ 411
ԲԺՇԿԱՐԱՆ

Թերթերը՝ 158:— **Պրակները՝** 14, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա և Ը՝ 10, ԺԱ և ԺԲ՝ 9 և ԺԳ՝ 11 թերթից են:— **Մեծությունը՝** 14,7×11,2×2,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմը՝** կաշեպատ տախտակ: Սկզբում ունեցել է երկու բռնիչ, որոնք հետագայում ընկել և կորել են:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 15:—**Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագրում կա հասարակ մի հատ թոչնագիր (թ. 140ա) և մի հատ էլ փոքրիկ զարդագիր (թ. 154բ): Բացի այդ սկզբում (թ. 10բ) կա ամբողջ էջի ծավալով մի նկար, ներկայացնելով մանուկ Հիսուսը Աստվածածնի գրկում, որին երկրպագում է ձեռագրի ծնկաչոք գրիչը:— **Գրիչը՝** Խուպիեար.— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** սույն ձեռագիրը հվեր է բերվել Լոս Անջելոսից (ԱՄՆ) 1973 թ. հունիս ամսին Հովհաննես բահանա Կարապետյանի ձեռամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ունի հետևյալ երեք բաժինները.
Թթ. 2ա—9բ.— Դեղատոմսերի ընդհանուր ցուցակը, որ ըստ երևույթին գրված է հետագայում, տարբեր նոտրգրով:
Թթ. 11ա.—139բ.—Այստեղ տրվում է ընդամենը 213 տարբեր տեսակի ցավերի, հիվանդությունների և վարակների բուժման միջոցները (դեղատոմսերը): Թ. 139բ-ից հետո մի քանի թերթ ընկել և կորել են, որով բժշկարանի վերջաբանը կամ հավանաբար ձեռագրի սկզբնական հիշատակարանը անհայտ է:
Թթ. 140ա—157ա.—Ավետարանական փոքրիկ պատմություններ և տերունական խրատներ, կրոնաբարոյական թեմաների շուրջ:
Ծանոթություն—Ձեռագրի թթ. 13բ—17բ էջերում տրված է մի ցանկ 104 օշարակների և քսելիքների որպես բուժման միջոցի: Այստեղ օգտագործված են բազմաթիվ արաբերեն բառեր, որով ենթադրվում է, որ ձեռագիրը կարող է գրված լինի Մերձավոր Արևելքի արաբական երկրներից մեկում, որտեղ 17—18-րդ դարերում հայկական գաղթօջախ եղած լինի: Ստորև տրվում է մի քանի օրինակ միայն:
Թ. 13բ.—Աբիոն, որ է աֆիոնն:
Ալմաս, ճուճար քարն է:
Թ. 14բ.—Խընձոր, որ է թուփահն:
Միս, որ է լահմ:
Լովիեաս, որ է լուպիեայ:
Թ. 15ա.—Մարգրիտ, որ է լուլու:
Քացախ, որ է խալ:
Սիսեռ, որ է հումզ:
Զուկ, որ է սամաք:
Ղալպ, որ է սիրտ:
Թ. 15բ.—Ստեպղին, որ է ճազար:
Ջուր, որ է մայ:
Վարդի ջուր, որ է մայլ վարտ:
Մեղր, որ է յասալ:
Անուխ, որ է նանա:
Թ. 16ա.—Սոխ, որ է պասալ:
Սեխ, որ է պատիխն:
Թ. 17ա.—Շարապ, լիմոնի:
Շարապ, վարդի:

(Շարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Բեյրութի Հայկական բարեսիրական կրթական միության վարչությանը 3
Կարդինալ Ժան Վիլլեբրանդոսի նամակը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին . . 5
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 7
Ա. Հ.—Սուրբ Կյուրեղ Հայրապետ Ալեքսանդրացի 9
Մահ պրոֆեսոր Արարատ Ղարիբյանի 18
ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ—Ց-րդ դարի մեր կին շարականագիրները . . 20
ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ—Էջմիածնի նվիրակությունը ԺԸ դարում 26
Հնդիկ մալաբար եկեղեցու միտրոպոլիտ Պաուլոս Մար Գրիգորիոսի այցելությունը Մայր Աթոռ 32
Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ—Քրիստոնյա արաբները և հայերը միջնադարում . . 34
ՇԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ—Հադրութի շրջանի եկեղեցական և պատմական հուշարձանները 40
ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ
Հինգ նոր պատասխանատու աշխատակիցներ ԵՀԽ-ում 51
Խորհրդակցություն «Ատվածաշնչի մատերիալիստական ընթերցման» շուրջ 51
ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարը մասնակցելու է Ավստրալիայի միացյալ եկեղեցու առաջին համաժողովին 52
Օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների կոնֆերանս Շամբեզիում . . 52
«Հավատո և կարգի» շարժման հիմնադրության 50-րդ տարեդարձը . . . 53
Հանդիպում քրիստոնյաների և մահմեդականների միջև 53
Էկումենիկ դաստիարակությունը որպես լրացուցիչ մաս կրոնական ուսուցման 54
Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի այցը Հնդկաստան . . 54
Էկումենիկ աղոթք Զագորսկում քրիստոնյաների միության համար . . . 55
Խաղաղության համակրոնական համագումարի նախապատրաստական կոմիտեի հանդիպումը Մոսկվայում 55
Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 56

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 22.3.1977 թ.: Ստորագրված է տպագրության 21.4.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 221:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.